

1793

232  
Φ - 95

| 896

2010

ՓՈՒՆՉ ՄԻ ԽԱՂԿԱՆՅ

(8)

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԻ ՄԱՐԴԱՄ

ՔԱՂԵԼՈՑ

Ի ՇԱՐԱԿԱՆՈՑԵ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐԱԿԹՈՒԹԻՒՆ

ՅՈՒԵԼԵԱԼ, ԲԱԶՄՈՒԹԵԱԿ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲՔ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԵ ԴԱԶԱՐ

1896

232

90-95

232  
Փ-95

Printed in Turkey

84

ՓՈՒՆՉ ՄԻ ԾԱՂԿԱՆՑ

25

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԻՆ ՄԱՐԻԱՄ

ՔԱՂԵԼՈՑ

Ի ՇԱՐԱԿԱՆՈՅԵ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱԾՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅԱԽԵԼԵԱԼ ԲԱԶՄՈՐԻՆԱԿ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲԲ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐ

1896

36665-н-б.

2017

19901-59



(1045)  
39

2004

12.04.1



Printed in Turkey



ՄԱՅՈՒՄ ԱՂԱԽԻՆԻ ԵՒ ՀԱՐՄՆ ԵՐԿՆԻՑ

ՄԱՐԻԱՄ

\*\*\*\*\*

### ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Անարատ մայր Տեառն եւ կոյս սուրբ.

Օրհնեալ ըլլաս որ ուզեցիր ինձ ազգել այս  
փոքրիկ աշխատութեանս ձեռք զարնելու:

### ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Քեզի չնորհուած բոլոր արտօնութեանց,  
եւ չնորհաց լիութեան, եւ անճառելի փա-  
ռաց՝ հիմն եւ կեդրոնն է այդ անհասանելի Աս-  
տուածամայրութեան արժանապատութիւ-  
նը, որով երանեն եւ երանեսցեն քեզ ամե-  
նայն ազգք. քանզի «ո՛վ կոյս, փառք քո՝  
ծնունդ քո»:

Ուստի կապուելիք փունջին այդ առաջին  
եւ փառաւոր ծաղիկը քեզ կը նուիրեմ Հա-  
յաստանեայց Եկեղեցւոյ երրակի ժամամուտ-  
ներովը:

Հառվմ, ՚ի տօնի Աշետեաց Ա. Աստուածածենին

1896

3. թ.

Ա. Աստուածածին անհարսնացեալ, ըդ-  
բանն անսկիզբն յլացար, եւ զԱսուածն  
անիմանալին ծնար, զանպարագրելին՝ի գիր-  
կը քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա  
վասն անձանց մերոց :

Բ. Աստուածածին զքեղ խոստովանեալ  
երկրպագէ Եկեղեցի ուղղափառաց. քանզի  
ուր քերովլբէքն բազմաշեալք եւ աթոռք հրա-  
նիւթք եւ վեցթեւեան սերովլբէքն նայել ոչ  
իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապակա-  
նումն ՚ի յարգանդի քում որպէս ազախին  
զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱսուածն բո-  
լորից զմարմնացեալն առ ՚ի քէն զանձառ  
զԲանն, ՚ի գրկութիւն աշխարհի եւ կեանք  
անձանց մերոց :

Գ. Աղաչեմք զքեղ սուրբ կոյս Մարիամ  
Աստուածածին, Բարձրելոյն զօրութեամբն  
հովանաւորեալ, եւ սուրբ Հոգւոյն եկաւորու-  
թեամբն լուսաւորեալ, որ զամենայն գոյու-  
թեանց զստեղծիչն յլացեալ ծնար անձառա-  
պէս, մարմնացելոյն առ ՚ի քէն բարեխօսեա  
կեցուցանել զանձինս մեր :

Ի բայել զժաղիկս Տիրամօրն ոչ սակաւ  
օգտեցաք եւս եւ ՚ի պատմութեանն վարուցի  
նորա հրատարակելոյ, ՚ի վենետիկ ՚ի Հ. Արք-  
ուենիոս վարդապետէ Գոռզգենեան ՚ի Մը-  
խիրարեան Ոշխուկ: — Խոկ զորս զնժայեանն  
ունանի այնու՝ զոր երգեաց Միրունին « Արար  
րադ իս մեծամեծս հզօրն եւ սուրբ է անուն  
նորա », աստղանշաց նշանակեմք՝ բոյկալ ՚ի  
բնենուրիշն իւնաստեոց :

\* Դուռն ընդ որ եմուտ  
բանն Աստուած:

\* Մորենի վառեալ որ ոչ  
այրէք:

\* Սուրբ Սրբոց:

\* Սրբութեամց սուրբ:

Տես ՚ի կարգին:

A decorative horizontal scrollwork border featuring a repeating pattern of stylized floral or scroll motifs, centered at the bottom of the page.

U

Ազատիչ յանցանաց նախամօրն : = Այսօր  
զավատիչն յանցանաց նախամօրն դկու-  
սութեանց մայրն փոխազրեաց Բանն Առ-  
տուած , յերկնայինսն դասելով յաստուա-  
ծակերտ խորանան եւ յանպատում 'ի  
կեանս . վասն որոյ հրճուղական ձայնիւ-  
քեզ երգէ եկեղեցի սուրբ զնոր զօրհնա-  
բանութիւն :

**Աթոռ Աստուծոյ Բանին :** Մաքուր աղաւնի  
եւ հարսն երկնից Մարիամ, տաճար եւ  
աթոռ Աստուծոյ Բանին, քեզ երանեն  
ամենայն աղինք :

Աթոռ փառաց յերկրի : == Որ ՚ի վերայ  
քերովբէից նստեալ հանգչիս Բանդ Աս-  
տուած, այսօր հրաշափառ պարզեւօք ցու-  
ցեր ծննդեամբ ՚ի յԱննայէ աթոռ փա-  
ռաց յերկը զսուրբն Մարիամ. օրհնեալ  
տէր Աստուած հարցն մերոց :

Ա.թոռ փրկութեան : == Ուրախ լեր աթոռ  
փրկութեան , յոյս հաստատութեան մարդ-  
կան , միջնորդ օրինաց եւ շնորհաց . օրհ-  
նութեամբ անդադար գոհութեամբ մե-  
ծացուցանեմք :

Ա.թոռ քերովլիշական : == Քերովլիշական  
ամեռ ցուցար Աստուածածին ; 'ի գիրկս  
բառնալով զԱստուածն ամենեցուն որ  
նատին 'ի քերովլիշս, առ նա միշտ բարե-  
խօսեա կեցուցանել զմեղ :

Աղախին եւ մայր կենաց, աղոյն ծնող Հօր  
միածնին, որ առ 'ի քէն մարմնով ընկեց  
զամբարտաւանն յաթոռոյ, երանեն ազդ  
եւ ագինք այսօր զծնեարդ 'ի Աննալէ:

Աղաւեմք զքեզ սուրբ Աստուածին, առ  
Քրիստոս բարեխօսեա փրկել զժողովուրդու  
իւր, զոր գնեաց արեամբն իւրով։

**Աղաւնի մաքուր :** Տես Աթոռ Աստուծոյ։ —  
Յօհ բաղդրածաւալ։

**Աղբիւր** անսպառ լուսոյն : == Զքեզ Աստուածածին աղբիւր անսպառ լուսոյն՝ որ լուսաւորէ զհաւատացեալս , միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք :

**Աղբիւր** եւ ծարաւեաց : = **Առ** գեղ ապա-  
ւինիմք Ամենասրբուհի . գերազոյն եւ հրա-  
շալի , եւ բաշխող բարութեանց , աղըիւր

Ես ծարաւեաց, եւ հանդիստ աշխատելոց,  
եւ եղեր վերընկալ աստուածային Բանին:  
Ազրիւր կենաց բղխեալ յնդեմայ սուրբ Սա-  
տուածածին, որով արբեցաւ երկիր ծա-  
րաւուտ Հոգւոյն իմաստիւք, տալ մեզ  
մաղթեա աղբիւրս արտասոււաց, մաքրել  
զմեզ 'ի մեղաց մերոց:

Ազրիւր կնքեալ: = Զքեզ մորենի անկէզ,  
լեառն վիմածին, գուռն փակեալ եւ աղ-  
թիւր կնքեալ, նախատեսացն գուշակեալ  
մայր եւ կոյս, հոգեւոր երգով զքեզ բա-  
րեանեմք եւ փառաւորեմք զմիածին քո  
զՊրդին:

Ազրիւր կնքեալ ջրոյն կենդանութեան: =  
Ուրախ լեր աղբիւր կնքեալ ջրոյն կինդա-  
նութեան, զոր ծարաւելոյ բնութեանս ե-  
տուր 'ի յարբումն, զքեզ օրհնութեամբ  
մեծացուցանեմք:

Ազրիւր յորդառատ: Տես Լեառն վիմածին:  
Ամենագովելի եւ քան զերկինս բարձրագոյն,  
որ զանհասանելի զՏէրն յորովայնի քում  
կրեցեր, եւ ցնծութիւն աշխարհի ծնար.  
վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մե-  
ծացուցանեմք:

Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս՝ որ զան-  
բաւելի զԲանն անճառաբար յղացար, եւ

զմարմնացեալն Աստուած ծնանելով 'ի  
քէն. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ  
մեծացուցանեմք:

Ամենասուրբ ծնող: = Այսօր տեսեալ հրա-  
կերպ դասուք վայր իջեալ յերկնից զՊր-  
դին միածին՝ արփիափայլ հրաշալի փա-  
ռոք, գերապայծառ մաքրեալ հոգւոյն յա-  
ւանդումն ամենասուրբ ծնողին յւրոյ, եւ  
համաձայնեալք անմարմնոյն՝ օրհնէին զա-  
մենօրհնեալ Սրբուհին:

Ամենասուրբ կոյս: = Ուրախ լեր բերկրեալ  
ամենասուրբ կոյս՝ որ ծնար աշխարհի  
զարդարութեան արեգակն, որ լուսաւո-  
րեաց զազգս որդւոց մարդկան:

Ամենասուրբ հոգի: = Այսօր ցնծան դասք  
առաքելոցն տեսանելով զՏէրն տերանց խո-  
նարհեալ յաւանդումն ամենասուրբ հոգ-  
ւոյ մօր եւ կուսին:

Ամենասրբուհի: Տես Ազրիւր եռ ծարաւեաց:

Ամենօրհնեալ աստուածամայր Սարփամ, քե-  
րովէական աթոռ արարչին մերոյ տնօ-  
րէնութեան, զոր երանեն ամենայն ազինք  
հանապազ:

Ամենօրհնեալդ 'ի կանայս: = Այսօր ժո-  
ղովեալ սրբոցն 'ի միասին երանելի ա-  
ռաքեալքն եւ սուրբ կուսանք, չահազգեա-

տուք պայծառացեալ լուցանէին զլապ-  
տերս իւրեանց, եւ միաձայնեալ ասէին,  
օրհնեալ ես ամէնօրինեալը՝ ի կամայս :  
Ամէնօրհնեալ Սրբուհի եւ միշտ կոյս Աս-  
տուածածին Սարիամ, բարեխօսեա առ  
Տէր վասն իմ մեղաւորիս :

Ամպ թեթեւ := Եսայիսս գքեղ թեթեւ ամպ  
ետես եւ Հայր յամպոյն զքո զՄրդին իւր  
դաւաննեաց, նմա յաւէժ յանձն արա զան-  
ձինս մեր :

Ամպ թեթեւ := Ուրախութիւն երկնի, եւ  
երկրի ամպ թեթեւ ցօղեալ՝ ի մեզ զար-  
դարութիւն. բարեբանեմք զբղխեալն՝ ի  
քէն մարմնով յարմատոյն Յեսսեայ գաւա-  
զան ծաղկեալ :

Ամպ թեթեւ, գեղմն իմանալի := Ուրախ եր  
ամպ թեթեւ, գեղմն իմանալի, որ 'ի բա-  
նական երկիր հեղեր զանձրեւ կենաց, ար-  
դիւնս ընդ գործոյ հաւատոյ պտղաբե-  
րեալ :

Ամպ թեթեւ եւ լուսաւոր որ զանձրեւն կե-  
նաց 'ի քեզ հեղեալ՝ ի յերկնային ծովէն,  
զոր հոսեցեր՝ ի յերկիր ծարաւուտ, սովո-  
րէական ձայնիւ զքեղ բարեբանեմք եւ  
հոգեւոր երգով մեծացուցանեմք :

Ամպ թեթեւ լուսածին := Ընտրեալ յառաջ

քան զհիմունս՝ ի սկզբանէ աշխարհի, տու-  
մար աննառ անքնին եւ ամպ թեթեւ  
լուսածին, բարեխօսեա միածնին Աստուա-  
ծածին մայր Բանին :

Ամպ թեթեւ լուսաւոր, անընդունակ խոնա-  
ւութեան, որ զցողն կենաց՝ ի ցամաքեալ  
բնութիւնս ցօղեր, օրհնութեամբ զքեղ  
բարեբանեալ մեծացուցանեմք :

Ամպ թեթեւ յերկրային ցանկութեանց սուրբ  
կոյս եւ վառարան աստուածային բոցոյն,  
որ զցողն հայրաբուղիս անձրեւեցեր՝ ի  
բանական երկիր, որով բնութեանս բու-  
սան արդարութեան սուրբ բոյսք, վասն  
որոյ օրհնաբանեմք զքեղ յաւուր քո ծնըն-  
դեան :

Ամպ լուսածին := Ուրախացան զօրք երկնից  
'ի վերուստ, քանդի ցօղն անապական՝ ի  
քէն հեղեալ միշտ կոյս եւ մայր Բանին  
տնտեսութեան լուսածին ամպ, ծագելով  
'ի մեզ զարդարութեան արեգակն :

Ամպ լուսաւոր := Աստուածածին ամպ լու-  
սաւոր՝ որ զցողն կենաց հեղեր յերկիր  
բանաւոր, և զնախամօրն շիջուցեր պար-  
տեացն զհուր, անդադար ձայնիւ զքեղ  
բարեբանեմք, եւ հոգեւոր երգով մեծա-  
ցուցանեմք :

**Ամպ լուսեղէն :** = Զքեզ պայծառ երկինք եւ  
ամպ լուսեղէն, ծնող արարչին եւ մորենի  
անկիզելի, մեծացուցանեմք :

**Ամպ հովանաւոր :** = Աստուածածին սիւն  
լուսոյ ամպ հովանաւոր, եւ բնակարան  
Բանին որ բանիւ հովուէր զիսրայէլ, բա-  
րեխօսեա նմա վասն անձանց մերոց :  
Տես եւ Յօղ քաղցրածաւալ :

**Ամպ հովանի :** = Արւն լուսոյ եւ ամպ հո-  
վանի սուրբ կոյս՝ որ ցօղեցեր 'ի մեզ ըզ-  
ցօղն երկնային, զքեզ բարեբանեմք Աս-  
տուածածին կոյս :

**Այգի վայելուչ :** Տես Լեառն վիմածիլ :

**Այսօր 'ի քեզ լցեալ Ամովսածնին բարբառ  
որ 'ի փրկութիւն հասարակաց տուեալ  
նշան բնութեան ազգի մարդկան, ահա  
կոյս յլասոցի եւ ծնցի որդի զընդ մեզ  
յայտնեալն Աստուած, առ որ մաղթեմք  
բարեխօսել վասն մեր անլոելի ձայնիւ :**

**Անապական անարատ կոյս Աստուածամայր :**  
= Այսօր տօնակից հոգեղինաց գոլով  
հարսնացեալ եկեղեցի սուրբ, տօնէ ու-  
րախութեամբ զյիշատակ Անապական ա-  
նարատ կուսի Աստուածամօրն. վասն  
որոյ սրովբէական ձայնիւ քեզ երգեմք,  
սրբութեանց սուրբ, զմիշտ փառարանու-  
թիւն :

**Անապական ծնող :** = Աղաչամնօք Աստուած  
ծածնին անապական քում ծնողին զի-  
մանալի աչս սրտից մերոց բացցես ողոր-  
մութեամբ հայել 'ի լոյս քո Քրիստոս :

**Անապական կոյս :** = Զանապական կոյսն Մա-  
րիամ Աստուածածին խոստովանի սուրբ  
եկեղեցի, ուստի տուաւ հայն անմահու-  
թեան եւ բաժակ մեզ ուրախարար. տուք  
օրհնութիւնք նմա հոգեւոր երգով :

**Անապական տաճար :** = Աստուածածին սուրբ  
կոյս՝ անապական տաճար, անպարագիծ  
էին բոլորից բնութեանց լայնածաւալ տե-  
ղի, այսօր ընդ բերկական զուարթնոյն  
կրեցեր աւետեաց զՏէրն տերանց 'ի քեզ,  
առ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր  
անլոելի ձայնիւ :

**Անապական տաճար եւ առագաստ լուսոյ,**  
որ 'ի քեզ վեսայացեալ Բանն կենաց  
բնակեցաւ. զքեզ օրհնեմք միշտ որ ար-  
ժանիդ ես, մեծացուցանեմք :

**Անապական տաճար եւ մորենի անկիզելի՝ որ  
զանշէլ հուր Աստուածութեանն 'ի քեզ  
տարեալ կրեցեր, որով բնութեանս կրկեալ  
շիջաւ կրից բոց, վասն որոյ ամենեքեան  
զքեզ միշտ մեծացուցանեմք :**  
= **Անապական :** Տես եւ Գերազոյն :

**Անարատ :** == Քաղաքավարեալ 'ի մարմիկ  
անարատ վարուք այսօր յառաքելոցն ամ-  
փոփեալ՝ վերին ակնարկութեամբն վերա-  
փոխեցար յարքայութիւն Որդւոյ քո եւ  
Աստուծոյ մերոյ, բարեխօս խոստովանո-  
ղաց՝ զքեզ մեծացուցանեմք :

**Անարատ Աստուածածին :** == Զանարատն  
օրհնեսցուք զԱստուածածինն որ կոյս  
մնաց յետ ծննդեան, եւ տարաւ յորո-  
վայնի զանտանելին ամենեցուն, զհամա-  
բնակիցն Հօր եւ ամենասուրբ Հոգեւոյն :

**Անարատ եւ անխախտելի կուսութիւն :** ==  
Անկէզ մորենի եւ տաճար ընդհանուր լու-  
սոյն, անարատ եւ անխախտելի կուսու-  
թիւն. մայր եւ աղախին՝ մեծացուցանեմք :

**Անարատ կոյս :** == Աստուածածին անարատ  
կոյս՝ առ քեզ ապակինիմք, բարեխօսեա  
առ Քրիստոս վասն անձանց մերոց :

**Անարատ կոյս Աստուածածին Մարիամ սըր-  
բուհի եւ մայր Քրիստոսի, յարգանդի տա-  
րար զանտանելին ամենեցուն, օրհնու-  
թեամբ զքեզ Աստուածածին մեծացու-  
ցանեմք :**

**Անարատ մայր Տեառն եւ կոյս Մարիամ :**  
== Աստուածածին անարատ մայր Տեառն  
եւ կոյս Մարիամ՝ որ եղեր ընդունող Բա-

նին Աստուծոյ, բարեխօսեա առ Տէր վասն  
մերոյ փրկութեան :

**Անարատ Սրբուհի :** Տես համեղամաշակ :  
**Անարատ տաճար անվայրափակ Բանին Աս-  
տուծոյ Մարիամ սուրբ կոյս, բարեխօսեա  
առ Տէր վասն մերոյ փրկութեան :**

**Անարատ տաճար Աստուծոյ Բանին, որ զնա-  
խամօրն Եւայի զանէծսն բարձեր անճա-  
ռելի ծննդեամբն 'ի քէն, առ նա միշտ  
բարեխօսեա վասն անձանց մերոց :**

**Անարատ տաճար բնակարան անքաւ Բանին  
Աստուծոյ Մարիամ սուրբ կոյս, զքեզ եւ  
զծնեալն 'ի քէն մեծացուցանեմք :**

**Անարատ տաճար տնօրէնութեան կոչեցար  
Հոգեւոյն Սրբոյ միշտ կոյս, զքեզ մեծա-  
ցուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կանայս :**

**Անբժիծ կոյս :** == Մաքուր եւ անբխճ կոյս յետ  
ծննդեան, որ մարմնով ծնար զարձակողն  
'ի կապից մահու, բարեխօս լեր վասն ան-  
ձանց մերոց փրկել 'ի սպառնալեաց գե-  
հենոյն :

**Անբոցակէզ մորենի :** == Որ զհորն Աստուած  
յորովայնի քում կրեցեր անբոցակէզ մո-  
րենի, դառնաճաշակ պտղոյն քաղցրացու-  
ցիչ, զքեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն  
անձանց մերոց :

Անդաստան մաքուր՝ ի փշոց մեղաց : Տես թա-  
Յաւոր երկիր :

Անդաստապարտ շառաւիդ : Տես Անթայուամ  
ծաղիկ :

Անընդժունակ խոնաւութեան : Տես Ամսկ թեթեւ  
լուսաւոր :

Անթառամ ծաղիկ անդաստապարտ շառաւիդ  
վերաբուսեալ յարմատոյն Յեսուեայ, զքեղ  
Եսայիաս կանխաւ վերագոշեաց եօթնար-  
փին շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ,  
Աստուածածին եւ կոյս զքեղ մեծացու-  
ցանեմք : Տես եւ ծաղիկ անթառամ :

Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս,  
որ զանտանելին յէից ՚ի գիրկոս քո բար-  
ձեր, զքեղ բարեբանեմք Աստուածածին  
կոյս :

Անխախտելի կուսութիւն : = Դուռն վակեալ  
զքեղ Եղեկիէլ յառաջագոյն ծանոյց կոյս  
անարատ՝ ընդ որ եմուտ անտեսն յէից  
Բանն անմարմին որ ՚ի Հօրէ եւ ել մար-  
մառ՝ անխախտելի թնալով կուսութեանդ.  
Հոգեւոր երգով զքեղ միշտ մեծացուցա-  
նեմք :

Անկանիմք առաջի քո Աստուածածին, եւ ա-  
զաշեմք զանարատ զկոյսդ : Բարեխօսեա  
վասն անձանց մերոց եւ ազաշեա զմիա-

1990 / 65 - 1

( 39 )

ծին Որդիր : Փրկել զմեղ ՚ի փորձութենէ  
եւ յամենայն վունդից մերոց :

Անկէզ մորենի եւ սրովքէ հողեղէն սուրբ կոյս,  
քանզի պտուղն կենաց ՚ի քէն տուաւ մեղ,  
զքեղ բարեբանեմք Աստուածածին կոյս :

Անկիզելի մորենի : Տես Անթապակամ տաճար եւ  
մորենի:

Անհամեմատդ ՚ի կանայս : = Ուրախացիր  
Սրբուհի եւ միշտ կոյս, քանզի որ ՚ի քէն  
մարմնացաւ՝ զգժոխս աւերեաց . սուրբ եւ  
անհամեմատդ ՚ի կանայս, բարեխօսեա  
առ Տէր վասն անձանց մերոց :

Անհաս տնօրէնութեան մայր : Տես Ամձաւոր  
տաճար :

Անհարսնացեալ մայր : = Ուրախ լեր գուա-  
մըր լուսոյ մայր անհարսնացեալ, քանզի  
յլացելոյն ՚ի քէն՝ համախմբեալ վերնոցն  
որդիք Սիովլի, երգեն զփառս ՚ի բարձուն :

Անհարսնացեալ մայր : = Այսօր զնախամօրն  
երկանց բարձողն կուսական ծննդեամբ  
զմնհարսնացեալ մայրն Միածինն իշեալ  
վառօք փոխազրեաց յիմանալի եւ յան-  
պատում զերագոյն բնութիւնս, վասն ո-  
րոյ սրովքէական ձայնիւ քեղ երգեմք սըր-  
բութեանց սուրբ զմիշտ վառաբանու-  
թիւն :



Անհարսնացեալ Մարիամ: == Աստուածածին  
սուրբ կոյս անհարմնացեալ Մարիամ՝ որ  
օրհնեալդ ես ՚ի կանայս, զքեղ օրհնեմք  
միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք:  
Տես եւ Խնդր:

Անհարսնացեալ Սրբուհի: == Աստուածածին  
անհարմնացեալ Սրբուհի զքեղ աղաչեմք  
անդադար ձայնիւ, որ զէակ Բանն Հօր ՚ի  
քեղ կրեցեր եւ ծնար անճառապէս, առ  
նա միշտ բարեխօսեա վասն անճանց մե-  
րոց:

Անձնաւոր տաճար Աստուծոյ Բանին: == Զան-  
հաս տնօրինութեան մայր, եւ զանձնա-  
ւոր տաճար Աստուծոյ Բանին օրհնու-  
թեամբ մեծացուցանեմք:

Անձնեւեցեր զցօղն հայրաբուղխ ՚ի բանական  
երկիր: Տես Ցոլ:

Անձառելի լուսոյ մայր: == Զանճառելի լու-  
սոյ մայր, եւ զբնակարան անսկզբնակից  
Որդւոյն օրհնութեամբ մեծացուցանեմք:

Անսկզբնական Բանին Հօր բնակարան, տա-  
ճար եւ առագաստ, տեղի անտանելի լու-  
սոյն, զքեղ մեծացուցանեմք արժանապէս  
երգով աստուածամայր եւ կոյս:

Անսկիզբն Բանն հաճեցաւ առնով մարդեղու-  
թեամբ սկիզբն ՚ի կուսէդ Քրիստոս Աս-  
տուած թագաւորն յաւիտենից:

Անսկիզբն Բանն յանակզբնական ՚ի Հօրէ, եւ  
սկզբնաւորեալ ՚ի կուսէն մարմնոյ զգեց-  
մամբ, բովանդակելով յորովայնի եւ ընդ  
Հօր գոլով, եւ սահմանեալ ժամանակաւ  
ծնեալ լինի Աստուած եւ մարդ:

Անտանելի Բանին բարձող: == Այսօր զան-  
տանելի Բանիդ բարձողն զքերովը հո-  
գեղէն բարձրացուցեր ՚ի ստորնայնոց գե-  
րակայիցն կայան:

Անտանելին ՚ի համայնփց՝ բովանդակիչ բը-  
նութեանց բովորից, պարագրի այսօր մար-  
դասիրապէս յորովայնի անարատ կուսին,  
զոր առ Տէր ունիմք բարեխօս վասն ան-  
ձանց մերոց:

Անտանելոյն տաղաւար բարձող էիցս բար-  
ձողին, որ ծնար զԱստուած մարմնով զան-  
մարմնաբար ծնունդն Հօր, բարեխօսեա  
վասն մեր Աստուածածին Մարիամ:

Աշտանակ: == Ուրախ լեր սիւն հրեղէն,  
լուսոյն աշտանակ:  
== Ուրախ լեր Մարիամ նորատունկ բու-  
րաստան, երկնաբերձ աշտանակ, ձոյլ  
ուկի եւ ճեմարան Բանին Աստուծոյ:

Ապաւէն: Տես Աստուածածիմ ապաւէն:  
Ապաւէնիմք ՚ի քո բարեխօսութիւնդ Աստուա-  
ծածին Մարիամ, մայր Տեաւն եւ կոյս

սուրբ, հալրան երկնից եւ դուռն կնքեալ՝  
զոր մարգարէն ետես։  
**Ապրեցուցիչ Աստուածածին։** = Որ տարար  
զբանն Աստուած յարգանդի քում եւ  
ծնար զնա մարմնով ապրեցուցիչ Աստուա-  
ծածին, բարեխօսեա կեցուցանել զմեզ։  
**Ապրեցուցիչ տապանակ։** Տես ծուպամակ ա-  
պլիեցուցիչ։  
**Առագաստ անձառելոյ բնակողին։** = Զքեղ  
մայր կուսութեան եւ յղութեան լուսոյ,  
եւ առագաստ անճառելոյ բնակողին 'ի  
քեզ փեսայցեալ Բանին, անդադար եր-  
գով մեծացուցանեմք։  
**Առագաստ Աստուծոյ Բանին։** = Զքեղ ա-  
մէնօրհնեալ Աստուածածին, մայրդ լուսոյ  
եւ առագաստ Աստուծոյ Բանին մեծա-  
ցուցանեմք։  
**Առագաստ արարչին։** = Միայն օրհնեալ Սըր-  
բուհիդ 'ի կանայս, բնակարան եւ առա-  
գաստ արարջն՝ բարեխօսեա առ Տէր  
վասն անձանց մերոց՝ զի փրկեսցէ զմեզ 'ի  
սպառնալեաց գեհենոյն։  
**Առագաստ բնակութեան Բանին։** = Բանին  
Հօր մարմնարան եւ առագաստ բնակու-  
թեան, որ կաթամբ կուսական կերակրե-  
ցեր զէակն Բան, բարեխօսեա Միածնին  
Աստուածածին մայր Բանին։

**Առագաստ լուսոյ։** Տես Անապական տանար։  
**Առագաստ հրափայլ ծագմամբ։** Տես Խորհուրդ  
կենաց։  
**Առագաստ։** = Արարողին. Երկնի եւ Երկրի  
եղեր տաճար եւ առագաստ, որ զննչե-  
ցեալն մեր հրեղէն նորոգէ, զքեզ մե-  
ծացուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կա-  
նայս։  
**Առագաստ փեսայցեալ Բանին։** Տես Առա-  
գաստ աշնառելոյ բնակուլին։  
**Առաւոտ խաղաղութեան եւ արուսեակ զը-  
ւարթարար՝ այսօր Մարիամ Սրբուհին 'ի  
փառ քո Քրիստոս ծագեաց մեզ լոյս  
յորդոցն օրինաց, անդադար երգով սո-  
քօք զքեզ միշտ մեծացուցանեմք։  
**Առ ծնեալն 'ի քէն միշտ բարեխօսեա ան-  
դադար հայցմամբ՝ շնորհել զթողութիւն  
մեր ննջեցելոցն։**  
**Առ քեզ ապաւինիմք Ամենասրբուհի։** Տես  
Աղրիւր ես ծարսուեաց։  
**Առ քեզ ապաւինիմք խորան եւ տաճար Աս-  
տուծոյ Բանին Մարիամ մայր եւ կոյս,  
բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց  
մերոց։  
**Առ քեզ ապաւինիմք սուրբ Աստուածածին,**  
բարեխօսեա անդադար առ Որդիդ քո եւ****

Աստուած մեր՝ փրկել զմեղ՝ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց :

Աստուածածին ամպ լուսաւոր՝ որ զցօղն կենաց հեղեր յերկիր բանաւոր, եւ զնախամօրն շիջուցեր պարտեացն դհուր, անդադար ձայնիւ զքեղ բարեբանեմք, եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք :

Աստուածածին անարատ կոյս առ քեղ ապակինիմք, բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց :

Աստուածածին անարատ մայր Տեառն եւ կոյս Մարիամ՝ որ եղեր ընդունող Բանին Աստուծոյ, բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան :

Աստուածածին անարատ մայր Տեառն եւ կոյս սուրբ բարեխօսեա առ Որդիի քո միածին, զի փրկեսցէ զմեղ՝ ի սպառնալեաց գեհենոյն, եւ պարգեւեսցէ մեղ զերկնից արքայութիւնն, եւ հանգուսցէ զհողիս մեր ննջեցելոցն : Օգնեա եւ ինձ Քրիստոս այսօր յառաջին ճանապարհին եւ՝ ի միւս անգամ գալստեանդ քո օգնեա ինձ :

Աստուածածին անհարսնացեալ զԲանն անըսկիզբն յդացար, եւ զԱստուածն անիմանալին ծնար, զանսպարազրելին՝ ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց :

Աստուածածին անհարսնացեալ յերկրէ երկնից հարսն ընծայեալ, յորժամ բազմիս լուսոյ նման քո Միածնիդ յաջակողմեան, յայնժամ մաղթեա ընդ մեր զնոյն՝ փրկել զմեղ յահեղ բոցոյն, համադասիլ ընդ արդարոցն երգել զփառս ընդ երկնայնոցն :

Աստուածածին անհարսնացեալ Սրբուհի զքեղ աղաչեմք անդադար ձայնիւ, որ զէակ Բանն Հօր՝ ի քեղ կրեցեր եւ ծնար անձառապէս, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց :

Աստուածածին ապաւէն մեր եւ յոյս, բարեխօսեա առ Որդիի քո միածին՝ զի փրկեսցէ զմեղ՝ ի հրոյն տանջանաց, եւ պարգեւեսցէ մեղ զերկնից արքայութիւնն :

Աստուածածին գերագոյն երկնից ցուցար խորան եւ առագաստ, քանզի ծագեալ լոյսն՝ ի Հօրէ՝ բնութեանց էից անտանելին . պարագրեցաւ՝ ի քում յորովայնի . հոգեւոր երգով զքեղ միշտ մեծացուցանեմք :

Աստուածածին գերագոյն քերովքէից, Բանին բարձող որ զամենայն կրէ զօրութեամբ, բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան :

Աստուածածին գու ես յոյս եւ ապաւէն խոստովանողացս զքեղ, Որդւոյ քո եւ Աստուծոյ բարեխօսեա կեցուցանել զմեղ :

Աստուածածին երկնային դուռն՝ աստուածային ձայնին աւետարանէր հրեշտակն՝  
Ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։  
Աստուածածին եւ կոյս։ Տես Փրկող։  
Աստուածածին եւ Արբուչի՝ որ գԲանն Աստուած անսերմն յութեամբ յարգանդի կրեցեր, անդադար երգով մեծացուցանեմք։  
Աստուածածին գքեզ խոստովանեալ երկրպագէ Եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովլրէքն բազմաշեաբք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովլրէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականումն 'ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն զանձառ գԲանն 'ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց։  
Աստուածածին խորան լուսոյ անվայրափակարփւոյն կենաց, որ եղեր արեւելք արեւգականն արդարութեան, եւ նստելոցս 'ի խաւարի լոյս ծագեցեր, վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։  
Աստուածածին կոյս։ Բանն առաքեալ 'ի Հօրէ որ վասն մեր մարմնացաւ եւ ցընծութիւն աշխարհի յայտնեցաւ, զքեզ

բարեբանեմք Աստուածածին կոյս։ Զի որում ոչն հանդուրմէին բոցանշոյլ սերովլրէքն, նա բնակեցաւ 'ի քում յորովայնի, զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Յորմէ սարսեալ դողային փայլակնացայտ 'ի լուսոյն, 'ի գիրկս քո զնաընկալար, զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։  
Աստուածածին մայր Բանին։ Բարեխօսեա Միածնին Աստուածածին մայր Բանին։  
Աստուածածին մայր եւ կոյս, ծագող արեւգականն արդարութեան որ լուսաւորեացն զմեզ, հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք եւ փառաւորեմք զմիածին քո զնրդին։  
Աստուածածին մայր լուսոյ, արեգականն արդարութեան արեւելք, որ 'ի խաւար աշխարհի ծագեցեր զլոյսն գերազանց, օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։  
Աստուածածին մայր լուսոյ սուրբ կոյս, լուսեղէն տաճար. որում երկինք չէին բաւական առ 'ի բնակութիւն՝ 'ի քէն մարմնացաւ։  
Աստուածածին յոյս եւ ապաւէն։ Տես Աստուածածին մու ես յոյս եւ ապաւէն։  
Աստուածածին պայծառ քան զերկինս, որ 'ի

մեզ ծագեցեր զլոյսն մեծ եւ գերազանց՝  
որով խաւարն անդիտութեան հալածեցաւ,  
սրովէշական ձայնիւ զքեզ բարերանեմք եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք :

**Աստուածածին սիւն լուսոյ ամպ հովանաւոր,**  
եւ բնակարան Բանին՝ որ բանիւ հովուէր  
զիսրայէլ, բարեխօսեա նմա վասն անձանց մերոց :

**Աստուածածին սուրբ կոյս, անապական տաճար,**  
անապարագիծ Եին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի . այսօր ընդ բերկրական զուարթնոյն կրեցեր աւետեաց զծէրն տերանց 'ի քեզ . առ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլոելի ձայնիւ :  
Յիմանալի վտակաց տանն Աստուծոյ հոմանց, վիճակեալդ տեսանողացն ձայնի՝  
արբմամբ զմայլեցար . այսօր զանթառամն ծաղկեցար զժաղիկ՝ 'ի ժամու ապօվլ զպըտուզն, առ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլոելի ձայնիւ :

**Աստուածածին սուրբ կոյս, անհարսնացեալ Մարիամ,**  
որ օրհնեալդ ես 'ի կանայս, զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք :

**Աստուածածին ստաճար լուսոյ, որ մարմնով**

պարագրեալ անհառաբար ծնար զբանն Աստուած, զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք :

**Աստուածածին տիրամայր :** § Ես Վեհագոյն սերովլէից :

**Աստուածամայր :** == Որ յանմարմնոց զինուորութեանց եւ 'ի դասուց հոգեղինաց վերհամբարձար այսօր Աստուածամայր . ուստի եւ դասք հողեղինացս փառաբանեմք զծագող իմանալի լուսոյն զմիշտ Կոյսն :  
== Այսօր հրաշափառ կոչմամբ Հոգւոյն ժողովեալ սրբոց առաքելոցն եւ իմաստուն սուրբ կուսանացն, պայծառացեալք իմաստութեամբ 'ի յերկնային փոխումն Աստուածամօրն, եւ համաձայնեալք անմարմնոցն օրհնէին զամենօրհնեալ Սրբուհին :

== Այսօր ընդ վերին զուարթնոցն երկնից, որք վայր ինեալ ընդ Միածնին 'ի փոխումն Աստուածամօրն երգէին, օրհնեցէք զշայրն երկնաւոր, բարձր արարէք գնա յաւիտեան :

**Աստուածամայր եւ կոյս :** § Ես Ամսկզբակամ թանիմ չօր բնակարամ :

**Աստուածամայր կոյս :** == Այսօր վերամբարձեալ զմաքրական մարմինն Աստուածա-

մօր կուսին անմարմին զուարթնոցն, ամշ-  
փոփեալ 'ի տեղի գերակայիցն յերեւելի  
զգայութեանց' անձառիցն առնել հա-  
դորդս, վասն որոյ հրճուղական ձայնիւ  
քեզ երգէ եկեղեցի սուրբ զնոր զօրհնա-  
բանութիւն :

**Աստուածատունկ Եղեմ:** Տես Պարտէզ փա-  
կեալ :

**Աստուածատունկ խնկարեր ծառ յանուշահոտ**  
բուրաստանէն՝ որ 'ի գնացս Հոգւոյն վտա-  
կաց տնկեցար, եւ զանմահութեան պտուղն  
'ի ժամու ետուր մեզ, վասն որոյ ամե-  
նեքեան գքեզ միշտ մեծացուցանեմք :

**Աստուածորդւոյ մայր:** = Տօնելով զյիշա-  
տակ կուսի Աստուածորդւոյ մօր՝ հրճուին  
հրեշտակը 'ի յերկինս եւ ցնծան դասք  
առաքելոց եւ մարգարէից ընդ կուսական  
տօնս, ողորմեա մեզ Աստուած :

**Արն զոր ծանեաւ Գեղէովն:** = Զքեզ երկ-  
նային դուռն զոր ետես Եղեկիէլ, եւ ասմն  
զոր ծանեաւ Գեղէովն, սերովիէ հողե-  
ղէն՝ վեհագոյն քերովիրէից, օրհնութեամբ  
գքեզ Աստուածին մեծացուցանեմք :

**Ալարողին երկնի եւ երկրի եղեր տաճար եւ**  
առագաստ : Տես Առաջաստ :

**Արբուցեր որպէս մայր ստացողին գքեզ զկու-  
սական քո սուրբ զկաթն :**

= Յորմէ զարհուրեալ գողային դասք  
վերին զուարթնոցն, տղայապէս առըն-  
կալեալ բարձէր 'ի գիրկս, եւ արբուցեր  
որպէս մայր ստացողին զքեզ զկուսական  
քո սուրբ զկաթն, զքեզ մեծացուցանեմք  
արժանապէս երգով աստուածամայր եւ  
կոյս :

**Արգանդ կուսին ժուժկալեալ ընդունել ըզ-**  
գանձգ երկնային : = Տես ժուժկալեալ :  
= Անբաւելին երկնի եւ երկրի 'ի կուսա-  
կան արգանդէ մեզ կեանք յայտնեցաւ,  
Աստուած այցելու մարդկան : Տես եւ  
կոյս սուրբ :

= Աներեւոյթ փառացն Հօր նկարագիր  
անեղապէս 'ի ծառայական խոնարհի  
պատկեր 'ի յարգանդի Հոգւով մաքրե-  
լոյ, զոր առ Տէր ունիմք բարեխօս վասն  
անձանց մերոց :

= Եկայք փրկեսլք կենարար իջմամբ  
Բանին Հօր 'ի յարգանդ կուսին՝ ընդ  
երկնայնոց դասուցն երգով զՑէր օրհնե-  
ցէք, բարձր արարէք զնա յաւիտեան :

= Որ էրն 'ի սկզբանէ առ Աստուած եւ  
Աստուած Բանն, կերպարան Անեղին եւ  
համագոյ սուրբ Հոգւոյն, 'ի վերջին ա-  
ւուրս ծանուցեալ մարմնանալ յանձն առ-

նու 'ի կուսական յարգանդէ վասն փրկութեան ազգի մարդկան։ — Յառաջ քան զյալիտեանս Որդի նախայւիտեան՝ այսօր յերկրի երեւեալ Աստուած եւ մարդկատրեալ, խանձարրովք պատի եղանի եւ գնի յանբանից մսուր՝ վասն փրկութեան ազգի մարդկան։

== Որ 'ի ծոցոյ Հօր Բանդ Աստուած անըսկիզբն՝ յարգանդի կուսին բնակիլ յանձն առեր, զքեղ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։

== Որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ բնակիլ յարգանդի կուսին, Աստուած հարցն մերոց։ — Որ գթացար յերկրը եւ ծնար անախտ՝ ազատելով զախտի ծնունդս, Աստուած հարցն մերոց։ — Բարեբանեմք զէակիցդ Հօր եւ Հոգւոյն անդադար հոգեւոր երգով, Աստուած հարցն մերոց։

== Որ յարգանդի քում անապականարար բնակիցաւ Քրիստոս Աստուած եւ փրկիչ անձանց մերոց, մեծացուցանեմք։

== Որում ոչ բաւեն երկինք ընդունել զանբաւելի զբնութիւնդ՝ յարգանդի կուսին ընակեցար, ծնար անձառապէս, Աստուած հարցն մերոց։

== Պատկերակից եղեր հողեղէն բնութեանս, տնօրինեցար յարգանդի կուսին Բանդ Աստուած, զմերս վերանորոգել պատկեր։

== Տնօրինեցաւ յարգանդի կուսին իսկակից Հօր եւ սուրբ Հոգւոյն Բանն առաքեալ 'ի Հօրէ յաղագս նախաստենծ մարդոյն՝ բառնալով զյանցանս. Ժողովուրդք օրհնեցէք զառաքեալն 'ի Հօրէ զԱստուած հարցն մերոց։

Արդ ազաշեա մայր Աստուածոյ զծնեալն 'ի քէն վասն մեր, զի ընդ նմին պահելով սուրբ յարութեամբ նորա նորոգեսցուք, առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ։

Արդ խնդրեմք 'ի քէն անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց առ Որդին քո միածին փրկել զմեզ 'ի փորձութենէ եւ յամենայն վասնդից մերոց։

Արեւելք արեգականն արդարութեան։ == Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ 'ի քո գիրկս, եւ արեգականն արդարութեամս եղեր արեւելք, զքեղ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Տես եւ Աստուածածիմ խորան լուսոյ. — Մայր լուսոյ. — Տեղի։

Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին,

զանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր  
յերկրորդին. բարեխօսեա Միածնին Առ-  
տուածածին մայր Բանին։  
**Արեւելք իմանալի:** Տես Դրավստ ասսուածա-  
յին։

**Արմատ տնկոյն անմահութեան:** = Ի յա-  
մուլ երկրէ այսօր բուսաւ մեզ բարերեր  
բոյսն բարի, շուշան հովտաց ծաղկին  
դաշտաց միամայրն Մարիամ արմատ  
տնկոյն անմահութեան, աղաչանօք սոցա-  
խնայեա ՚ի մեզ։

**Արուսեակ գուարթարար:** Տես Առաւոտ խա-  
ղաղութեան։

## ❖

**Բաղձալի:** = Խիւծեալ բամից դասուց սրբոց՝  
զըզծումն եղբօրն վճարեալ, բացեալ զաս-  
պանն ամենօր չնեալ եւ զբաղձալին իւր  
ոչ գտեալ, քանզի եղեւ վերափոխեալ ՚ի  
փառս անձառ նախ պատրաստեալ։

**Բանալի:** = Փափկութեան զրախախին բա-  
ցող բանալի, Քրիստոսի բարձող, նմանող  
երկնից, սափոր ոսկեղէն լի մանանայիւ,

գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ,  
տաճար լուսոյ մայր, առ ծնեալն ՚ի քէն  
միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ  
շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն։  
**Բանաւոր բարունակ համեղաճաշակ պտղոյն։**  
Տես Համեղաճաշակ։

**Բանաւոր երկիր տիրուհի** եւ անդաստան մա-  
քուր ՚ի վշոց մեղաց, որ զբոյն երկնային  
առանց սերման ծնար, որով զկենացն  
ետուր զհաց սովեալ բնութեանս, վասն  
որոյ օրէնաբանեմք զքեզ յաւուր քո ծնըն-  
դեան։

**Բանին բարձող՝ որ զամենայն կրէ զօրութեամբ։**  
Տես Առտուածածին զերազոյն քերովիշից։

**Բանին Հօր մարմնարան** եւ առագաստ բնա-  
կութեան։ Տես Առազաստ բնակութեան։

**Բանն անմարմին** որ ՚ի քէն մարմնացաւ եւ  
՚ի զիրկս քո բարձեալ կրեցաւ Մարիամ,  
այսօր եկեալ բազմութեամբ զօրօք հրեշ-  
տակացն, վերացոյց զքեզ հրակերպ կա-  
ռօք ՚ի լոյսն անստուեր։

**Բանն առագեալ ՚ի Հօրէ:** Տես Աստուածածին  
կոյս։

**Բանն Աստուած** եւ ծածկեալ խորհուրդն յա-  
ւիտենից՝ իշեալ ՚ի յերկնից մարմնացեալ  
՚ի կուսէն՝ խաչեալ յերկրի եւ թաղեալ

'ի նոր՝ ի գերեզմանի, եւ յարուցեալ յերշորդ աւուր՝ զի զմարգարէիցն զատասն կատարեացէ :

**Բաշխօղ բարութեանց :** §ես Առ քեզ առպատի նիմք :

**Բարբառ աւետեաց ձայնիւ Գարբիէլ գոչէր Սրբուհւոյն . Առ քեզ առաքիմ, մաքուր, պատրաստել տեղի Տէրունոյն :**

**Բարեբանեալ :** == Զըարեթանեալդ անդադար միշտ՝ ի վերին զօրաց, եւ զվերափոխեալդ ի դասս առաքելոց եւ մարգարէից, ընդ որս եւ մեք հաւատացեալքս վերապատուեմք զքոյին Աստուածամայր զհանդըստեան տօնս, որ առաւել բարձրացեալդ ես յաւիտեան :

**Բարեբանեալ ես կոյս գովեալ, յորմէ Աստուած Բանն ծնեալ :**

**Բարեբեր բոյսն բարի :** §ես Արմատ տմկոյն անմահութեան :

**Բարեխօս աշխարհի :** == Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի, որ բարեխօսող ես միշտ աշխարհի, քեզ երանեն ամենայն ազինք :

**Բարեխօսեա անդադար առ Որդիդ քո եւ Աստուած մեր . ծնող եւ աղախին Տեառն :**

**Բարեխօսեա առ Միածինն յարուցեալ ՚ի մեռելոց, մայր Աստուածոյ, փրկել զանձինս**

մեր ՚ի յաւիտենից ՚ի հրոյն, աղաչեմք զքեղ :

**Բարեխօսեա առ Տէր :** §ես Աստուածածին աւարատ մայր :

**Բարեխօսեա առ Քրիստոս :** §ես Աստուածածին անարատ կոյս :

**Բարեխօսեա վասն մեր Աստուածածին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած՝ որ հոգուէրն զիսրայէլ ամենազօր պահնչելի փառօքն իւրովք :**

**Բարեխօսեա Քրիստոսի Աստուածոյ մերոյ :** == Զքեղ աղաչեմք հանապազ սուրբ Աստուածածին, բարեխօսեա Քըիստոսի Աստուածոյ մերոյ փրկել զմեզ ՚ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց :

**Բարեխօս զքեզ ունիմք որ երանեալդ ես ՚ի կանայս :**

**Բարեխօս խոստովանողաց :** == Վաղաքավարեալ ՚ի մարմիի անարատ վարուք, այսօր յառաքելոցն ամփոփեալ՝ վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարգայութիւն Որդւոյ քո եւ Աստուածոյ մերոյ՝ բարեխօս խոստովանողաց, զքեզ մեծացուցանեմք :

**Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ միշտ կուսի աղաչեմ Տէր, փրկեա զիս ՚ի յորոգայթէ յաներեւոյթ թշնամոյն :**

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ  
միշտ կուսի Տէր օգնեա ինձ՝ միայն մար-  
դաէլք :

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին  
պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ, եւ՝ ի միւ-  
սանգամ՝ գալստեան իւրոյ նորոգեսցէ  
՝ի փառս :

Բարեխօսութիւն : = Աթոռ քրովբէական ե-  
րեւեալ այսօր Սիմէռլի՛ զԱստուածորդին  
՝ի գիրկս իւր բարձեալ մարմնով, զոր զօրք  
երկնից՝ի բարձունս հանապազ մեծացու-  
ցանեն : Հոգւովի գոչէր, ցնծայր ալեօքն  
ծերունին ասելով, սա է թագաւորն ան-  
մահ, զոր զօրք երկնից՝ի բարձունս հա-  
նապազ մեծացուցանեն : Արտասուելով  
աղերսէր, արձակեա զիս՝ի խաղաղու-  
թիւն անարատ ծնողի քո բարեխօսու-  
թեամբ, զոր զօրք երկնից՝ի բարձունս  
հանապազ մեծացուցանեն :

= Անոխակալ եւ բարեգութ, բարեխօ-  
սութեամբ սրբուհւոյ անարատ մօր քո  
եւ կուսի լուր աղաչանաց մերոց եւ նո-  
րոգեա հոգւով զիտութեան :

= Արդ խնդրեմք՝ի քէն թագաւոր փա-  
ռաց Քրիստոս, աղաջանօք սրբուհւոյ ա-  
նարատ մօր քո եւ կուսի ապրեցո զմել  
յաւիտենից՝ի մահուանէն :

= Բարեխօսութեամբ ծնողի քո եւ միշտ  
կուսի հայցեմք՝ի քէն Քրիստոս փրկիչ  
աշխարհի, վասն զի բայց՝ի քէն զայլ  
ոք ոչ զիտեմք մարդասէր :

= Ի բարեխօսութիւն փութացիր մեզ  
սուրբ Աստուածածնին, առ՝ի փրկել զժո-  
ղովուրդս՝ի մեղաց եւ յապականութենէ :

= Որ յարեարդ՝ի մեռելոց, նորոգեցեր  
զազգս մարդկան, սրբուհւոյն աղաջանօք  
հաստատեա գհիմունս եկեղեցւոյ սրբոյ  
քո զի դու ես Տէր եւ չիք այլ ոք բայց  
՝ի քէն :

= Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօ-  
սութեամբ ընկալ Տէր զմաղթանս մեր,  
յորդամ յարեւելից լուսածագիս անճառ  
հրաշիւք, կարապետ առնելով զյաղթա-  
նակ սուրբ նշանն, աղաչեմք զքեղ Տէր.  
պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի  
քո սուրբ :

= Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօ-  
սութեամբ պարգեւեա երկրպագուացս  
ամենասուրբ Երրորդութեանդ զյարու-  
թիւն յուսոյ կենացն յաւիտենից :

Բարձեր զանհասն բնութեամբ : = Գերագոյն  
սրբութեամբ եւ կուսական մաքրութեամբ,  
բարձեր զամհասն բնութեամբ՝ի գիրկու

Քո սննդեամբ, բարեխօսեա Միածնին  
Աստուածածին մայր Բանին:

Բարձեր՝ ի յարդանդիք: = Զբոլորից վրկու-  
թեան մայր, որ զանտանելին յէից՝ ի  
յարգանդի Եբարձ, զնա ամենեքեան օրհ-  
նութեամբ մեծացուցանեմք:

Բարձող անիծից: = Դու լուծիչ երկանց,  
բարձող ամիջից:  
= Բարձան անէծքն տրտմական քո սուրբ  
Ճննդեամբ կոյս Մարիամ: Տես եւ Դուռն  
երկնից. — Լուծիչ երկանց. — Պարծամք  
կուտրթեամ. — Տաճար անարատ:

Բարձող անտանելի Բանին: = Այսօր զան-  
տանելի Բանիդ բարձողն զբերովքն հո-  
գեղին բարձրացուցեր՝ ի ստորնայնոցս գե-  
րակայիցն կայանս:

Բարձող Բանին: Տես Աստուածածիմ զերագյու:   
Բարձող երկանց նախամօրն: = Որ զմիածնի  
Որդոյ քո զբնակարան՝ զնախամօրն եր-  
կանց բարձողն այսօր դարձուցեր՝ ի փառ-  
առաջին, զբեղ բարեբանեմք Աստուած-  
հարցն մերոց: Տես եւ Ամհարսնացեալ  
մայր:

Բարձող էիցս բարձողին, որ ծնար զԱստուած-  
մարմնով զանմարմնաբար ծնունդն Հօր:  
Տես Ամհարսնելոյն տաղաւար:

= Զանպարագրելին՝ ի գիրկո քո բարձեր:  
= Զանտանելին յէից՝ ի յարգանդի ե-  
րարձ:  
= Քրիստոսի բարձող:  
Բարձող տրտմութեան նախամօրն Եւայի: =  
Խնդա տաճար Բանին Աստուածոյ, բարձող  
տրտմութեան նախամօրն Եւայի, լեր  
բարեխօս վասն անձանց մերոց:  
Բարձրագոյն սերովքէից: Տես Մայր սրբու-  
թեան:  
Բարձրագոյն քան զերկինս: = Որ քան զեր-  
կինս բարձրագոյն Մարիամ, պարձանք  
եկեղեցւոյ, Քրիստոսի մայր Աստուածոյ  
մերոյ:  
Բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ:  
Բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ: =  
Ուրախացիք Բարձրելոյն հովանացեալ զօ-  
րութեամբ եւ բնակարան սուրբ Հոգւոյն՝  
որով ծնար զբանն Աստուած, բարեխօսեա  
վասն մեր Աստուածածին Մարիամ:  
Բարտւնակ ծաղկեալ: Տես Լեառն վիմածիմ:  
Բերկրեալ: = Այսօր Գաբրիէլ հրեշտակն  
ցնծութեամբ երգեաց առ կոյսն սուրբ,  
ասէ. Ուրախ լեր բերկրեալը՝ Տէր ընդ  
քեզ:  
Բերկրեալ ամենասուրբ կոյս: = Ուրախ լեր

բերկրեալ ամենասուրբ կոյս՝ որ ծնար  
աշխարհի զարդարութեան արեգակն՝ որ  
լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան։  
Բերկրեալ կոյս Մարիամ։ = Սուրբ զես-  
տուածածինն օրհնութեամբ մեծացուցա-  
նեմք։ Աւետաւոր հրեշտակն աւետարա-  
նէր զծնեալ Փրկիչն՝ ի սրբոյ կուսէն։  
Ասէ, ուրախ լեր բերկրեալդ, քանզի Տէր  
տերանց է ընդ քեզ։  
= Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս,  
որ զանբաւելի զիանն անձառաբար յղա-  
ցար, եւ զմարմնացեալն Աստուած ծնա-  
նելով՝ ի քէն, վասն որոյ ամենեքեան  
գքեզ միշտ մեծացուցանեմք։  
Բղխեցեր։ = Զանապական բողբոչն՝ յաս-  
տուածային դրախտէն յորովայն քո տըն-  
կեալ. բղխեցեր յարմատոյն Յեսսեայ ծա-  
զիկ վայելուչ կուսական ծննդեամբ, վասն  
որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացու-  
ցանեմք։  
= Ուրախութիւն երկնի եւ երկրի, ամպ  
թէթեւ ցողեալ՝ ի մեզ զարդարութիւն,  
բարեբանեմք զբղխեալն՝ ի քէն մարմնով  
յարմատոյն Յեսսեայ գաւազան ծաղկեալ։  
= Զհայրածինն բղխեցեր զծաղիկ։ Տես  
ծառ կինաց։

Բնակարան անբաւ Բանին Աստուծոյ։ Տես  
Ամարատ տաճար։  
Բնակարան անակզբնական Բանին Հօր։ Տես  
Ամսկզբական։  
Բնակարան անսկզբնակից Որդւոյն։ = Զան-  
ճառելի լուսոյ մայր եւ զբնակարան ան-  
ըսկզբնակից Որդւոյն՝ օրհնութեամբ մե-  
ծացուցանեմք։  
Բնակարան աստուածայիններմարդութեանն։  
= Զքեզ կոյս եւ մայր եւ ընակարան  
աստուածայիններմութեանն՝ գոհա-  
բանեմք եւ վերօրհնեմք զեղեալ փրկօզ  
կենդանութեան ազդի մարդկան, վասն  
որոյ զքեզ Աստուածածին եւ կոյս՝ բարե-  
բանեմք զմայր եւ զաղախին փրկչին մերոյ։  
Բնակարան աստուածութեան։ = Որ՝ ի կա-  
նուխ ժամանակաց ստորագրեցեր զտնօ-  
րէնութեան քո զտեզի, տաճար եւ քաղաք  
շինեալ, բարձող անուանդ քում բարձրե-  
լոյ, այսօր ստուգապէս յայտնեալ ցուցաւ  
ընակարան աստուածութեան քո սուրբ  
կոյսն Մարիամ, օրհնեալ Տէր Աստուած  
հարցն մերոց։  
= Քերովբէական թեւօք պարածածկե-  
ցար՝ սրբուհի Աստուածածին, կոյս եւ մայր  
եւ ընակարան աստուածութեանն, վեր-

օրհնեալ յամենայն առաքելական քաշ  
բողութեանց :

Բնակարան Բանին : Տես Աստուածածիմ սիւն  
լուսոյ :

Բնակարան Բանին Աստուածոյ : = Մայր Քրիս-  
տոսի եւ ընակարան Բանին Աստուածոյ,  
անհասութեան խորհրդոյն սպասաւորե-  
ցեր, միջնորդ եղեր Աստուածոյ եւ մարդ-  
կան, առ նա միշտ բարեխօսեա վասն  
անձանց մերոց :

Բնակարան բնութեան Բանին : = Որում  
երկինք եւ երկիր ոչ բաւէին տանել լու-  
սոյն, ընակարան բնութեան Բանին սպա-  
սաւորեցար, աղաչեա վասն մեր զմիա-  
ծին քո զիրդիդ :

Բնակարան եկաւորութեան : = Բղխումն ան-  
ձառ եւ անքնին՝ Հոգիդ անեղ եւ համազոյ,  
զտնօրինութեան քում էակցին մաքրա-  
զարդեալ զբնակարան եկաւորութեանն,  
օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց :

Բնակարան եւ առագաստ արարչին : = Մի-  
այն օրհնեալ Սրբուհիդ 'ի կանայս, ընա-  
կարան եւ առագաստ արարջն, բարե-  
խօսեա առ Տէր վասն անձանց մերոց, զի  
փրկեսցէ զմեղ 'ի սպասնալեաց գեհենոյն :

Բնակարան կենարար Բանին : = Լոյս լուսոյ

մայր եւ կենարար Բանին ընակարան, քեզ  
երանիցեն ազգ եւ ազինք ամենայն :

Բնակարան Հոգւոյն սրբոյ : = Այսօր զբնա-  
կարան Հոգւոյն սրբոյ վերնական հրա-  
բումն սեռիցն փոխադրեալ յերկինս, մտա-  
նելով 'ի վերինն երուսաղէմ 'ի յառա-  
գաստն անապական յանմտանելին եղա-  
կանաց՝ ընդ Երրորդութեանն, եւ համա-  
ձայնեալ անմարմնոցն օրհնէին զամեն-  
օրհնեալ Սրբուհին :

Բնակարան Միածնի Որդւոյ : = Որ զմիածնի  
Որդւոյ քո զբնակարան՝ զնախամորն եր-  
կանց բարձօղն այսօր գարձուցեր 'ի փառ  
առաջին, զքեզ բարեբանեմք Աստուած-  
հարցն մերոց :

Բնակարան սուրբ Հոգւոյն, որով ծնար  
զբանն Աստուած, բարեխօսեա վասն մեր  
Աստուածածին Մարիամ:

Բնակարան տնօրինութեան : = Որ 'ի Հօրէ  
անմարմնաբար ծնեալ Որդի նախ քան  
զյաւիտեանս, եւ մարմնով ծնար 'ի սրբոյ  
կուսէն, այսօր խոնարհեալ՝ յերկնայինսն  
փոխեցեր զտնօրինութեան քո զբնակա-  
րանն, զոր միշտ ունիմք բարեխօս առ  
քեզ՝ Տէր Աստուած հարցն մերոց :

Բնակ հրեղէն աստուածութեանն : = Զքեզ

բնակ իրենէն աստուածութեանն՝ յիմանալի զօրացն երանեալ, ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք :

Բոլորից փրկութեան մայր : = Զբոլորից փրկութեան մայր, որ զանտանելին յէից 'ի յարգանդի երարձ, զնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք :

Բոյս բարի եւ բարեբեր : Տես Արմատ տղթ կոյն ամմաժութեաՅ :

Բուրաստան նորատունկ : = Ուրախ լեր Մարիամ նորատունկ բուրաստան, երկնաբերձ աշտանակ ձոյլ ոսկի եւ ձեմարան Բանին Աստուծոյ :

## ¶

Գանձ անապական գտար սուրբ Աստուածածին, բարեխօսեա Քրիստոսի Աստուծոյ մերոյ կեցուցանել զանձինս մեր :

Գանձ կենաց աստուածային : = Զքեղ լուսոյ մայր եւ կոյս, զքեղ գանձդ կինաց աստուածային, ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք :

Գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ : Տես Բամտլիլ :

Գեղ մարդարտափայլ : Տես Յօդ քարցըածաւալ:

Գեղմն ընդունիչ զցօղն երկնային : = Այսօր գառինքն օրինականքն Յովակիմ եւ Աննա ետուն մեղ զգեղըն ընդունիչ զցօղն երկնային, յորմէ հոսեաց անձրեւն կենաց եւ բղխեաց աշխարհի աղբիւրն իմաստից, փառս տացուք տուողին մեղ զօրհնեալն 'ի կանայս :

Գեղմն իմանալի՝ զոր ետես Գեղէովմ, յառաջքան զայս հաւատացեալ, իմանամք զանձառելի զծնունդ, եւ երկրագեմք որ 'ի կուսէդ մարմնացաւ Աստուած :

Գեղմն իմանալի : = Ուրախ լեր ամպ թեթեւ, գեղմն իմանալի, որ 'ի բանական երկիր կեղեր զանձրեւ կենաց՝ արդիւնսընդ գործոյ հաւատոյ պաղաբերեալ :

Գերագոյն : = Լեկավար ճարտարապետ անցեր ընդ ծով կենցաղս անհետ, վերաբերեա ընդ Պետրոսի զմեղ 'ի յալեաց մեղաց ծովէս, պաղատանօք գերագունի անապական քում ծնողի, յոր օրհնեցաք ազգ երկրածինք՝ տուք օրհնութիւն պտղոյ կուսին :

Գերագոյն երկնից խորան եւ առագաստ : Տես Աստուածածին զերազոյն երկնից :

Գերագոյն եւ հրաշալի եւ բաշխօղ բարութեանց : § Ես Առ քեզ ապավիմիսք :

Գերագոյն շնորհիւ փայլեալ : = Անսկիզբն Աստուած անձառելի անբաւ զօրութիւն, որ յիսկզբանց յաւիտենից խնամարկեցեր զորդիս Սուրամայ՝ գերագոյն այսօր շնորհիւ փայլեալ ցուցեր ծննդեամբ զմայր Միածնիդ քո ընտրելոյ, աղաչանօք սոցա ինայեա ՚ի մեզ :

Գերագոյն սրբութեամբ եւ կուսական մաքրութեամբ, բարձեր զանձասն բնութեամբ ՚ի գիրկս քո մննդեամբ, բարեխօսեա Միածնին Աստուածածին մայր Բանին :

= Առաքելոցն հովանացեալ ամպ լուսեղեն, գերագոյն քեզ Հոգւոյն սրբոյ եւ զօրութիւն Բարձրելոյն հովանաւորեալ սուրբ Աստուածածին, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմբ :

Գերագոյն քերպելից : § Ես Աստուածածին գերագոյն քերովբէից :

Գերահրաշ ծաղիկ : = Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յեղեմայ, հոտ անմահութեան ծննդոց Եւայի՝ յորմէ սփոեցաւ մահ ընդ տիեզերս, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմբ :

Գերապայծառ մաքրեալ հոգի : = Այսօր մեսեալ հրակերպ դասուք վայր իշեալ յերկնից զՈրդին միածին արփիափայլ հրաշալի փառօք, գերապայծառ մաքրեալ հոգւոյն յաւանդումն ամենասուրբ ծնողին իւրոյ, եւ համաձայնեալք ամարմնոցն օրհնէին գամենօրհնեալ Սրբուհին :

Գերկ : = Այսուկ անժամանակ ՚ի Հօրէ՝ անսկրմն ՚ի կուսէ՝ ՚ի գիրկս մօր գգուեցաւ այսօր արարիչն երկնի եւ երկրի : = Յորմէ սարսեալ դողային փայլակնացայտ ՚ի լուսոյն, ՚ի գիրկս քո զնա ընկալար, զքեզ բարեբանեմբ Աստուածածին կոյս :

= Յոր վեցթեւեան սրովբէքն ոչ իշխէին հայել ՚ի քո աստուածութիւնոդ, տեսանելով ՚ի գիրկս կուսին՝ զարմացեալք օրհնէին զքեզ Աստուած հարցն մերոց : = Որ բացեղէն սրովբէիւք շրջափակեալ պահիւր, այսօր ՚ի մէջ մարդկան ՚ի գիրկս հողեղինի յայտնեալ, ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ :

= Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ ՚ի քո գիրկս, եւ արեգականն արդարութեան եղեր արեւելք, զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմբ :

— Տես եւ Գելազոյն սրբութեամբ . —  
Դուռը երկնից . — Կաթի :  
Գրաւական կենաց մարդկան : = Մարգա-  
րէից հանդիսարան եւ գրաւական կենաց  
մարդկան Մարիամ Աստուածամայր , ըն-  
դունարան եօթնարփին շնորհացն , խա-  
րիսխ յուսոյ հաստատութեան՝ զուգաթիւ  
աւուրց գարուցս անցաւորաց , օրհնու-  
թեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր  
տօնեն դյիշատակ ծննդեան քո 'ի մօրէ :

## Դ

Դառնաճաշակ պտղոյն քաղցրացուցիչ : = Որ  
զհուրն Աստուած յորովայնի քում կրե-  
ցեր՝ անբոցակիշ մորենի , դառնաճաշակ  
պտղոյն քաղցրացուցիչ , գքեղ ունիմք բա-  
րեխօս առ Տէր վասն անձանց մերոց :

Դասեալ յաստուածակերտ խորանսն : Տես  
Ազատիշ յանցանաց նախամօրթ :

Դուռն երկնային : = Զքեղ երկնային դուռն  
զոր ետես Եղեկիէլ , եւ ասրն զոր ծանեաւ  
Գեղեռիլ , սերովք հողեղին վեհագոյն  
քերովքից , օրհնութեամբ զքեղ Աստուա-  
ծածին մեծացուցանեմք : Տես եւ երգէ :

Դուռն երկնից : = Զքեղ դուռն երկնից եւ  
ճանապարհ արքայութեան , բարձող անի-  
ծից եւ սրովք հողեղին , մեծացուցանեմք :  
= Դուռն երկնից , զժագումն անձառելի  
անապական որ 'ի Հօրէ առաքեցաւ՝ 'ի  
գիրկս քո բարձեալ կրեցեր , դիեցուցա-  
նելով մարմնացելոյն 'ի քէն զկուսական  
քո սուրբ զկաթն , անդադար երգով զքեղ  
միշտ մեծացուցանեմք :

\* Դուռն ընդ որ եմուտ Բանն Աստուած : =  
Եւ խոշտանգեալ զդասս հրէիցն՝ խոս-  
տովաներ Յուգա Եկեալ 'ի տեղին Գողգո-  
թա հաւատով , եւ քարոզէր նոցա զդուռն  
ընդ որ եմուտ Բանն Աստուած , մեծացու-  
ցանելով զծնեալն 'ի կուսէն :

Դուռն կնքեալ : = Ուրախ լեր բերկրեալ ,  
դուռն կնքեալ որ ծնար աշխարհի զթա-  
գաւորն Քրիստոս , որ նստի 'ի վերայ աշ-  
նարուեստ աթոռոյ : Տես եւ Ապաւամիմք  
'ի քո բարեխօսութիւնն :

Դուռն փակեալ զքեղ Եղեկիէլ յառաջագոյն  
ծանոյց՝ կոյս անարատ , ընդ որ եմուտ  
անտեսն յէից Բանն անմարմին որ 'ի Հօրէ  
եւ Ել մարմնով անխախտելի մալով կու-  
սութեանդ , հոգեւոր երգով զքեղ միշտ  
մեծացուցանեմք :

Ա = Ուրախ լեր դուռն փակեալ, ընդ որ  
ոչ ոք մտեալ բայց Տէր Աստուած Խորայելի,  
զքեղ օրհնութեամբ մեծացուցանեմք: Տես  
եւ Լեառն վլիմածիմ:

Դուստր Դաւթի թագաւորի: = Թագաւոր  
փառաց Աստուած Հոգիդ կենդանարար,  
'ի շնորհարաշն աւուր մեծի ծննդեան  
Մարիամու դստեր Դաւթի թագաւորի  
նորոգեա զկենդանութիւն մերոյ թագաւ-  
որին, զի օրհնեսցուք զքեղ Տէր այժմ եւ  
յաւիտեան:

Գուստր լուսոյ: = Ուրախ լեր դուստր լուսոյ՝  
մայր անհարսնացեալ, քանզի յղացելոյն  
'ի քէն համախմբեալ վերնոցն որդիք  
Սիոնիկ՝ երգեն զիառս 'ի բարձուն:

Դրախտ աստուածային եւ արեւելք իմանա-  
լի, այսօր Մարիամ հրաշագեղ ծնեալ 'ի  
յԱննայէ, 'ի մայրութիւն քո հրաւիրեալ  
Քրիստոս Որդի Աստուծոյ, անդադար եր-  
դուլ սոքօք զքեղ միշտ մեծացուցանեմք:

## Ե

Եկեղեցի Որդւոյ քո Աստուածային զքեղ  
խոստովանի:

Ելոյծ զօրէնս բնութեան մարդկան հրաշա-  
պառ քո ծնունդ եւ զէութիւն բնութեանն  
ամբողջ պահեալ եւ կուսութեանդ քո ոչ  
խախտեցան կնիք, հոգեւոր երգով զքեղ  
բարերանեմք եւ փառաւորեմք զմիածին  
քո զՈրդին:

Եսայիաս զքեղ թեթեւ ամպ ետես, եւ Հայր  
յամեպոյն զքո զՈրդին իւր գաւանեաց,  
նմա յաւէժ յանձն արա զսմնձինս մեր:  
Երանեալդ 'ի կանայս: = Որ զհուրն Աս-  
տուած յորովայնի քում ընկալար եւ ծնար  
անձառապիչս զիենագործողն ամենեցուն,  
բարեխօս զքեղ ունիմք որ երանեալդ ես  
'ի կամայս:

Երանեալ յամենայն ազգաց: = Որ յամե-  
նայս ազգաց երանեցար Սրբուհի եւ կոյս  
Մարիամ, աղաչեա զառ 'ի քէն զմարմնա-  
ցեալն Աստուած՝ ապրեցուցանել զմեզ 'ի  
սպառնակեաց զեկենոյն:

Երանեալ յիմանալի զօրացն: Տէս Բնակ հրե-  
ղէմ աստուածութեանն:

Երանելիդ ամենեցուն՝ զԱստուած տանելով  
զբնութեամբ անտանելի, զամենեցուն ա-  
մենակալն արժանի եղեր կրել յորովայնի,  
որ երեւեցաւ ազգի մարդկան:

Երգաբանեալ: = Որ 'ի զօրաց հոգեղինաց

Երգաբանի Սրբուհին, զծնեալն այսօր օ-  
րինօք բնութեան զմայրն Աստուծոյ Բա-  
նին՝ ի վեր քան զբնութիւնս, բարձր ա-  
րարէք զծնեալն այսօր զմայր մաքուր Բա-  
նին զմիշտ կոյսն :

Երգէ մարգարէն՝ սուրբ է տաճար քո սքան-  
չելի արդարութեամբ եւ գուռն երկնային.  
ուրախ լեր Աստուածածին՝ տաճար ան-  
խախտելի զքեղ մեծացուցանեմք :

Երիս խորհուրդս սոսկալիս 'ի քեզ տեսանի  
Աստուածածին՝ յլութիւն անսերմական,  
ծնունդ անարատ, կուսութիւն յետ ծնըն-  
դեան մնալով անապական. օրհնութեամբ  
զքեղ Աստուածածին մեծացուցանեմք :

Երկին վեհագոյն : = Ուրախ լեր երկին վե-  
հագոյն՝ քրովք հողեղէն, որ զանտանելին  
երկնից եւ հրեղինաց դասուցն 'ի քո ըն-  
կալար մաքրական որովայնի :

Երկինք պայծառ : = Զքեղ պայծառ երկինք  
եւ ամպ լուսեղէն, ծնող արարչին եւ մո-  
րենի անկիղելի մեծացուցանեմք :

Երկիր բանաւոր : = Ուրախ լեր մայր լուսոյ  
Մարիամ. երկիր բանաւոր, արեգականն  
օթարան, լեր բարեխօս վասն անձանց  
մերոց :

Երկիր վայրափակ : = Տեղի անտանելի Բա-

նին, եւ երկիր վայրափակ յորում լոյսն  
ագանիցի եւ արեւելք արեգականն արդա-  
րութեան, անդադար ձայնիւ զքեզ բա-  
րեբանեմք, եւ Հոգեւոր երգով մեծացու-  
ցանեմք :

Երկնարերձ աշտանակ : Տես Աշտանակ :

Երկնային գուռն : = Զքեզ Եղեկիէլ ետես  
երկնային լուռն եւ Հարսն անփորձ, օրհ-  
նեալ ես յաւիտեան : Տես եւ Ասրմ :

Երկրուգագեալդ յանմարմնական զօրաց : =  
Տեղափոխեալ զքեզ 'ի վերնական 'ի կառա-  
քերուգեալկանս Աստուածամայր, սպասա-  
ւորեալդ 'ի սերովքէից եւ երկրուգագեալդ  
յանմարմնական զօրաց, անդադար երգով  
զքեզ միշտ մեծացուցանեմք :

Երջանիկ կոյս : = Որ 'ի լրումն անձառից 'ի  
քէն յայտնեալ ծածկեալ խորհրդոյ 'ի քէն  
մաքրելոյ երջանիկ կուսին Հօր զօրութիւն  
հովանաւորեալ, զօր առ քեզ ունիմք բա-  
րենիսոս վասն անձանց մերոց :

Եօթնարփին շնորհաց ընդունարան : Տես Գլա-  
ւական կենաց :

Եօթնարփին շնորհաց Հոգւոյն ընդունարան :  
Տես Աթթառամ ծաղիկ :

## Զ

Զանապական կոյսն Մարիամ Աստուածածին  
խոստովանի սուրբ Եկեղեցի, ուստի տուաւ  
հայն անմահութեան եւ բաժակ մեզ ու-  
րախարար, տուք օրէնութիւն նմա հոգե-  
ւոր Երգով:

Զանարատն օրէնեսցուք զԱստուածածինն որ  
կոյս մնաց յետ ծննդեան, եւ տարաւ յու-  
րովայնի զանտանելին ամենեցուն, զհա-  
մարնակիցն Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն:  
Զբարեանեալդ անդադար միշտ 'ի վերին  
զօրաց, եւ զվերափոխեալդ ՚ի դասս ա-  
ռափելոց եւ մարգարէից, ընդ որս եւ մեք  
հաւատացեալքս վերապատուեմք զբոյին  
Աստուածամայր զհանգստեան տօնս, որ  
առաւել բարձրացեալդ ես յաւիտեան:

Զի 'ի քէն ցնծութիւն ծնաւ տիեզերաց նա-  
խայաւիտեան նանն, փառակից Հօր եւ  
սուրբ Հոգւոյն, զնա անդադար աղաչեա  
վասն անձանց մերոց:

Զ'ի կուսէն մարմնացեալ նանն՝ եկայք ժողո-  
վուրդք ընդ հովիւսն բարեբանեսցուք եւ

ընդ մոկուցն երկրպագեսցուք, ընդ եր-  
կնային զօրսն երգեսցուք՝ փառք ՚ի  
բարձուն Աստուծոյ:

Զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմք  
առաջի անոխակալ տէրութեանդ քու յոր-  
ժամ զաս փառօք Հօր գատել զթշնամին  
խաչիւ քո, ներեա յանցանաց մերոց բա-  
րեխօսութեամք մօր քո եւ կուսի աղա-  
չնմք զբեզ Տէր՝ պահպանեա զմեզ ընդ հո-  
վանեաւ խաչի քու սուրբ:

Զկուսութիւնդ քո Աստուածածին անարատ,  
զոր ոչ բոցակիզեաց հուր աստուածու-  
թեանն՝ մեծացուցանեմք: Որ յարդանդի  
քում անապականաբար բնակեցաւ Քրիս-  
տոս Աստուած եւ փրկիչ անձանց մերոց՝  
մեծացուցանեմք: Անհասանելի տէրու-  
նական յայտնութիւնն աշխարհի ծագե-  
ցաւ, անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Զմայրդ լուսոյ Բանին Աստուծոյ, որ եղիր ա-  
րեւելք արեգականն 'ի մեզ ծագողին, բա-  
րեխօս ունիմք փրկել զմեզ 'ի փորձութենէ:

Զօր ընարեաց Աստուած յամենայն ազգաց  
երկրէ՝ ծնանիլ 'ի նմանէ, ապրեցուցանել  
զմեզ կուցն 'ի պաշտելութենէ, որպէս  
զԱստուածածին միշտ փառաւորեացուք:

Զուգաթիւ աւուրց գարուց անցաւորաց: Տես  
գրաւական կենաց:

Զքեղ աղաւչեմք հանապազ սուրբ Աստուածածին, բարեխօսեա Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ փրկել զմեղ ՚ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց :

Զքեղ անհարսնացեալ՝ որ միայնդ ՚ի կանայս օրհնեալ կրելով՝ ՚ի քեղ զանտանելի զբնութիւնն, օրհնութեամբ մեծացուցանեմբ :

Զքեղ երեւեալ գուռն առ Եղեկիէլիւ մարդարէիւ, ընդ որ ոչ ոք էանց եթէ ոչ Աստուած միայն, Աստուածածին կոյս, օրհնութեամբ մեծացուցանեմք : Զքեղ որ ՚ի մորենւոջն առ Մովսէսիւ մարդարէիւ՝ զնորիսորհուրդ կուսի յայտնեցեր մարդկան ազգի, օրհնութեամբ մեծացուցանեմք : Զքեղ որ ՚ի Հօրէ անժամանակապէս եւ ՚ի մօրէ անթարզմանաբար, ՚ի ժամանակի ծննդեան ՚ի բոլորից փրկութեան յայտնեցար Որդի բարձրելոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք :

Զքեղ երկնային գուռն զոր ետես Եղեկիէլ, եւ ասրն զոր ծանեաւ Գեղէովիւ, սերովբէ հողեղէն՝ վեհագոյն քերովբէից, օրհնութեամբ զքեղ Աստուածածին մեծացուցանեմք :

Զքեղ ոչ միայն որդիք մարդկան, այլ եւ վերին զօրութիւնք, դասք անմարմնոց հո-

գեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց գոհաբանեն եւ վերօդնեն եւ փառաւորեն զմայր եւ զաղախին փրկչին մերոյ :

Զքեղ ունիմք բարեխօս կոյս անհարսնացեալ, մայր անարատ Էմմանուէլի, տաճար Բանին Հօրն երկնաւորի, օրհնութեամբ զքեղ մեծացուցանեմք :

Զքեղ օրհնութեամբ մեծացուցանեմք : Որ զբանն Աստուած յարգանդի կրեցեր՝ Սըրբուհի անարատ, եւ անճառապէս ծնար զվերածգոլն երկնից, զքեղ օրհնութեամբ մեծացուցանեմք : Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ ՚ի քո գիրկս, եւ արեգականն արդարութեան եղեր արեւելք, զքեղ օրհնութեամբ մեծացուցանեմք :

Զօրութեամբ Բարձրելոյն հովանաւորեալ : Տես հովանաւորեալ :

Է

Էին աթոռ : == Փերովբէից գերագոյն Եին աթոռ, եւ ծառ կենաց անմահական պտղոյն, տապանակ կտակի Բանին եւ

սափոր ոսկի երկնային մանանային, հոգեւոր երգով զքեղ Սրբուհի մեծացուցանեմք:

Եմմանուէլի մայր: = Զքեղ մայր Էմմանուէլի, մարդարէին յառաջ գուշակեալ, աղդ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք: Տես եւ Զքեղ ունիմք:

## Ը

Ընդունարան եօթնարփին շնորհաց : Տես Գրաւակա՞ն կենաց :

Ընդունարան եօթնարփին շնորհաց Հոգւոյն : Տես ԱՅթառամ:

Ընդունող Բանին Աստուծոյ : Տես Աստուածածին ամարատ:

Ընդունող լուսոյ: = Ուրախ լիր Աստուածածին՝ յոյս եւ փրկութեան մայր, զքեղ լնդունոյլ լուսոյ մեծացուցանեմք:

Ընծայեցեր: = Որ զպտուղն 'ի քէն կենաց լնծայեցէր մեռեալն Ադամայ, զորոյ պահօք քառասնօրեայ քաւեաց զպտղոյն ձաշակումն եւ յանվախճան զնոյն վերածեաց 'ի կեանս, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց :

Ընկալեալ յիմանալի խորանս անմահից: = Այսօր զուարձացան հրեշտակը 'ի յերկինս լնդունելով յերկրէ զմայր Բանին Աստուծոյ յիմանալի խորանս անմահից :

Ընտրեալ յառաջ քան զհիմունս 'ի սկզբանէ աշխարհի, տումար անձառ անքնին եւ ամպ թեթեւ լուսածին, բարեխօսեա Միածնին Աստուածածին մայր Բանին :

## Թ

Թարգման աստուածութեան: = Անձառելիդ Աստուած անզննական 'ի հրեղինաց, այսօր հաճեցար 'ի հողեղինաց յայտնել թարգման աստուածութեանդ քո զմիշտ կոյսն Մարիամ, աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած:

## Ժ

Ժուժկալեալ: = Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ, արգանդ կուսակն ժուժկալը լընդունել զգանձդ երկնային:

## հ

- ի բարեխօսութիւն փութացիր մեղ սուրբ  
Աստուածածին՝ առ ՚ի փրկել զժողովուրդու  
՚ի մեղաց եւ յապականութենէ :
- ի բարձրութիւնս երկնից բարձր բանիւք բա-  
րեբանիս Սրբուհի, ՚ի Լիբանանէ դիմեալ  
հարսն զգեցեալ այսօր զարեգակն արկեալ  
զքեւ եւ ընդ ոտիւք զլուսինն ստուելա-  
տեսակ, օրհնութեամբ երգով եկեղեցիք  
տիեզերաց այսօր տօնեն զյիշտատակ ծնըն-  
դեան քո ՚ի մօրէ :
- ի լեռնէ վիմն առանց ձեռին հատեալ՝ Դա-  
նիէլ գուշակեաց զանսերմն ծնունդ քո  
հարսն երկնաւոր, մայր եւ յետ ծննդեան  
մնալով կոյս, վասն որոյ ամենեքեան զքեղ  
միշտ մեծացուցանեմք :
- ի Կիբանանէ դիմեալ հարսն : Տես ի բարձրու-  
թիւնս երկնից :
- ի մանալի արեւելք : == Յնծա իմանալի ա-  
րեւելք, քանզի քեւ ծագեաց մեղ լոյս  
երեսաց Քրիստոս, լեր բարեխօս վասն  
անձանց մերոց :

- ի մանալի բանաւոր տախտակ անտրամազրե-  
լի տառիցն մովսիսական օրինացն, որ  
վաստուածն ամենեցուն իսկապէս մար-  
մով ՚ի գիրկո քո բարձեր, Մարիամ. ներ-  
բողական ձայնիւ եղանակեմք քեզ զերգու  
օրհնութեան՝ ամենօրհնեալդ ՚ի կանայս :
- ի մանալի լոյս : == Միայն օրհնեալդ ՚ի կա-  
նայս, մայր եւ միշտ կոյս եւ իմանալի  
լոյս, ծնող արարչին մերոյ՝ անդադար  
բարեբանեսցուք :
- ի տեսիլ հրաշից փառաց Միածնին զուար-  
ճացան զասպ առաքելոցն, եւ ընդ վերին  
զուարթունն համաձայնեալ՝ նոր օրհնու-  
թիւն քեզ եղանակեին օրհնեալդ ՚ի կա-  
նայս :
- ի քեզ բովանդակ կրեցեր զհուր աստուա-  
ծութեանն Մարիամ մայր եւ կոյս, օրհ-  
նութեամբ զքեզ մեծացուցանեմք :
- ի քեզ եմք ապաւինեալ որ մայրդ ես եւ ա-  
ղախին Քրիստոսի, լեր բարեխօս վասն  
մեր՝ զի զանուն Տեառն կարգացուք եւ  
զքեզ մեծալեալ պատուեսցուք :
- ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աս-  
տուծոյ մերոյ :
- ի քերովքս բաղմեալ ընդ Հօր անապակա-  
նաբար բնակիլ հաճեցաւ ՚ի քում յորո-

վայնի, ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ  
քեզ : Տէն գնծութիւն ծնաւ : Տես Զի ՚ի քէմ :

## Լ

Լայնածաւալ տեղի : = Անպարագիծ Էին  
բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի :  
Տես Աստուածածիմ սուրբ կոյս :

Լեառն վիմածին, աղբիւր յորդառատ, բա-  
րունակ ծաղկեալ, այգի վայելուչ, սրովրէ  
հողեղէն, բաբունւոյ Բանին տուն տնօ-  
բէնութեան, տաղաւար Հոգւոյն, առ  
ծնեալն ՚ի քէն միշտ բարեխօսեա ան-  
դադար հայցմամբ՝ շնորհել զթողութիւն  
մեր ննջեցելոցն :

Լեառն վիմածին : = Զքեզ մորենի անկէզ,  
լեառն վիմածին, դուռն փակեալ եւ աղ-  
բիւր կնքեալ, նախատեսացն գուշակեալ  
մայր եւ կոյս, հոգեւոր երգով զքեզ բա-  
րեբանեմք եւ փառաւորեմք զմիածին քո  
զնորդին : = Որ զօրինակ Մարիամու Հոգիդ  
ցուցեր մարգարէին, այսօր զաւակ Յո-  
վակիմայ ետուր զիեառն վիմածին, զքեզ  
բարեբանեմք Աստուած հարցն մերոց :

Լի մանանայիւ : Տես Բանալի :  
Լոյս : = Նստելոցս՝ ՚ի խաւարի լոյս ծագե-  
ցեր : Տես Աստուածածիմ խորան լուսոյ :  
Լոյս : = Զլյոն անստուեր յարգանդի կրե-  
ցեր օրհնեալդ՝ ՚ի կանայս :  
= Լոյն որ ոչ բովանդակի, ՚ի քէն  
մարմնով պարունակի : Տես Ծածկեալ :

Լոյս լուսոյ մայր : Տես Բնակարան կենարար  
Բանին :

Լոյս ծագեցաւ ՚ի քէն նստելոցս՝ ՚ի խաւարի,  
քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն :

Լոյն տնկննին ծածկեալ ՚ի ծոց Հօր՝ որ ծա-  
գեցաւ ՚ի քէն մայր եւ կոյս, այսօր իջեալ  
անմարմնական գասուռք հրեղինացն՝ փո-  
խազբեաց զքեզ լուսափայլ ամպովք ՚ի  
լոյն անստուեր : — Բանն անմարմին որ  
՚ի քէն մարմնացաւ եւ ՚ի զիրկս քո բար-  
ձեալ կրեցաւ Մարիամ, այսօր եկեալ  
բազմութեամբ զօրօք հրեշտակացն՝ վերա-  
ցոյց զքեզ հրակերպ կառօք ՚ի լոյսն անլո-  
տուեր :

Լուծիչ անիծից : Տես Անիծից լուծիչ :  
Լուծիչ երկանց : = Դու լուծիչ երկանց,  
բարձող անիծից, ծագումն արեւու լուսոյն  
ճշմարտի որով հերքեաւ խաւարն առաջին,  
օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

== Որ զնախամորն անիծից երկանց լուծեր զգատակնիք, որ զորամական սահմանեաց ծնունդ անախտաբար ծնանելով՝ ՚ի քէն. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

== Որ զգատակնիք երկանց անիծից նախամօրն ելոյծ միածնի Որդւոյ քո ծնընդեամբ կոյսն Մարիամ, այսօր յառաջին յանպատռմ փառոն դարձուցեր սովառ զնախաստեղծն, զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցն մերոց:

**Լուծիչ երկանցն Եւայի:** == Որ ՚ի դասուց մարդարիցից եւ յերջանիկ առաքելոցն օրհնաբանեալ տիրուհին, զլուծիչ երկանցն Եւայի՝ զմայրն կենաց ծնեալն այսօր ՚ի յԱննայէ, բարձր արարէք զծնեալն այսօր զմայր մաքուր Բանին զմիշտ կոյսն:

**Լուսածին ամպ:** == Ուրախացան զօրք երկանից ՚ի վերուսա, քանդի ցողն անապահան ՚ի քէն հեղեալ՝ միշտ կոյս եւ մայր Բանին անտեսութեան լրւածին ամպ, ծագելով ՚ի մեզ զարդարութեան արեգակնակ:

**Լուսապայծառ:** §ես Տապանակ ապլեցուցիչ:

**Լուսաւորեալ:** == Սուրբ Հոգւոյն եկաւորութեամբ ին լրւաւորեալ:

**Լուսեղէն տաճար Աստուծոյ Բանին:** == Ուրախ լեր մայր անձառ լուսոյ Մարիամ սուրբ Աստուածածին, քանդի ՚ի քեզ կրեցեր զուր աստուածութեանն՝ լրւեղէն տաճար Աստուծոյ Բանին, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

**Տես եւ Աստուածածին մայր լուսոյ սուրբ կոյս:**

**Լուսոյ մայր:** §ես Մայր լուսոյ:

**Լուսոյն աշտանակ:** == Ուրախ լեր սիւն հրեցէն՝ լրւսոյն աշտանակ, որ զարարչականն եղականաց լուսոյ ՚ի քեզ տանելով՝ ծագեցեր խաւարելոց:

**Լցեալ անձառեի եօթնարփեան շնորհօք:** == Զոր մաքրեցեր ՚ի բնակութեան քում էակցին Հոգիդ հմարիտ, եւ լցեր ամնաւուելի եօթնարփեան շնորհօք, այսօր գերագոյն հրեղինացն դասեցեր զհողեղէն բնութիւնն, զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցն մերոց:

## Խ

**Խարիսխ յուսոյ հաստատութեան:** §ես Գլաւակամ կենաց:

Խնդա եւ ուրախ լեր անհարսնացեալ մայր,  
քանզի որ 'ի քէն ծնաւ մեղ Աստուած 'ի  
փրկութիւն անձանց մերոց :

Խնդա եւ ուրախ լեր անհարսնացեալ Մա-  
րիամ, քանզի որ 'ի քէն ծնաւ փրկիչ՝ Տէր  
է օծեալ 'ի քաղաքի Պաւթի, զոր միշտ  
փառաւորեն դապք երջանիկ հովուացն :

Խնդա մայր Բանին 'ի Հօրէ ծնեալ նախ քան  
զարուսեակ, որ զլոյն երկնային ծագե-  
ցեր մարդկան զլուծիչ մեղաց մթութեան,  
մաղթեա Բանին փրկել զմեզ 'ի մեղաց  
մերոց :

Խնդա Մարիամ' որ եղեր մայր Քրիստոսի, եւ  
աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ Բանն  
Աստուած, զի փրկեսցէ զմեզ 'ի փորձու-  
թենէ :

Խնդա տաճար Բանին Աստուծոյ : Տես Թար-  
ծող տրտմութեամբ :

Խորանայարկ կամարանման յօրինեցար սուրբ  
կոյս Աստուածածին, զանհասանելի զԲանն  
Աստուած բնաւորապէս անսերմնաբար  
կըեցեր 'ի քում' յորովայնի, անդադար  
երգով զքեզ միշտ մեծացուցանեմք :

Խորան եւ առաջաստ : Տես Աստուածածիմ զե-  
րագոյն երկնից :

Խորան եւ տաճար Աստուծոյ Բանին : Տես Առ  
քեզ ապալիմիմք :

Խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց :  
Տես Աստուածածիմ խորամ :

Խորան Հոգւոյն սրբոյ : Տես չիմմ :

Խորան սրբութեան : — Որ յանէից անմար-  
մնական զօրաց էակ Հայր անսկիզբն, զգու-  
րապետ խմբից նոցա աւետարեր այսօր  
առաքեցեր առ Բանի քո խորան սրբու-  
թեան, աղաչանօք սորա ողորմեա մեղ Աս-  
տուած :

Խորին խորհուրդ անքնին ծածկեալ յազգաց  
յաւիտենին, յայտնեցաւ յամս վերջին 'ի  
փրկութիւն մարդկան սեռին, զոր տեսա-  
նողն ծանուցին կուսին ծնող լինել Բա-  
նին :

Խորհուրդ կենաց եւ մայր կենդանութեան եւ  
առագաստ հրափայլ ծագմամբ, մայր եւ  
աղախին մեծացուցանեմք :

Խորհուրդն անճառ ծածկեալն յազգաց եւ  
յաւիտեանց՝ յայտնեցաւ իջմամբ հրեշտա-  
կապետին այսօր առ կոյսն Մարիամ, զոր  
առ Տէր ունիմք բարեխօս վասն անձանց  
մերոց :

Խորհրդաւոր խորան Բանին Հօր բարձրելոյ :  
Տես Վեժագոյն սերովիլից :

2017

## Ծ

**Յագեցեր զլոյն երկնային:** Տես Խնդրա մայր թաթիթ:

= ԶԱՍՏՈՒԱԺԱԺԻՆՆ եւ զմիշտ կոյսն ան-  
դագար օրհնեսցուք, քանզի ծագեաց մեզ  
լոյս երեսաց եւ փրկիչ անձանց մերոց:

**Յագող արեգականն արդարութեան:** Տես Առ  
տուածածին մայր եւ կոյս:

**Յագող լուսոյն:** = Որ խոնարհեցար յերկնից  
անմեկնելիդ 'ի Հօրէ Որդի Աստուծոյ եւ  
առեր մարմին 'ի սրբոյ կուսէն, հայցմամբ  
ծագողին լուսոյդ եւ մեզ ողորմեա:

**Յագումն արեւու լուսոյն ճշմարտի:** Տես Լու-  
ծիչ երկանց:

**Յածկեալ խորհուրդն ծանուցաւ չորրորդ դա-  
րուն Խաչակաւ, 'ի չորրորդ օր դարձեալ  
հրեշտակն ետ զաւետիսն կուսական, թէ  
լոյսն որ ոչ բովանդակի 'ի քէն մարմնով  
պարունակի, յոր օրհնեցայք ազդ երկրա-  
ծինք՝ տուք օրհնութիւն պատրոյ կուսին:**

**Յածկեալ խորհուրդն յաւիտենին լուցելոյ եւ  
անձառին, 'ի հասանել ժամանակին պար-**

գեւեցաւ մարդկան աղին, էական բնու-  
թիւն Բանին՝ խառնեալ անշփոթ 'ի մեր  
բնութիւն:

**Յաղիկ:** Տես Գերահրաշ ծաղիկ. — Նոր ծա-  
ղիկ:

**Յաղիկ անթառամ:** = Դու ծաղիկ անթա-  
ռամ տոհմի սեպիս մարդկութեան, եւ  
շառաւիդ օրհնութեան նախնոյ ծնողին  
մեր բնութեան, բարեխօսեա Միածնին՝  
Աստուածածին մայր Բանին: Տես եւ Ամ-  
թառամ ծաղիկ:

**Յաղիկն դաշտաց միամայրն Մարիամ:** Տես  
Արմատ տնիկոյն ամմահութեան:

**Յաղիկ վայելու բղխեցեր:** Տես Բղխեցեր:

**Յաղիցար:** = Զանթառամն ծաղկեցար ըզ-  
ծաղիկ' 'ի ժամու տալով զպտուղն: Տես  
Աստուածածին տուբը կոյս:

**Յառ:** Տես Աստուածատունի խնկարեր ծառ:

**Յառ կենաց անմահական պաղոյն:** Տես Էլիմ  
աթոռ:

**Յառ կենաց ծաղկեալ Տիրուհի:** = Այսօր  
ծնաւ մայրն ամուլ գքեղ յարմատոյն Յես-  
սեայ ծառ կենաց ծաղկեալ Տիրուհի, որ  
ետուք մարդկան 'ի ժամու պտուղ զհացն  
կենաց զիջեալն 'ի յերկնից, բարեխօսեա  
Սրբուհի վասն անձանց մերոց:

Ծառ կենաց՝ որ զանմահութեան պտուղն՝ ի քէն ետուր նախնոյ մօրն Եւայի՝ ի մահաբեր երկանցն ազատելով, բարեխօսեաառ Տէր վասն մերոյ փրկութեան:

Ծառ կենաց տնկեալ յադին սուրբ կոյս՝ որ զհայրածինն րղլաեցեր զծաղիկ, եւ ետուր ի ժամու զթրդին պտուղ մարդկան, դրոյ զմարմինն հաշակեալ անմահացան յուսով, վասն որոյ օրհնաբանեմք զքեղ յաւուրքո ծննդեան:

Ծիրանազգեաց հրաշափառագոյն կոյս: =  
Մարգարտատեսիլ եւ Ծիրանազգեաց հրաշափառագոյն կոյս, զոր առեալ Որդւոյ վերափոխեալ դասեաց յանպատում. ի կեանս, վասն որոյ գովելով ասեմք՝ օրհնեալ ես Որդիւ Ծիածին Աստուած:

Ծնանել: = ԶԱՍՏՈՒԱՃՆ անիմալին ծնար:  
= Զամենայն գոյութեանց զստեղծիչն յդացեալ ծնար անճառապէս:  
= Ծնար որպէս մարդ զԱստուածն բուրդից զմարմնացեալն առ ի քէն զանճառ զԲանն՝ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անճանց մերոց:  
= Զբոյսն երկնային առանց սերման ծընար:  
= Ուրախ լեր եւ բերկրեա մայր եւ կոյս,

քանզի ծնեալն՝ ի կուսէդ այսօր վերաստին յարութեամբ ծնաւ ի կոյս գերեզմանէն, զքեղ բարերանեալ մեծացուցանեմք:

= Յորմէ կենդանաստեղծեալ յանեղէն հաստեցան ամենայն եղականքս, անսերմնապէս տղայացաւ յորովայնի քում, եւ ծնաւ առ ի քէն մարմնացեալ Աստուածն բոլորից, զքեղ մեծացուցանեմք արժանապէս երգով աստուածամայր եւ կոյս:  
= Ծնեալն՝ ի քէն ի խաչելեալ եւ ի յաթու փառաց ընդ Հօր, անարգեալ՝ ի մարդկանէ, փառատրութեամբ էութեամբ երկրպագեալ, վասն որոյ զքեղ Աստուածածին եւ կոյս՝ բարերանեմք զմայր եւ զաղախին փրկչին մերոյ:

= Որ զարարչակից Բանն գոյացեալ ստուգապէս աշխարհի ծնար, ուրախ լեր անհարսնացեալ մայր:

= Զանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր յերկրորդին:

= Որ զհուրն Աստուած յորովայնի քում ընկալար եւ ծնար անճառապէս զկենաց գործողն ամենեցուն, բարեխօս զքեղ ու նիմք որ երանեալդ ես ի կանայս:

= Երգեցք որդիք Սիովսի երգ նոր ի ծննդեան մօր Տեառն, քանզի որ ծնաւ

զանժամանակն 'ի Հօրէ ծնեալն, այսօր  
ծնաւ յամուլ արգանդէ, տուք օրհնու-  
թիւն տուողին մեզ զմայրն լուսոյ :  
Ցնծացէք որդիք մարդկան այսօր ծնըն-  
դեամբ սրբութեայ կուսին, քանզի որ տա-  
րաւ զանտանելին յարգանդի անսերմնա-  
պէս՝ այսօր բղխեաց յարմատոյն Յեսսեայ,  
տուք : = Ուրախութիւն աշխարհի ծնաւ  
զՄարիամ ամուլն Աննա աւետեօք զը-  
ւարթնոյն, որ զտուողն օրինաց հնոյն ծնաւ  
մարմնով պարգեւիչ նորոյս կտակի, տուք  
օրհնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ :  
= Ծնար 'ի կուսէ անձառելի Բանդ, 'ի  
Հօրէ ոչ մեկնեցար, օրհնեմք զքեզ անհա-  
սանելի լոյս՝ Աստուած Հարցն մերոց :  
= Զքեզ աղաչեմք անսկղբնակից Հօր Ու-  
դի, որ այսօր նախաստեղծին բնութեամբ  
'ի կուսէն ծնար Աստուած եւ մարդ, ո-  
ղոմեա մեզ :  
= Յայտնի է 'ի Հրէաստանի Աստուած  
եւ 'ի Բեթղեհէմ ծնեալ յայրին, մանուկ  
անժամանակ 'ի Հօրէ, եւ ժամանակաւ  
գոյացեալ՝ ծնեալ լինի Աստուած եւ մարդ :  
= Որ գթացար յերկիր եւ ծնւլը անախս՝  
աղատելով զախտի ծնունդս, Աստուած  
Հարցն մերոց : Տես եւ կոյս :

Ծնող անտանելի Բանին : = Զէր օրհնեցէք,  
բարձր արարէք զօնող անտանելի Բանին  
զմիշտ կոյսն :  
Ծնող արարչին : = Զքեզ պայծառ երկինք  
եւ ամպ լուսեղէն, ծնող արարջն եւ  
մորենի անկեղելի, մեծացուցանեմք :  
Ծնող Բանին : Տես Խորին խորհուրդ :  
Ծնող Բանին : = Քահանայք եւ ժողովուրդք  
տօնախմբողք ծննդեան կուսին, ընդ Յո-  
վակիմայ եւ Աննայի ծնողաց սրբայ ծնողի  
Բանին բարձր արարէք զնա յաւիտեան :  
Ծնող Բանին Տեառն Աստուածոյ : = Զուար-  
ճացիր Սլոմենդ հին հանդիսարան աեսա-  
նողացն, որ բազմագոյն օրինակաք գուշա-  
կեցէր զօնող Բանին Տեառն Աստուածոյ,  
բարձր արարէք զնա յաւիտեան :  
Ծնող եւ աղախին Տեառն : Տես Բարեխօսեա  
անդադար :  
Ծնող Որդւոյն Միածնի : = Որ ողորմեցար 'ի  
մեղս ծնեալ մարդկան Հայր Երկնաւոր ըստ  
մարգարէին, եւ ետուր բնութեանս այսօր  
պարգեւ զկոյսն սուրբ զօնող Որդւոյն  
Միածնի, մաղթանօք սորա Տէր մեզ ողոր-  
մեա :  
Ծնունդ անարտատ : Տես Երիս խորհուրդս :  
Ծնունդ կուսական : = Այսօր զնախամօրն

Երկանց բարձողն կուսական ծննդեամբ գանհարսնացեալ մայրն՝ Միածինն իշեալ փառօք փոխադրեաց յիմանալի եւ յանապատում գերազոյն բնութիւնս, վասն որոյ սրովբէական ձայնիւ քեզ երգեմք սրբութեանց սուրբ զմիշտ փառաբանութիւն:

Որ կուսական ծննդեամբդ 'ի փրկութիւն յայտնեալ, եւ առագեցեր գերիվարս քո քարոզ՝ աւետարանել զկենսաբեր յարութիւնդ:

**Ծնունդ:** = Անսկիզբն Աստուած անձառելի ամբաւ զօրութիւն՝ որ յիսկզբանց յաւետենից լինամարկեցեր զորդիս Ադամայ, գերազոյն այսօր շնորհիւ փայլեալ ցուցեր ծննդեամբ զմայր Միածնիդ քո ընտրելոյ, աղաչանօք սոցա խնայեա 'ի մեզ: — Որ յանից բանիւ գոյացուցեր զաշխարհս ամենայն, այսօր մարդասիրեալ տնօրինաբար 'ի յԱննայէ արկեր հիմունս նորոյ աշխարհի, աղաչանօք սոցա խնայեա 'ի մեզ:

= Որ բարձրացոյց զանկեալ բնութիւնս 'ի քէն ծննդեամբ Որդին յերկինս, զկարուեալս ելից հացիւ եւ զմեծատունն երոյժ ունայն, երանեն ազգ եւ ազինք այսօր զծնեալդ 'ի յԱննայէ:

= Այսօր յայտնեցաւ մեզ բարձրեալն բազմեալ Բանն յանբանից մսուր, գառն եւ երկնաւոր հաց: — Այսօր ցնծան զըւարթունք երկնից տեսանելով զահաւոր զահազին եւ գհրաշալի ծնունդ՝ որ լոյսաշխարհի ցուցաւ: Ընդ իշանել զուարթնոյն 'ի փառաբանութիւն, տեսանէլն ամպ լուսոյ սիւն գործեալ 'ի հրալից վիմին, դասք երջանիկ հովուացն:

**Ծնունդ:** = Անսկիզբնական տեսիլ փառաց քոց տուող որ 'ի մեզ հրաշագործեցաւ՝ երեւելով անձառաբար ծնունդ, այսօր ցնծութիւն յայտնեցաւ տիեզերաց: — Անմարմնական հոգեղինացն երգակցելով բոցեղէն փայլմամբ թափանցիկ հրածին ամպոյն սիւն գործեալ յայրին, այսօր դասակից եղեն հովիւքն հանդիսի վերնոցն: — Ընդհանուր ծաւալեցաւ ծագումն լուսոյ, մոգուցն հետեւելով ասու տեղին գուշակեալ զծնունդ յայրին, անդ մատուցանէին զընծայս աստուածային ծննդեանն:

## Կ

Կաթն: == Բանին Հօր մարմնաբան եւ առագաստ բնակութեան, որ կաթամբ կուսական կերպարեցեր զէակն Բան, բարեխօսեա Միածնին՝ Աստուածածին մայր Բանին:

= Կերակրողին տիեզերաց արբուցեր զքոս սուրբ զկաթն, որ զննչեցեալն մեր վերըստին նորոգէ, զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կանայս:

= Յորմէ զարհուրեալ դողային դասք վերին զուարթնոցն, տղայապէս առընկաւեալ բարձեր 'ի զիրկու, եւ արբուցեր որպէս մայր ստացողին զքեզ զկուսական քո սուրբ զկաթն, զքեզ մեծացուցանեմք արժանապէս երգով աստուածամայր եւ

կոյս:

= Յորմէ զարհուրեալ դողան սրովիքէաշ զունդ ջոկք աթոռոցն, թեւասքօղելով ծածկեն զերեսս իւրեանց, այսօր տղայածածկեն կերպար 'ի կուսական 'ի ստեանցն կերպար մարդասիրապէս, զքեզ լնդ դօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք:

Տես եւ կոյս անապական:

Կատարումն մարգարէից: == Զքեզ կատարումն մարգարէից՝ կուսական քո ծնընդեամբ սրով բնութեանս քակտեցան օշընք, հրաբուն սեռիցն փոխազրեալ 'ի լուսաճեմ խորանան, անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք, եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Կենարար Բանին բնակարան: Տես Բնակարան:

Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս, որով ելք յերկիր աւետեաց հորդաւալ Հոգուով 'ի քեզ տպաւորեալ Բանին, վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք:

Կոյս: == Անսկիզբն Բանն յանսկզբնական 'ի Հօրէ, եւ սկզբնաւորեալ 'ի կուսէն մարմնոյ զքեցմամբ՝ բովանդակելով յորովայնի եւ լնդ Հօր գոլով, եւ սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած եւ մարդ: == Որ զնախագրեալն յառաջազոյն գուշակութեամբ մարգարէիցն կատարեցեր Հայր երկնաւոր տալով զկոյսն 'ի յԱննայէ, Հայր բարեբանեմք Աստուած հարցն մեզքեզ բարեբանեմք:

Իոց:

= Քեզ միայնոյ մօր եւ կուսի մաղթեմք

հայցելով՝ ի քէն՝ բարեխօսեա անդադար  
առ Որդիդ քո եւ Աստուած մեր՝ փրկել  
զմեզ՝ ի փորձութենէ եւ յամենայն վը-  
տանգից մերոց :

Կոյս : = Այսօր անտեսն յէռւթեան Հայր  
՚ի բարձանց երեւելով՝ զճնեալդ՝ ՚ի սրբոյ  
կուսէն գաւանեաց Որդի իւր սիրելի,  
օրհնեալ Տէր Աստուած Հարցն մերոց :

= Այսօր դնելով զսուրբ կրյմն առ դրանն  
գերեզմանին՝ սպասէին եւ ակն ունէին  
Տեառն իսկ ինքնին գոլով, գեր՝ ՚ի վերոյ  
տեսեալ՝ զարարիչն եկեալ բազում հրեշ-  
տակօք, եւ նոցա միաձայնեալ ասէին՝  
օրհնեալ ես ամէնօրհնեալդ՝ ՚ի կանայս :

= Այսօր տեսեալ զսուրբ կրյմն թռու-  
ցեալ յօդս, եւ ամպեղէն կառօքն՝ ՚ի վեր  
Համբարձեալ յերկինս, մտանելով լեր-  
կնային խորանսն ընդ իմաստուն կու-  
սանսն, եւ նոցա միաձայնեալ ասէին,  
օրհնեալ ես ամէնօրհնեալդ՝ ՚ի կանայս :

= Այսօր որ յաթոռ փառաց ընդ Հօր ծը-  
նանի՝ ՚ի սրբոյ կուսէն մարմնացեալ Բանն,  
ծնանելով զտիեզերս յորդեզրութեան շը-  
նորհս :

= Անեղանելի բնութիւն որ յէռւթեանդ  
ես ընդ Հօր՝ ծնար՝ ՚ի սրբոյ կուսէն, զքեղ  
բարեբանեմք արարչակից Հօր :

= Ծնար՝ ՚ի կուսէ անձառ միութիւն,  
անբաժանելի եւ միշտ գոլով՝ ոչ մեկնե-  
ցար՝ ՚ի հայրական ծոցոյ, զքեղ օրհնենք  
Աստուած հարցն մերոց :

= Զծնեալն՝ ՚ի սրբոյ կուսէն օրհնեցէք  
եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

= Թագ հիւսեալ երկնային յեռեալ յա-  
կանց անմարմին, բերեալ պատկ սուրբ  
կուսին յորժամ փոխէր յաշխարհ վերին,  
բարեխօսեա Միածնին՝ Աստուածածին  
մայր Բանին :

= Զծնեալն՝ ՚ի սրբոյ կուսէն ընկալցուք  
՚ի սիրտս մեր հաւատով, որպէս երբեմն  
՚ի գիրկսն Սիմէռին :

= Ի գիրկս մարմնով բարձեալ եղեր՝ ՚ի  
ծերունոյն, որ բանիւ զարարածս բար-  
ձեալ ունիս Քրիստոս՝ որ վասն մեր մար-  
մացար՝ ՚ի սրբոյ կուսէն :

= Որ՝ ՚ի կուսէ անապական թագաւոր  
ծնաւ Քրիստոս, եւ ՚ի հրեշտակաց ան-  
դադար փառաբանի Աստուած, քահանայք  
օրհնեցէք, բարձր արարէք զնա յաւի-  
տեան :

= Հրաշափառ ծնունդ քո՝ ՚ի սուրբ կու-  
սէն այսօր ցուցաւ աղջի մարդկան, ան-  
սկզբնակից Բանդ էակից Հօր :

= Եոր սքանչելիք եղեն այսօր՝ ՚ի Բեթ-

զեհէմ՝ի յայրին, կուսի ծնանել Աստուած  
եւ մարդ՝ անապական մնալով կուսական  
որովայնին, զի տեսին մարմով ծնեալ  
գիանն Աստուած :

= Ա է Բանն Աստուած, որ յառաջ քան  
զյափիտեանս անձառելի գալստեամբն իւշ  
րով յայտնեցաւ տիեզերաց ծնեալն ՚ի  
կուսէն :

Կոյս աղախին եւ մայր : = Այսօր յուսա-  
պատար խնդութեամբ եւ յաւէժարար  
հնչմամբ նուագեմք քեզ հողեղէնքս ընդ  
հրաբուն սեռիցն, տօնախմբելով զյիշա-  
տակ կուսի ալախնոյ եւ մօր քո, վասն  
որոյ հրճուղական ձայնիւ քեզ երդէ ե-  
կեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն :

Կոյս անապական : = Ուրախ լեր Մարիամ  
կոյս անապական, զի ՚ի հայրական ծոցոյ  
անմեկնելի Որդին ՚ի քո յանձն առնու  
բնակիլ յորովայնի :

= Այսօր զանապական կոյսն որ զքեզ  
մաքուր կաթամբ կերակրեաց, ՚ի զգայա-  
կան փոխեալ բնութեանց յիմանալեացն  
խորանս :

= Որ զանէծս երկանց ծննդեան նա-  
խամօրն ելոյժ՝ անսերմնապէս ծնանելով  
յանապական կուսէն, երգով զՏէր օրհ-

նեցէք, բարձր արարէք զնա յաւիտեան :  
Տես եւ չարում երկմայլիմ :

Կոյս անարատ : = Դուռն փակեալ՝ զքեզ ե-  
զեկիէլ յառաջագոյն ծանոյց կոյս անա-  
րատ՝ ընդ որ եմուտ անտեսն յէից, Բանն  
անմալմին որ ՚ի Հօրէ, եւ ել մարմով՝ ան-  
խախտելի մնալով կուսութեանդ, հոգեւոր  
երգով զքեզ միշտ մեծացուցանեմք :

= Զթագաւորն անմահ Քրիստոս զէակից  
Հօր եւ Հոգւոյ՝ որ տղայացաւն այսօր յա-  
նարատ ՚ի սուրբ կուսէն՝ փրկելով զմեզ,  
ժողովուրդք օրհնեցէք եւ բարձր արարէք  
զնա յաւիտեան :

Կոյս անբիծ : Տես Մաքուր եւ ամբիծ կոյս :

Կոյս անհարսնացեալ, մայր անարատ Էմիմա-  
նուէլի : = Զքեզ ունիմք բարեխօս կոյս  
անհարսնացեալ, մայր անարատ Էմիմա-  
նուէլի, տաճար Բանին Հօրն երկնաւորի,  
օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

Կոյս՝ Աստուածորդւոյ մայր : = Տօնելով  
զյիշատակ կուսի՝ աստուածորդւոյ մօր,  
հրճուին հրեշտակք ՚ի յերկինս եւ ցնծան  
դասք առաքելոց եւ մարգարէից ընդ կու-  
սական տօնս. ողորմեա մեզ Աստուած :

Կոյս բերկրեալ : = Ուրախութիւն տրամե-  
ցելոյ բնութեանս ըերկրեալ կոյս Մա-

թիամ, զոր ողջունաբեր աւետեօք կրեցեր  
զտուողն՝ ի քեզ զօրէնս ողջունի, առ նա  
միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:  
**Կոյս երջանիկ:** = Որ ՚ի լուսնն անձառից  
՚ի քէն յայտնեալ ծածկեալ խորհրդոյ՝ ՚ի  
քէն մաքրելոյ երջանիկ կուսին Հօր զօ-  
րութիւն հովանաւորեալ, զոր առ քեզ  
ունիմք բարեխօս վասն անձանց մերոց:  
**Կոյս եւ աղախին Քրիստոփ:** = Որ զթա-  
գաւորն ամենեցուն յորովայնի քում կրե-  
ցեր՝ Սրբուհի մայր եւ կոյս եւ աղախին  
Քրիստոփի, բարեխօսեա առ Տէր վասն  
մերոյ փրկութեան:

**Կոյս եւ մայր:** §Ես թնակարան աստուածային:  
**Կոյս, միշտ կոյս:** = Անձառ անօրէնութեամբ  
՚ի միշտ կուսէն՝ զանիծիցն բարձեր դժա-  
տապարտութիւն, եւ կոմաւոր խաչելու-  
թեամբ քո Տէր կեանս շնորհեցեր՝ անոխա-  
կալ փրկիչ, առաւել վերորշնեմք եւ երկրո-  
պագեմք՝ որ ուրախութիւնդ ես երկնի եւ  
երկրի Քրիստոս թագաւոր:  
= Այսուած է որ ծնաւ ՚ի միշտ կուսէն  
՚ի փրկութիւն ազգի մարդկան, լուսաւո-  
րելով զտիեղերս ՚ի գիտութիւն ճշմար-  
տութեան, եւ բարեբանեմք զնորա բա-  
րեգթութիւնն:

= Բղխեսցէ երկիր զողորմութիւն, եւ  
նորացուսցէ զօրհնութիւն, քանզի Աս-  
տուած ծննդեամբ՝ ՚ի միշտ կուսէն ՚ի  
փրկութիւն մեզ յայտնեցաւ, աւերեաց  
զգժոխս:  
**Կոյս յետ ծննդեան:** = Այսայնոյ քեզ ՚ի կա-  
նայս կոյս յետ ծննդեան երգեմք զօր-  
հնութիւն, զի լոյս ՚ի լուսոյ քեւ յայտնե-  
ցաւ աշխարհի եւ զնախամօրն երարձ զա-  
նէծս անձառ ծննդեամբն ՚ի քէն:  
**Կոյս սուրբ:** = Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ  
երգեաց սրբոյ կուսին աւետիս՝ բերկրեաց  
սոսելով, որ ծնաւ զփրկիչ անձանց մերոց:  
= Այսօր Գաբրիէլ հրեշտակն ցնծու-  
թեամբ երգեաց առ կոյսն սուրբ, ասէ՝  
ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ: —  
Այսօր աւետիք հրեշտակապետին ցնծու-  
թեամբ լցին զկոյսն սուրբ, քանզի էջ  
Միածինն յարգանդ կուսին: — Այսօր  
տիեզերք պայծառացան աւետիօք սրբոյ  
կուսին, քանզի Բանն մարմին եղեւ եւ  
բնակեաց ՚ի մեզ:  
= Այսօր լցաւ խոստումն Աստուծոյ առ  
նահապետսն՝ ՚ի զաւակի նոցին օրհնիլ  
ամենայն ազանց, զի յարմատոյ նոցին  
բղխեաց կոյսն սուրբ՝ որ ծնաւ զԲանն

բարձող մեղաց նախահօրն . վասու տա-  
յուք տուռղին մեզ զօրհնեալն 'ի կանայս :  
= Զծնեալն 'ի սրբոյ կուսէն գիսստո-  
վանեալ թագաւորն , զերկրպագեալն 'ի  
մոդուցն , օրհնեցէք եւ բարձր արարէք :  
= Զծնեալն 'ի սրբոյ կուսէն եւ յան-  
բանից մսուր եղեալ զհաց կենաց՝ միա-  
բանութեամբ օրհնեցէք եւ առաւել բարձր  
արարէք զնա յաւիտեան :  
= Զծնեալն 'ի սուրբ 'ի կուսէն , զերեալն  
յանբանից մսուր , եւ զմկրտեալն 'ի սուրբ  
Յորդանան , օրհնեցէք զովեցէք եւ բարձր  
արարէք զնա յաւիտեան : Տես եւ կոյս :  
Կոյս սրբուհի : = Այսօր տիրամայր Սրբուհի  
կոյմն աւանդեալ զարբանեալ հոգին 'ի  
ձեռն հրեշտակալան դասուցն , որպէս գե-  
րարիի փայլեալ՝ ահեղիցն նմանեալ հրե-  
շտինաց դասուցն , վասն որոյ հրճուռղական  
ձայնիւ քեզ երգէ Եկեղեցի սուրբ զնոր  
զրդնաբանութիւն :

Կոյս օրհնաբանեալ : = Հոյք վերին զօրացն  
ինեալ՝ շորչ զկուսին պար առեալ , գերգո  
օրհնութեան եղանակեալ՝ քաղցր ձայնիւ  
ակումբ առեալ , զեռահիւսեալն նուագեալ՝  
զմիտէրութիւնն երգաբանեալ : Զայնակից  
նոցին եղեալ՝ դասք երջանիկ պետացն

ընտրեալ , 'ի Հոգւոյն վերաբերեալ՝ որք  
յընդհանուր աշխարհ սփռեալ , անմար-  
մոցն համաձայնեալ զկոյսն սուրբ օր-  
հնաբանեալ :  
Կոչեցեալ 'ի ծնողութիւն Որդւոյն Աստուծոյ :  
= Տապանակ ապրեցուցիչ եւ տաղաւար  
արբահամեան աստուած ընկալ , այսօր Մա-  
րիամ լուսապայծառ միածին ծնունդ  
յայտնեալ ծնողաց՝ 'ի ծնողութիւն քո կո-  
չեցեալ Միածին Որդի Աստուծոյ , անդա-  
դար երգով սոքօք զքեզ միշտ մեծացու-  
ցանեմք :

Կուսական ծնունդ : = Որ 'ի հրեզէն աթոռ  
ընդ Հօր ես բնակեալ եւ 'ի հրեշտակաց  
սպասաւորեալ , այսօր կամաւ Հօր 'ի յեր-  
կրի երեւեցար մարմուկ կուսական ծնուն-  
դեամբ , զքեզ ընդ զօրս անմարմոցն ան-  
դադար օրհնաբանեմք :

Կուսական որովայն : = Այսօր Բանն 'ի Հօրէ  
անմեկնելի եւ անճառելի խորհրդով՝ 'ի  
ձեռն կուսական որովայնի տնօրինաբար  
յերկրի երեւեալ : — Մանուկ անժամա-  
նակ 'ի Հօրէ՝ անեկրմն 'ի կուսէ 'ի գլուխ  
մօր գգուեցաւ այսօր արարիչն երկնի եւ  
երկրի : — Որ մաքրեաց զՅորդանան եւ  
լուաց զմեղս աշխարհի , զոր օրհնեն ան-

գաղար արարածք ամենայն դէակիցն Հօր  
եւ Հոգւոյն :

**Կուսին նախնոյ մօրն Եւայի յորմէ Աղամն**  
հին պարտի, բարձան անէծքն տրտմական՝  
քո սուըթ Ծննդեամբ կոյս Մարիամ, ա-  
ղաչեա զքո Ծիածինն թողուլ զմելու որ-  
դւոց նոցին, յոր օրհնեցայք ազգ երկրա-  
ծինք՝ տուք օրհնութիւն պաղոյ կուսին :

**Կուսութեանց մայր : = Այսօր զաղատիչն**  
յանցանաց նախամօրն զկուսութեանց  
մայրն փոխազբեաց Բանն Աստուած, յեր-  
կնայինսն դասելով յաստուածակերտ խո-  
րանսն եւ յանպատում 'ի կեանս, վասն  
որոյ հրճուզական ձայնիւ քեզ երգէ Ե-  
կեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն :  
= Որ անապական մարմնով ծնար 'ի սուրբ  
կուսէն եւ 'ի խանձարուս պատեցար ար-  
կողդ զլոյս եւ 'ի մսուր հանդեար, այսօր  
զկուսութեանց զմայրն հանգուցեր 'ի լու-  
սեղէն խորանս, աղաչանօք մօր քո ողոր-  
մեա մեզ Որդի Աստուծոյ :

**Կուսութեանց պարծանք : = Ուրախացիր**  
Աստուածածին որ կուսութեանց ես պար-  
ծանք եւ մայր հաստատութեան մարդկան,  
օգնական եւ չնորհ աշխարհի, Մարիամ  
մայր եւ աղախին փրկչին մերոյ :

Կուսութիւն անարատ եւ անխախտելի : =  
**Անկէզ մորենի եւ տաճար ընդհանուր լու-**  
սոյն, անարատ եւ անխախտելի կուսու-  
թիւն, մայր եւ աղախին մեծացուցանեմք :  
Կուսութիւն յետ ծննդեան մնալով անապա-  
կան : Տես Երիս խորհուրդ :

**Կրել : = Զանշէջ հուր աստուածութեանն 'ի**  
քեզ տարեալ կրեցեր, որով բնութեանս  
կիզեալ շիջաւ կրից բոց : Տես Անապական  
տաճար :

= Որ զանհասանելի զՏէրն յորովայնի  
քում կրեցեր : Տես Ամենագուելի :

= Կրեցեր անսերմապէս յանսպակա-  
նումն 'ի յարգանդի քում որպէս աղա-  
խին զՏէր : Տես Աստուածածին զբեզ խոս-  
տովամեալ :

= Զանձառելի զլոյս աստուածութեանն  
անօրինաբար կրեցեր 'ի քում յորովայնի  
Մարիամ մայր եւ կոյս, օրհնութեամբ  
զքեզ մեծացուցանեմք :

= Ի մասնաւոր լուսոյն զարհուրեցան  
գառք առաքելոցն, այլ 'ի քեզ բովանդակ  
կրեցեր զհուր աստուածութեանն Մա-  
րիամ մայր եւ կոյս, օրհնութեամբ զքեզ  
մեծացուցանեմք :

= Որ զբանն Աստուած անսերմն յղու-

թեամբ յարգանդի կրեցեր : Տես Աստուածածիմ եւ Սըռումի :  
 = Որ զմարմնացեալն տիրաբար 'ի յուրավայնի քում կրեցեր, ուրախ լեր անհարսնացեալ մայր :  
 = Որ զանտանելին յէից 'ի յարգանդի անապականաբար կրեցեր, ուրախ լեր անհարսնացեալ մայր :  
 = Որ զարարչակիցն Հօր զիսկզբանէ Բանն Աստուած յորովայնի քում կրեցեր, օրհնեալ ես յաւիտեան :

## Ղ

Համբարձեալ : = Այսօր տեսեալ զսուրբ կոյսն թռուցեալ յօդս, եւ ամպեղէն կառօքն 'ի վեր համբարձեալ յերկինս, մտանելով յերկնային խորանան ընդ իմաստուն կուսանսն, եւ նոցա միաձայնեալ ասէին 'օրհնեալ ես ամենօր զնեալդ 'ի կանայս :

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ՝ յուրախութիւն արտմեցելոցն 'ի ճաշակմանէ ծառոյն զիտութեան, Սըռուհի անարատ ամենեքեան զքեզ մեծացուցանեմք :

Հանգիստ աշխատելոց : Տես Աղբիւր ես ծաշրաւեաց :  
 Հանդիսարան մարգարէից : Տես Գրաւական կննաց :  
 Հարսն : = Ի Կիբանանէ դիմեալ հարսն զգեցեալ այսօր, զարեգակն արկեալ զքեր եւ ընդ ոտիւք զլուսինն ստուերատեսակ :  
 Տես ի բարձրութիւնս :  
 Հարսն անփորձ : Տես Երկնայիլմ դուռմ :  
 Հարսն Երկնային : = Ուրախ լեր հարսն Երկնային կոյս անսպական, քանզի Երկնայինոցն զքեզ այսօր ընկալեալ՝ տօնէին ուրախութեամբ, ընդ որս եւ մեք Երգեաց զուք քեզ օրհնութիւն մայր Տեառն :  
 Հարսն Երկնաւոր : = Հարսն Երկնաւոր, մայր եւ յետ ծննդեան միալով կոյս : Տես ի լեռմէ :  
 Հարսն Երկնից : = Մաքուր աղաւնի եւ հարսն Երկնից Մարիամ, տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին, քեզ Երանեին ամենայն աղինք :  
 = Յերկրէ Երկնից հարսն ընծայեալ : Տես Աստուծածիմ անհարսնացեալ :  
 = Յնծա եւ զուարձացիր հարսն 'ի յերկրէ Երկնից, քանզի այսօր Երկնայինոցն իջեալ տային քեզ զաւետիս յարութեան

Միածնի Որդւոյ քո, զքեզ բարեբանեալ  
մեծացուցանեմք: Տես եւ Ապալիթիմք՝ ի  
քո բարեխօռութիւնն:

Հարսն լնծայեալ յերկրէ յերկինս՝ յոր համը  
բառնամիք առ քեզ զհոգիս, յօր լսելոյ քո  
զաւետիս՝ խնդրեա լինել մեզ լսելիս ըզ-  
ձայն աւետեաց քո Միածնին՝ եթէ եկայք  
օրհնեալք Զօր իմ, յոր օրհնեցալք աղդ  
երկրածինք՝ տուք օրհնութիւն պաղոյ կու-  
սին :

Հեղեր զցողն կենաց յերկիր բանաւոր : Տես  
Աստուածածիմ ամպ լուսաւոր :

Հիմն Եկեղեցւոյ : §Ես Յօդ քաղցրածաւալ:

Հիմն եղեր Եկեղեցոյ, խորան եղեր Հոգեւոյն  
սրբոյ, 'ի հրեշտակաց սպասաւորեալ՝ Պա-  
բիթէլ քեզ աւետեաց, ազգ եւ ազինք զքեզ  
մեծացուցանեմք :

Հոգին սուրբ Եկեղյէ 'ի քեզ եւ զօրութիւն  
բարձրելոյն հօվանի լիդի 'ի վերալ քո:

Հոգւոյն զքեւ հովանացեալ միայն Սրբուհի,  
ծնար զԲանն Աստուած զանձառելոյ Հօր  
ծնունդ, եւ յայտնեցաւ միութիւն Երրոր-  
դութեանն :

Հոգւոյն սրբոյ տուն եւ տաճար : §Ես Մարդունից :

$\sum_{\text{զայուսի պայման}} := \text{Յնորհագարդ փառօք}$

փայլեալ՝ որպէս զմայր քո միշտ գովեալ,  
՚ի մարդկանէ ով քատակեալ հոգեւով պայ-  
ծառ արփւոյ նմանեալ, որպէս փայլակն  
բորբոքեալ՝ յերկնաւորաց վերաբերեալ:

**Հողանիւթեայ տաճար :** = Որ 'ի կառա քե-  
րովլեէից բազմեալ լոյս քան զարեւ յա-  
ռաջ, 'ի հողանիւթեայ հանեցար այսօր  
տաճարի բազմիլ փառաց մաքրագրդեալ  
որովայնի, աղաչանօք սորա ողորմեա մեզ  
**Աստուած :**

Հովանացեալ սուրբ Հոգևոյն՝ ի վերայ քո  
սուրբ կոյս Մարիամ, որ ծնաբ մարմնով  
բնան Աստուած :

= Հոգւոյն սրբոյ հովանացեալ զքեւ Աստուածածին, մարմնացեալ Հօր հաճութեամբ զՈրդին Միածին մեղ՝ ի փրկութիւն:

== Որ 'ի ստուեր ճշմարտութեան խօսեալ  
յօրէնս տեսանողօք, այսօր 'ի գլուխ զրե-  
լոց նոցին հովանացեալ սրբոյ կուսին 'ի  
բնակութեան քում էակցին, աղաչանօք  
սորա ողորմեա մեզ Աստուած :

**Հովանառութեալ:** = Աղաչեմբ գերեզ սուրբ  
կոյս Մարիամ Աստուածածին, բարձրե-  
լոյն զօրութեամբն հովանառութեալ, եւ  
սուրբ Հոգուոյն եկաւորութեամբն լուսա-

ւորեալ . որ զամենայն գոյութեանց զըստեղծիչն յլացեալ ծնար անձառապէս , մարմնացելոյն առ ՚ի քէն բարեխօսեակեցուցանել զանձինս մեր :  
= Որ ՚ի լրումն անձառից ՚ի քէն յայտնեալ ծածկեալ խորհրդոյ՝ ՚ի քէն մաքրելոյ երջանիկ կուսին Հօր զօրութիւն հովանաւորեալ , զոր առ քեզ ունիմք բարեխօս վասն անձանց մերոց :  
Հոտ անմահութեան ծննդոցս Եւայի : Տես Գերամիրաշ ծաղիկ :  
Հուրն կենդանի որ ՚ի մարենին վառեցաւ՝ զոր անվեսա յարգանդի քում կրեցեր Եւ ծնար Աստուած Եւ մորդ , զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ Ես՝ մեծացուցանեմք :  
Հրաշագեղ ծնեալ ՚ի յԱննայէ : = Դրախտ աստուածային Եւ արեւելք իմանալի , այս օր Մարիամ հրաշագեղ ծնեալ ՚ի յԱննայէ՝ ՚ի մայրութիւն քո հրաւիրեալ Քրիստոս Որդի Աստուածոյ , անդադար երգով սորօք զքեզ միշտ մեծացուցանեմք :  
Հրաշալի Եւ Հրաշագործ : = Ծագումն հրաշալի որ անյայտ էր ՚ի մէնջ Եւ Բանն հայրական անըմբանելի , հուր փայլակնացեալ Եւ ՚ի մարմնի բնակեցաւ՝ անվեսա պահելով զարարածս ամենայն : — Ծագումն

հրաշագործ որ ՚ի կուսէն ծագեցաւ , ճառագայթելով զարարածս ամենայն , Երկինք ցնծային Եւ Երկիրս ուրախանայր Եւ Քրիստոս Աստուածու ընդ մարդկան շըրջեցաւ : Տես Եւ Ազրիւր Ես ծարաւեաց :  
Հրաշափառագոյն կոյս : = Մարգարտատեսիլ Եւ ծիրանագեցաց հրաշափառագոյն կոյս , զոր առեալ Որդոյ վերափոխեալ դասեաց յանպատում ՚ի կեանս , վասն որոյ գոյվելով ասեմք՝ օրհնեալ Ես Որդիդ Միածին Աստուած :  
Հրաւիրեալ : Տես Հրաշագեղ :

## Զ

Զայնիւ առ քեզ Տէր պաղատիմք Եւ առաջի անկանիմք , աղաշանօք Աստուածածնին ՚ի մէնջ զբոց հնոցին , տուր արտասուօք զմելոս ջնջել Եւ վերատին զմեզնորոգել , յոր օրհնեցայք աղդ Երկրածինք՝ տուր օրհնութիւն պազայ կուսին :  
Հոյլ ոսկի : Տես Աշտանակ :

## Ճ

Ճանապարհ արքայութեան : = Զքեզ դուռն  
երկնից եւ ճանապարհ արքայութեան,  
բարձօղ անիծից եւ սրովբէ հողեղէն՝ մե-  
ծացուցանեմք :

Ճեմարան Բանին Աստուծոյ : § Ես Աշտանակ:  
Ճշմարիտ արեւելք արեգականն արդարու-  
թեան : = Դու ճշմարիտ արեւելք արե-  
գականն արդարութեան, յորմէ ծագեաց  
փրկութիւն տիեզերաց, միաբանական  
ձայնիւ երգով մեծացուցանեմք :

## Մ

Մայր : = Զանձառելի լուսոյ մայր, եւ զբնա-  
կարան անսկզբնակից Որդւոյն՝ օրհնու-  
թեամբ մեծացուցանեմք : Զանհաս տնօ-  
րէնութեան մայր, եւ զանձնաւոր տաճար  
Աստուծոյ Բանին օրհնութեամբ մեծա-  
ցուցանեմք : Զբոլորից փրկութեան մայր,

որ զանտանելին յէից 'ի յարգանդի ե-  
րարձ՝ զնա ամենեքեան օրհնութեամբ մե-  
ծացուցանեմք :

= Զքեզ ոչ միայն որդիք մարդկան, այլ  
եւ վերին զօրութիւնք, դասք անմարմնոց  
հողեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշ-  
տակաց գոհաբանեն եւ վերօրհնեն եւ  
փառաւորեն զմայր եւ զաղախին փրկչին  
մերոյ :

= Ուրախ լեր Աստուածածին՝ յոյս եւ  
փրկութեան մայր, զքեզ ընդունող լուսոյ՝  
մեծացուցանեմք : — Զքեզ լուսոյ մայր եւ  
կոյս, զքեզ զանձկ կենաց աստուածային  
ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք : —  
Մայր սուրբ անարատ լուսոյն, հրեշտա-  
կային օրհնութեամբ պատուեալ զքեզ  
մեծացուցանեմք :

= Որ զթագաւորն ամենեցուն յորովայնի  
քում կրեցեր՝ Սրբուհի մայր եւ կոյս եւ  
աղախին Քրիստոսի, բարեխօսեա առ Տէր  
վասն մերոյ փրկութեան :

= Որ 'ի լուսմն անձառ ծննդեանն ըստ  
Եսայեայ քո 'ի կուսէն, այսօր հրաշիւք  
Հօր Միածին յամուլ մօրէ զմայրն քո  
պարզեւեցեր, զքեզ բարեբանեմք Աս-  
տուած հարցն մերոց :

§ Ես եւ Մարիամ . — Կոյս :

Մայր ամենօրհնեալ : == ԶՏէր ընդ Որդւոյն  
Միածնի զմայրն ամենօրինեալ Մարիամ  
գովելով բարձր արարէք զնա յաւիտեան :

Մայր անարատ :

Մայր անարատ անհայր ծննդեան : == Յառաջ  
քան զարուսեալ անմայր ծնունդ Հօր ՚ի  
յերկինս , այսօր ընտրեցեր իմաստու-  
թեամբ մայր անարատ անհայր ծննդեան  
քր ՚ի յերկրի , աղօթիւք սորա ողորմեա  
մեզ Աստուած :

Մայր անարատ Էմմանուէլի : == Զքեզ ու-  
նիմք բարեխօս կոյս անհարսնացեալ , մայր  
անարատ Էմմանուէլի , տաճար Բանին Հօրն  
երկնաւորի . օրհնութեամբ զքեզ մեծացու-  
ցանեմք :

Մայր անհաս տնօրէնութեան :

Մայր անհարսնացեալ : == Որ զմարմնացեալն  
տիրաբար ՚ի յորովայնի քում կրեցեր ,  
ուրախ լեր անհարմնացեալ մայր :  
== Ուրախ լեր կոյս անարատ՝ մայր ան-  
հարսնացեալ , քանզի որ ՚ի քէն ծնաւ Որ-  
դին Միածնի , վայր իշեալ յերկնից այսօր ,  
վերածեաց զքեզ պահնչելի փառօք :

Մայր անճառ լուսոյ : == Ուրախ լեր մայր  
անճառ լուսոյ Մարիամ սուրբ Աստուա-  
ծածին , քանզի ՚ի քեզ կրեցեր զհուր աս-

տուածութեանն՝ լուսեղէն տաճար Աստու-  
ծոյ Բանին , առ նա միշտ բարեխօսեա  
վասն անձանց մերոց :

== Ուրախ լեր մայր անճառ լուսոյ սուրբ  
Աստուածածին , քանզի առ ՚ի քէն ծն-  
գեաց մեզ լոյս ՚ի լուսոյ եւ զխաւարն  
անգիտութեան փարատեաց անստուեր  
լուսովին իւրով :

Մայր անճառելի լուսոյ :

Մայր անտանելոյն : == Արեամբ գառինն  
անարատի փրկեալ ժողովուրդք , յաւուր  
ծննդեան մօր անտանելոյն գովեցէք  
զՄիածնն որ համեցաւ առնուլ մարմին  
անսերմն ՚ի նմանէ , յոր օրհնեցայք յա-  
նիծից նախնոյն :

Մայր Աստուածորդւոյ : == Տօնելով զյիշատոակ  
կուսի Աստուածորդւոյ մօր՝ հրճուին հրեշ-  
տակք ՚ի յերկինս եւ ցնծան դասք առա-  
քելոց եւ մարգարէից ընդ կուսական  
տօնս , ողորմեա մեզ Աստուած :

Մայր Աստուածոյ : == Որ յիմանսալի խորանսդ  
բարձրացոյց զքեզ մայր Աստուածոյ ան-  
ճառելի փառօք միածին Որդին , առ նա  
միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց :

Մայր Բանին : == Այսօր գունդք առաքե-  
լոցն եւ պարք նախատեսացն յաւուր

Ճննդեան մօր Բանին երգեն զփառս 'ի  
բարձունս :

**Մայր** Բանին Աստուծոյ : = Այսօր զուար-  
ճացան հրեշտակը 'ի յերկինս՝ ընդունելով  
յերկրէ զմայք Բանին Աստուծոյ յիմանալի  
խորանս անմահից :

**Մայր** Բանին ծնօղ : = Յառատարուղիս շնոր-  
հաց Հոգւոյն լուսազարդեալ աղջք հե-  
թանոսաց, յառուր ծննդեան մօր Բանին  
ծնօղի՝ զփառակից Որդւոյ զՀոգին բարե-  
բանեցէք հոգեւոր երգով, որ մաքրազար-  
դեաց զմարմնաբան Որդւոյն :

**Մայր** Բանին տնտեսութեան : = Ուրախա-  
ցան զօրք երկնից 'ի վերուստ, քանզի  
ցօղն անապական 'ի քէն հեղեալ միշտ  
կոյս եւ մայր Բանին տնտեսութեան լու-  
սածին ամպ՝ ծագելով 'ի մեղ զարդարու-  
թեան արեգակն :

**Մայր** եւ աղախին փրկչին :

**Մայր** եւ բնակարան աստուածութեանն :

**Մայր** եւ կոյս :

**Մայր** եւ կոյս՝ աղախին Քրիստոսի, որ բա-  
րեխօսդ ես միշտ աշխարհի, քեզ երա-  
նեն ամենայն աղինք :

**Մայր** եւ կոյս եւ աղախին Քրիստոսի :

**Մայր** եւ յետ ծննդեան մեալով կոյս :

**Մայր** Եմմանուէլի : = Զքեզ մայր Եմմա-  
նուէլի, մարգարէին յառաջ գուշակեալ,  
ազգ մարդկան կենդանեաց մեծացուցա-  
նեմք :

**Մայր** լուսոյ : = Այսօր աստեղք եւ լուսին  
ընդ արեւու հրճուելով՝ գովին վլոյսն 'ի  
Հօրէ յաւուր ծննդեան լուսոյ մօրն :  
= Աստուածածին մայր լուսոյ, արեգա-  
կանն արդարութեան արեւելք : Տես Աս-  
տուածածին :

= Մայր լուսոյ Մարիամ սուրբ կոյս, որ  
վլոյսն առ 'ի Հօրէ ծնար մարմուկ, եւ  
եղեր արեւելքը արեգականն արդարու-  
թեան, հոգեւոր երգով զքեզ Սրբուհի  
մեծացուցանեմք :

**Մայր** լուսոյ եւ առագաստ Աստուծոյ Բանին :  
= Զքեզ ամենօրհնեալ Աստուածածին,  
մայրով լուսոյ եւ առագաստ Աստուծոյ  
Բանին՝ մեծացուցանեմք :

**Մայր** լուսոյն՝ Մարիամ անհարսնացեալ՝ օրհ-  
նեալդ 'ի կանայս :

**Մայր** խաչեցելոյն՝ զի՞ լսա յուսահատեալ,  
քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ :

**Մայր** կենաց : = Որ 'ի դասուց մարդարէից  
եւ յերջանիկ առաքելոցն օրհնաբանեալ  
Տիրուհին, զլուծիչ երկանցն Եւայի,

զմայրն կենաց ծնեալն այսօր՝ի յԱննայէ,  
բարձր արարէք զծնեալն այսօր զմայր  
մաքուր Բանին զմիշտ կոյսն:

**Մայր կենդանութեան:** = Խորհուրդ կենաց  
եւ մայր կենդանութեան եւ առագաստ  
հրափայլ ժագմամբ, մայր եւ աղախին  
մեծացուցանեմք:

**Մայր կուսութեամբ:** = Տեսին դասք իմաւ-  
նալի զօրութեանց զԱստուած մարմնով  
առ՝ի քէն ծնեալ, իսկ եկեղեցի Որդւոյ  
քո Աստուածածին գքեղ խոստովանի, որ  
միայն կուսութեամբ ես մայր:

**Մայր կուսութեան:** = Զքեղ մայր կուսու-  
թեան եւ յզութեան լուսոյ, եւ առագաստ  
անձառելոյ բնակողին՝ի քեղ վիսայա-  
ցեալ Բանին, անդադար երգով մեծացու-  
ցանեմք:

**Մայր կուսութեանց:** = Որ յամենայնի ես  
լցուցիչ բարեխնամ սուրբ Հոգի, այսօր  
պարգեւօք հանգուցեր յանպատում՝ի  
կեանս զկուսութեանց զմայրն, զոր միշտ  
ունիմք բարեխօս առ քեղ Տէր Աստուած  
հարցն մերոց:

= Այսօր զազատիչն յանցանաց նախա-  
մօրն զկուսութեանց մայրն փոխադրեաց  
Բանն Աստուած, յերկնայինսն դասելով

յաստուածակերտ խորանսն եւ յանպա-  
տում՝ի կեանս, վասն որոյ հրմուողա-  
կան ձայնիւ քեղ երգէ Եկեղեցի սուրբ  
զնոր զօրհնաբանութիւն:

= Որ անապական մարմնով ծնար՝ի  
սուրբ կուսէն եւ՝ի խանձարուրս պատե-  
ցար արկողդ զլոյս եւ՝ի մսուր հանգեար,  
այսօր զկուսութեանց զմայրն հանգուցեր  
՝ի լուսեղէն խորանս, աղաչանօք մօր քո  
ողորմեա մեզ Որդի Աստուծոյ:

**Մայր հաստատութեան մարդկան:** = Ուրա-  
խացիր Աստուածածին որ կուսութեանց  
ես պարծանք եւ մայր հաստատութեան  
մարդկան, օգնական եւ շնորհ աշխարհի  
Մարիամ մայր եւ աղախին փրկչին մերոյ:

**Մայր մաքուր Բանին:** = ԶՏէր օրհնեցէք,  
բարձր արարէք զծնեալն այսօր զմայր  
մաքուր Բանին զմիշտ կոյսն:

**Մայր Միածնին:** = Անսկիզբն Աստուած  
անձառելի անբաւ զօրութիւն՝ որ յիսկըզ-  
բանց յաւիտենից խնամարկեցեր զորդիս  
Աղամայ, գերագոյն այսօր շնորհիւ փայ-  
լեալ ցուցեր ծննդեամբ զմայր Միածնիլդ-  
քո ընարելոյ, աղաչանօք սոցա խնայեա  
՝ի մեզ:

**Մայր սուրբ անարատ լուսոյն,** հրեշտակային

օրհնութեամբ պատուեալ զքեղ մեծացուշ  
ցանեմք :

**Մայր սուրբ սքանչելի լուսոյն,** որ զԱստուածն  
ամենայն յաւիտեանց յորովայնի քում  
կրեցեր, եւ ցնծութիւն աշխարհի ծնար  
զիանն Աստուած, աղաչեմք : **Մայր սուրբ  
բարեխօսեա :**

**Մայր ստեղծողին :** = Ստեղծողին մայր եւ  
հնութեան կերպի նորոգողին՝ քեղ երաւ  
նիցեն աղդ եւ աղինք ամենայն :

**Մայր սրբութեան՝ բարձրագոյն սերովբէից,**  
զանտեսն ինքեանց 'ի քեղ կրելով ծաւ  
գեցեր լոյս աշխարհի, բարեխօսեա առ  
Տէր վասն մերոյ փրկութեան :

**Մայր վերաձգողին :** = Ուրախացիր Աստուա-  
ծածին վերօրչնեալդ 'ի սրովբէից, ծաւ  
գելով 'ի քէն մեղ լոյս՝ մայր եղեր վեր  
ըածգողին, աղդ եւ աղինք զքեղ մեծա-  
ցուցանեմք :

**Մայր Տեառն :** = Ուրախ լեր հարսն երկ-  
նային՝ կոյս անապական, քանզի երկնայ-  
նոցն զքեղ այսօր ընկալեալ տօնէին ու-  
րախութեամբ, ընդ որս եւ մեք երգես-  
ցուք քեղ օրհնութիւն մայր Տեառն :

**Մայր տնօրէնութեան :** Տես Մայր :

**Մայր փրկութեան :** = Ուրախ լեր Աստուա-

ծածին յոյս եւ փրկութեան մայր, զքեղ  
ընդունող լուսոյ մեծացուցանեմք :

**Մայր փրկչին :** = Զքեղ կոյս եւ մայր եւ բնա-  
կարան աստուածային ներմարդութեան՝  
գոհաբանեմք եւ վերօրչնեմք զեղեալ փըր-  
կոզ կենդանութեան ազգի մարդկան,  
վասն որոյ զքեղ Աստուածածին եւ կոյս  
բարեբանեմք զմայր եւ զաղախին փրկչին  
մելոյ :

**Մայր Քրիստոսի :** = Անարատ կոյս Աստուա-  
ծածին Մարիամ, սրբուհի եւ մայր Քրիս-  
տոսի, յարդանդի տարար զանտանելին  
ամենեցուն, օրհնութեամբ զքեղ Աստուա-  
ծածին մեծացուցանեմք :

**Մայր Քրիստոսի** եւ բնակարան Բանին Աստու-  
ծոյ, անհասութեան խորհրդոյն սպասա-  
ւորեցեր, միջնորդ եղեր Աստուծոյ եւ  
մարդկան, առնա միշտ բարեխօսեա վասն  
անձանց մերոց :

**Մարգարէից հանդիսարան** եւ զրաւական կե-  
նաց մարդկան Մարիամ Աստուածամայր,  
ընդունարան եօթնարփին շնորհացն, խա-  
րիսխ յուսոյ հաստատութեան՝ զուգաթիւ  
աւուրց դարուց անցաւորաց, օրհնու-  
թեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր  
տօնեն զյիշատակ ծննդեան քո 'ի մօրէ :

Մարգարիտ լուսափայլ՝ Հոգւոյն սրբոյ տուն  
եւ տաճար, մարգարէից բանք նախաճառ  
այսօր լցան՝ ի քեզ գումար, Մովսէս դա-  
սուքն իւրովզ իսպառ՝ ի պատիւ քո անդ  
սլահայր :

Մարգարտատեսիլ եւ ծիրանազգեաց հրաշա-  
փառագոյն կոյս :

Մարգարտափայլ սուրբ կոյս : = Իսկ եկեալ  
բաղմութիւն աշակերտաց նորոյ կտակին,  
'ի փոխումն Աստուածածնին մարգար-  
տափայլ սրբոյ կուսին . բարեխօսեա Միա-  
ծնին Աստուածին մայր Բանին :

Մարիամ անհարսնացեալ : = Որ զաւետիս  
Հոգւոյն՝ ի հրեղէն՝ ի հրեշտակէն ընկա-  
լար, ուրախ էր բերկրեալդ Տէր ընդ քեզ՝  
Մարիամ անհարսնացեալ :

Մարիամ Աստուածամայր : = Տես Մարգա-  
րէից համեղիսարամ :

Մարիամ լուսապայծառ : = Տես Տապանակ  
ասլրեցուցիչ :

Մարիամ կոյս անարատ, զանապական փե-  
սայդ աղաչեա՝ զի հաշտեսցի ընդ այրի  
եղեալ հոգիս, եւ միաւորեսցի դարձեալ  
սիրով ընդ հեռացեալս՝ ի նմանէ :

Մարիամ սուրբ կոյս : = Անարատ տաճար  
բնակարան անբաւ Բանին Աստուածոյ Մու-

ջիամ սուրբ կոյս, զքեզ եւ զծնեալն՝  
քէն մեծացուցանեմք :

Մարիամ : = Մայր լուսոյն Մարիամ ան-  
հարսնացեալ՝ օրհնեալդ՝ ի կանայս :  
= Որ եկիր՝ ի փրկութիւն մարդկան  
ծննդեամբ կուսին Մարիամու եւ կենդա-  
նարար քո յարութեամբդ հրաւիրեցեր  
զմահացեալքս՝ ի յարութիւն անմահու-  
թեան, վասն որոյ աղաչանօք մօր քո  
կեցո զմեզ փրկիչ :

= Որ՝ ի վեր քան զքերովբէսն երեւե-  
ցար Աստուածածին Մարիամ, տանելով  
յորովայնի զսնիմանալի զբնութիւնն, բա-  
րեխօսեա առ Տէր վասն մերոց փրկու-  
թեան :

= Որ ցողեցեր՝ ի մեզ յամպոյ օրինաց  
Որդիդ այսօր զկոյսն Մարիամ, յորմէ ծը-  
նար մարմնով եւ բարձեր նովաւ զմեզս  
նախաստեղծին Աղամայ, մաղթանօք որոա  
Տէր մեզ ողորմեա :

= Վասն որոյ աղաչեա մայր Աստուածոյ  
Մարիամ զմիածին քո զՈրդին՝ զի շնոր-  
հեսցէ ըստաւազակին ժառանգել վերստին  
մեզ զզրախտին վայելշութիւն :

Մարմին մաքուր : = Բարունեացն խմբից  
աշակերտացն դասուց բարձեալ զմարմինն

մարուր աստուածարեալ սուրբ բաղկօք՝  
եղին 'ի դիր հանգստեան քաղցրածայ-  
նեալ սաղմոսիւք:

**Պարմնանալ:** == Անեղանելի արարող որ վասն  
մեր մարմնացար, եւ ցնծութիւն աշխարհի  
յայտնեցար, զքեզ բարեբանեմք արար-  
չակից Հօր:

== Լոյսդ որ 'ի Հօրէ առաքեցար յորժամ  
իջեր 'ի յերկնից, եւ մարմնացար 'ի սըր-  
բոյ կուսէն, դու ես գառն Աստուծոյ եւ  
Որդի Հօր:

== Անակիզին Աստուած Բանդ որ 'ի Հօրէ  
առաքեցար՝ ընդ ժամանակաւ լինել հա-  
ճեցար եւ մարմնացար 'ի սուրբ կուսէն  
վասն մերոյ փրկութեան, այսօր մկրտիլ  
'ի Յորդանան 'ի Յոլչաննէ բառնալով  
զյանցանս առաջին նախաստեղծ մար-  
դոյն: — Անեղանելիդ Աստուած Բանդ  
անմեկնելիդ 'ի Հօրէ ընդ ժամանակաւ  
լինել հաճեցար եւ մարմնացար 'ի սուրբ  
կուսէն՝ Աստուած եւ մարդ յայտնեալ,  
այսօր մկրտիլ:

== Զթագաւորն փառաց Քրիստոս որ վասն  
մեր մարմնացար 'ի սըրբոյ կուսէն՝ խաչի  
համբերելով, միաբանութեամբ երգով  
բարեբանեսցուք:

== Զփառաւորեալն յամենայն արարածոց,  
եւ 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի զեր-  
կըրպագեալն, զմարմնացնալ Բանն 'ի  
կուսէն ձայնիւ երգով օրհնեսցուք:

== Ի սկզբանէ Բանն Աստուած մար-  
մնացար 'ի կուսէն, այսօր գգուեցաւ 'ի  
տաճարին:

== Լոյս 'ի լուսոյ 'ի Հօրէ առաքեցար եւ  
մարմնացար 'ի սուրբ կուսէն, զի վերըա-  
տին նորոգեսցես զապականեալն Աղամ:

== Խոնարհեցար 'ի բարձանց եւ մար-  
մնացար 'ի կուսէն՝ որ նստէիրդ 'ի քրով-  
քէս արարիչդ արարածոց:

== Եւ մեք երգեսցուք որ 'ի կուսէն մար-  
մնացար, արդարութեան արեգակն Տէր  
փառք քեզ:

== Որ առաքեցեր զՄիածինդ 'ի փրկու-  
թիւն տիեզերաց՝ անեղ էութեամբ եղա-  
նիւ մարմին 'ի սուրբ կուսէն Հայր երկ-  
նաւոր, զոր առ քեզ ունիմք բարեխօս  
վասն անձանց մերոց:

== Որ զնախագրեալսն առ 'ի քէն մար-  
դարէիւք եկիր կատարեկ, անմայր 'ի  
Հօրէ անսկզբնաբար՝ լինել անհայր 'ի սըր-  
բոյ կուսէն, զոր առ քեզ ունիմք բարե-  
խօս վասն անձանց մերոց:

= Որ միացար՝ ի մարմնի անձառապէս ճշմարիտդ Աստուած, գքեղ բարեբանեմք ասելով փառք՝ ի բարձունս Աստուծոյ։  
= Մարմնացեալդ՝ ի կուսէն նախայաւ փառան Բանդ՝ այսօր՝ ի տաճարն եկիր կատարել զօրէնս վասն փրկութեան հեթանոսաց։  
= Մեծացուցանեմք դքեղ որ՝ ի Հօրէ Բանդ եւ անձառելի ծնունդ, որ՝ ի կուսէն մարմնացար ցուցար մեզ։  
= Քեզ միայնոյ մարմնացելոյդ՝ ի սուրբ կուսէն օրչնութիւն՝ ի բարձունս վերերգեմք ասելով՝ փառք քեղ Քրիստոս որ եկիր կամաւ Հօր Կեցուցանել զմեզ։  
= Յանձառ փառաց խոնարհեցար՝ ի մեր բնութիւնս Բանդ Աստուած եւ մարմնացար՝ ի սրբոյ կուսէն։ Եւ ծնար՝ ի սուրբ կուսէ անապական մարմնով, դքեղ անդադար բարեբանեալ մեծացուցանեմք։ Այսօր զեկեալդ՝ ի փրկութիւն ազգի մարդկան, միաբանութեամբ ամենեքեան մեծացուցանեմք։  
= Որ անիմանալիդ ես յէռւթեան Հայր անակիզբն եւ անպատճառ, ի փրկութեան մերոյ սկզբան առաքեցեր զՄիածինդ մարմնանալ՝ ի սրբոյ կուսէն, օրչնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

= Որ բազմաչեայ քրովբէից անտեսանելի, կերպացեալ զմերս՝ ի սրբոյ կուսէն տնօրինաբար, օրչնեալ Տէր Աստուած հարցն մերոց։  
= Որ այսօր մարմնացաւ՝ ի սրբոյ կուսէն յաղագս անիծիցն, եւ եբարձ ըդպատուհաս նախաստեղծին, ժողովուրդք առաւել բարձր արարէք զնա յաւիտեան։  
= Որ խոնարհեցար յերկնից անմեկնելիդ՝ ի Հօրէ Որդի Աստուծոյ եւ առեր մարմնն՝ ի սրբոյ կուսէն, հայցմամբ ծագողին լուսոյդ եւ մեզ ողորմեա։  
= Որ խոնարհեցար յերկնից Բանդ Աստուած եւ առեր մարմնն՝ ի սրբոյ կուսէն, յիշեա զննիցեցեալսն մեր յորժամքայցես անձառ փառօք, զի դու ես Տէր ամենայն երկրի։  
= Որ կերպարան Հօր եւ արարչակից Բանդ, վասն փրկութեան ազգի մարդկան այսօր՝ ի կուսէ զկերպարանս ծառայի զգեցար մարդասիրապէս քո ամենակեցոյց գալստեամբդ ողորմեա մեզ Աստուած։  
= Որ խոնարհեցար յերկնից փրկել զարարածս անյեղապէս մարմնացար՝ ի կուսէն էակից Բանդ Հօր, զքեղ ընդ հրեշտակս բարեբանեմք Աստուած հարցն մերոց։

= Զառաքետին 'ի Հօրէ զԲանն եւ զմարմնացեալն 'ի կուսէն զանգննելին, միաբանութեամբ օրհնեցէք, եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

= Որ յէութեանդ ես ընդ Հօր եւ սուրբ Հոգոյն անսկիզբն Որդի՛ խոնարհեցար 'ի Հայրական ծոցոյ, մարդ եղեալ մարմնացար 'ի կուսէն բառնալով զյաղթումն մահու յանցանաց նախահօրն, քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակացն 'ի մէջ հովուացն, օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ:

= Որ էն փառօք 'ի յերկինս անսկզբնակից Որդին, եւ իջեալ 'ի յերկինց մարմնացաւ 'ի կուսէն, օրհնեցէք գովեցեզ եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

= Գովեմք դքեզ միածին Որդի եւ Բանդ Աստուած որ 'ի կուսէն մարմնացար, խընայեա 'ի քո արարածս:

= Օրհնեմք դքեզ որ առաքեցար 'ի Հօրէ անձառելի Բանդ Աստուած, յանձն առեր մարմնանալ 'ի սրբոյ կուսէն, Աստուած Հարցն մերոց:

= Որ առաքեցեր դերիվարս քո սուրբ զմարգարէն՝ աւետարանել զինսաբեր տնօրինութիւնդ քո 'ի սրբոյ կուսէն, եւ երեւեցար մարդ ճշմարտապէս:

= Որ եկիր 'ի կատարումն կանխասաց մարգարէիցն, յանձն առեր մարմնամալ 'ի սրբոյ կուսէն մարդ ճշմարտապէս, վասն զի լոյս են հրամանք քո 'ի վերայ երկրի:

= Որ իջեր 'ի յերկինից եւ մարմնացար 'ի սուրբ կուսէն անձառելի քոյին ծնընդեամբդ, եւ զիս մի՛ անտես առներ, այլ պահեա պատուական եւ սուրբ խաչիւ քո:

**Մարմնարան Բանին Հօր :** Տես Առազաստ բնակութեամ:

**Մարմնացելոյն առ :** ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

**Մաքուր աղաւնի :** Տես Յօղ քաղցրածաւալ:

**Մաքուր աղաւնի** եւ հարսն երկինից **Մարիամ**, տաճար եւ աթոռ Աստուածոյ Բանին, քեզ երանեն ամենայն աղինք:

**Մաքուր** եւ անբիծ կոյս յետ ծննդեան, որ մարմնով ծնար զարձակողն 'ի կապից մահու, բարեխօս լեր վասն անձանց մերոց փրկել 'ի սպառնալեաց գեհենոյն:

**Մաքուր ծնող փեսայի :** = Ուրախացիր Եկեղեցի գուստը վերինն Սիովելի, քանզի ծնաւ 'ի յԱննայէ մաքուր ծնող քոյն փեսայի, բարձր արարէք զնա յաւիտեան:

**Միածնի Որդւոյ բնակարան :** = Որ զՄիանի Որդւոյ քո զբնակարան՝ զնախամօրն

Երկանց բարձողն այսօր դարձուցեր ՚ի  
փառս առաջին, զքեղ բարեբանեմք Աս-  
տուած հարցն մերոց :

**Միամայրն** Մարիամ : = ի յամուլ երկրէ  
այսօր բուսաւ մեզ բարեբեր բոյսն բարի,  
շուշան հովտաց ծաղիկն դաշտաց միա-  
մայրն Մարիամ՝ արմատ տնկոյն անմա-  
հութեան, աղաչանօք սոցա խնայեա ՚ի  
մեզ :

**Միայնդ** ՚ի կանայս օրհնեալ : = Զքեղ ան-  
հարսնացեալ որ միայնդ ՚ի կամսայս օրին-  
նեալ, կրելով ՚ի քեզ զանտանելի զբնու-  
թիւնն, օրհնութեամբ մեծացուցանեմք :

**Միայնոյ** քեզ ՚ի կանայս կոյս յետ ծննդեան  
երգեմք զօրհնութիւն, զի լոյս ՚ի լուսոյ  
քեւ յայտնեցաւ աշխարհի եւ զնախա-  
մօրն երարձ զանէծս՝ անճառ ծննդեամբն  
՚ի քէն :

**Միայն** օրհնեալ ՚ի կանայս՝ մայր եւ միշտ  
կոյս եւ իմանալի լոյս, ծնօղ արարչին մե-  
րոյ՝ անդադար բարեբանեսցուք :

**Միայն** օրհնեալ սրբուհիդ ՚ի կանայս, բնա-  
կարան եւ առագաստ արարչին, բարեխօ-  
սեա առ Տէր վասն անճանց մերոց, զի  
փրկեսցէ զմեզ ՚ի սպառնալեաց գեհենոյն:  
Մի բադարեր վասն մեր բարեխօսել՝ օրհ-  
նեալ ՚ի կանայս :

**Միշտ** կոյս : Տես Թարզման աստուածութեամ .  
— Միայն օլիմենալլ :

**Միջնորդ** եղեր Աստուածոյ եւ մարդկան : Տես  
Մայր Քըլիստոսի :

**Միջնորդ** օրինաց եւ շնորհաց : = Ուրախ  
եր աթոռ փրկութեան, յոյս հաստատու-  
թեան մարդկան, միջնորդ օրինաց եւ  
շնորհաց, օրհնութեամբ անդադար գո-  
հութեամբ մեծացուցանեմք :

**Մորենի** անբոցակէզ : = Որ զհուրն Աստուած  
յորովայնի քում կրեցեր անբոցակէզ մո-  
րենի, դառնաճաշակ պտղոյն քաղցրացու-  
ցիչ, զքեղ ունիմք բարեխօս առ Տէր վասն  
անճանց մերոց :

**Մորենի** անկէզ : = Զքեղ մորենի անկէզ,  
լեան վիմածին, դուռն փակեալ եւ աղ-  
րիւր կնքեալ, նախատեսացն զուշակեալ  
մայր եւ կոյս, հոգեւոր երգով զքեղ բա-  
րերանեմք եւ փառաւորեմք զմիածին քո  
զիրդին :

**Մորենի** անկիղելի : = Անապական տաճար  
եւ մորենի անկիղելի՝ որ զանշէջ հուր աս-  
տուածութեանն ՚ի քեզ տարեալ կրեցեր,  
որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց,  
վասն որոյ ամենեքեան զքեղ միշտ մե-  
ծացուցանեմք :

== Զքեզ պայծառ երկինք եւ ամպ լուսեղէն, ծնող արարչին եւ մորենի անկիւզելի մեծացուցանեմք :

**Մորենի Մարիամ:** == Այսօր բուսաւ յԱննայէ մորենին Մարիամ յոր վառեցաւ հուրն աստուածային՝ զոր ետես Մովսէս զօրինակ կուսին 'ի Սինա՝ լցեալ լուսովն անմատոյց, փառս տացուք տուողին մեզ զօրհնեալն 'ի կանայ :

\* **Մորենի վառեալ որ ոչ այրէր :** == Երանելի աստուածասէր սուրբ գշխոյն եկեալ 'ի քաղաքն երուսաղէմ՝ խնդրէր զիրկական ծագումն մեծի փայլման, եւ քարոզէր նոցա զմորենին վառեալ որ ոչ այրէր, մեծացուցանելով զծնեալն 'ի կուսէն :  
**Մտեալ** 'ի վերինն երուսաղէմ: **Տես** թմակարան չոգույն սրբոյ:

### Յ

**Յարդանդի կը եցեր որ յառաջ քան զյաւիտեանս 'ի Հօրէ զԲանն եւ ծնար մարմնով, զքեզ եւ զծնեալն 'ի քէն մեծացուցանեմք :**

**Յարուցելոյն** 'ի մեռելոց բնակարան մայր եւ կոյս, որ զննչեցեալսն յԱղամայ կենացործէ անապական, զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կանայ :

**Յարփւոյն լուսոյ ծագումն** 'ի քեզ վառեաց ըզճագ մարմնոյն լոյս աշխարհի, որով գտեալ զպատկերն իւրական՝ զոր վերստին նորոգեաց յառաջնին կերպարանն, վասն որոյ բարեխօսեա նորոգել զմեզ 'ի հնութենէ մեղաց :

**Յաւուր վրիժուց հասուցման ամպարշտաց վերածիցես զմեզ ընդ հոգեղինաց դասն 'ի տեղի անկելոց հրեշտակաց՝ բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին :**

**Յերկրէ երկնից հարսն ընծայեալ :** **Տես Աստուածին** անհարսնացեալ:

**Յերկրէ յերկինս հարսն ընծայեալ :** **Տես հարսն ընծայեալ:**

**Յիմանալի վտակաց տանն Աստուծոյ հոսմանց, վիճակեալդ տեսանողացն ձայնի՝ արլմամբ զմայլեցար, այսօր զանթառամն ծաղկեցար զծաղիկ՝ 'ի ժամու տալով զպտուզն, առ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլուկի ձայնիւ :**

**Յղանալ :** == ԶԲանն անսկիզբն յղացար :  
== Յղացար անարատաբար, եւ զԱստուած

վայելչապէս ծնար, ուրախ լեր Աստուածածին, տաճար անխախտելի, զքեզ մեծացուցանեմք:

Յղութիւն: = Երիս խորհուրդս սոսկալիս 'ի քեզ տեսանի Աստուածածին, յրութիւն անսերմնական, ծնունդ անարատ, կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական, օրհնութեամբ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք:

Յոյս: Տես Աստուածածին ալպաէմ մեր:

Յոյս եւ ապաւէն խոստովանողացս զքեզ:

Յոյս եւ փրկութեան մայր: = Ուրախ լեր Աստուածածին յոյս եւ փրկութեան մայր, զքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք:

Յոյս հաստատութեան մարդկան: = Ուրախ լեր աթոռ փրկութեան, յոյս հաստատութեան մարդկան, միջնորդ օրինաց եւ շնորհաց, օրհնութեամբ անդադար գութեամբ մեծացուցանեմք:

Յոյս մեր եւ ապաւէն մայր Տեառն եւ կոյս սուրբ, որ հուր աստուածութեանն ոչ բոցակիզեաց զքո սուրբ զորովայն, բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան:

Յօդ հանդարտ: Տես Տեղի իշմամ:

## Ն

Կախամօր երկանց բարձող: = Այսօր զնախամօրն երկանց բարձողն կուսական ծննդեամբ զանհարսնացեալ մայրն Միածինն իջեալ փառօք փոխադրեաց յիմանալի եւ յանպատում գերագոյն բնութիւնս, վասն որոյ սրով սրովը ական ձայնիւ քեզ երգեմք սրովութեանց սուրբ զմիշտ փառաբանութիւն:

Կախաստեղծին ծնունդ: = Որ զնախամօրն զյանցանս երկանց երարձ, եւ զնորդիդքո միածին մարմուկ ծնաւ, այսօր առ 'ի մէնջ 'ի վերին զօրսն փոխեցեր զնախաստեղծին ծնունդն, զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցն մերոց:

Կախատեսացն գուշակեալ մայր եւ կոյս: = Զքեզ մորենի անկէղ, լեառն վիմածին, դուռն փակեալ եւ ազբիւր կնքեալ, նախատեսացն գուշակեալ մայր եւ կոյս, հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք եւ փառաւորեմք զմիածին քո զնորդին:

Նահապետացն Արքահամու Խսահակայ եւ Յա-  
կովբայ, պարզեւեցար 'ի յԱստուծոյ կոյս  
Մարիամ գուստոր նոցին, երանեն ազդ եւ  
աղինք այսօր զծնեալդ 'ի յԱննայէ:  
Նիւթեղէն սրովբէ: Տես Յօդ քաղցրածաւալ:  
Նմանող երկնից: Տես Բանալի:  
Ննջումն կուսին: = Կատարեալ տնօրէնու-  
թեան քռ 'ի յերկրի ներմարդկութեան,  
զոր 'ի վերջին դարուս վախճան կատարե-  
ցեր վասն մարդկան, այսօր յերկնից իջեր  
Հօր Բան 'ի յօր կուսի մօր քռ ննջման:  
Նորատունկ բուրաստան: Տես Աշտամակ:  
Նոր խառնարան հրաշալի նոր խառնման:  
Տես նոր խորամ:  
Նոր խորան արեգականն արդարութեան: =  
Նոր խորանիդ արեգականն արդարու-  
թեան նոր օրհնութիւնս տացուք եւ ան-  
դադար բարեբանեսցուք: Նոր տաճարիդ  
անճառ լրւսոյն որ 'ի Հօրէ նոր երգս եր-  
գեսցուք եւ անդադար բարեբանեսցուք:  
Զնոր խառնարանդ հրաշալի նոր խառնը-  
ման Բանին եւ մարմնոյ հոգեւոր երդով  
բարեբանեսցուք:  
Նոր ծաղիկ բղիմէ այսօր յարմատոյն Յեսսեայ,  
եւ որդի Դաւթի ծնանի զՄրդին Աստու-  
ծոյ:

Նոր Սիովին ծնեալ մանկունք սուրբ աւագա-  
նաւն, չնորհաղարդեալք Հոգւովին Աստու-  
ծոյ, օրհնեցէք զՀայրն Երկնաւոր յաւուր  
ծննդեան Արբուհւոյ կուսին, յոր օրհնե-  
ցայք յանիծից նախնոյն:  
Նոր տաճար անճառ լրւսոյն: Տես նոր խորամ:  
Նոր սքանչելիք եղեն այսօր 'ի Բեթղեհէմ 'ի  
յայրին՝ կուսի ծնանիլ Աստուած եւ մարդ՝  
անսպական մնալով կուսական որովայնին,  
զի տեսին մարմնով ծնեալ զԲանն Աս-  
տուած:  
Նոտելոցս 'ի խաւարի լրյս ծագեցեր, վասն  
որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացու-  
ցանեմք: Տես Աստուածածիմ խորամ լու-  
սոյ:

## 2

Շառաւիդ անդատապարտ: Տես Ամֆառամ  
ծաղիկ:  
Շառաւիդ օրհնութեան: Տես Ծաղիկ ամֆա-  
ռամ:  
Եիջուցանել: = Աստուածածին ամպ լուսա-  
ւոր՝ որ զցօղն կենաց հեղեր յերկիր բա-

նաւոր, եւ զնախամօրն շիջուցեր պարտեացն գհուր, անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք :

**Յնորհ աշխարհի:** == Ուրախացիր Աստուածածին որ կուսութեանց ես պարծանք եւ մայր հաստատութեան մարդկան, օգնական եւ ջնորի աշխարհի, Մարիամ մայր եւ աղախին փրկչին մերոյ :

**Եռշան հովտաց:** == Ի յամուլ երկրէ այսօր բուսաւ մեղ բարեբեր բոյսն բարի, շուշան հովտաց ծաղիկն դաշտաց՝ միամայրն Մարիամ արմատ տնկոյն անմահութեան, աղաչանօք սոցա խնայեա 'ի մեղ :

Ո

**ՈՂջյն ընդ քեզ Մարիամ,** 'ի քեզ սուրբ Հոգին եկեսցէ, եւ զօրութիւն բարձրելոյն 'ի վերայ քո հովանասցի :

**Որ** անապական ծննդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն, Մարիամ մայր Աստուծոյ, բարեխօսեա առ միածին Որդին լուծանել զկապանս մեղաց մերոց, եւ ա-

զաշեա փրկել զանձինս մեր 'ի փորձութենէ :

**Որ** առ 'ի քէն երկրորդ Աղամ վասն առաջնոյն յանցանաց բնութեամբ մերով պահելով՝ զմահաբեր պտղոյն լուծեալ զպատրանս, առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ :

**Որ** զանձառելին ծնար սուրբ Աստուածածին կոյս, օրհնեալ ես յաւիտեան :

**Որ** զանշօշափելին յէից 'ի գիրկս քո բարձեալ դիեցուցեր կաթնասուն, բարեխօսեա վասն մեր, մեք օրհնաբանեմք զօրհնեալդ 'ի կանայս :

**Որ** զանտանելին յէից 'ի յարգանդի անապականբար կրեցեր, ուրախ լեր անհարսնացեալ մայր :

**Որ** զարարչակիցն Բանն գոյացեալ ստուգապէս աշխարհի ծնար, ուրախ լեր անհարսնացեալ մայր :

**Որ** զարարչակիցն Հօր զիսկզբանէ Բանն Աստուած յորովայնի քում կրեցեր՝ օրհնեալ ես յաւիտեան :

**Որ** զաւետիս Հոգւոյն 'ի հրեղէն 'ի հրեշտակէն ընկալար, ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ՝ Մարիամ անհարսնացեալ :

**Որ** զԲանն անեղական զէակն էից գոյացու-

թեանց անձառաբար ծնար մարմին եղեալ  
 'ի փրկութիւն եղականացս, առ նա միշտ  
 բարեխօսեա վասն անձանց մերոց:  
 Որ զբանն Աստուած բաւական եղեր ընդու-  
 նել յորովայնի միշտ կոյս, զքեղ մեծա-  
 ցուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կանայս:  
 Որ զբանն Աստուած յանգանդի կրեցեր սըր-  
 բուհի անարատ, եւ անձառապէս ծնար  
 զվերաձգողն երկնից, զքեղ օրհնութեամբ  
 մեծացուցանեմք:  
 Որ զթագաւորն ամենեցուն յորովայնի քում  
 կրեցեր՝ սրբուհի մայր եւ կոյս եւ աղա-  
 խին Քրիստոսի, բարեխօսեա առ Տէր վասն  
 մերոյ փրկութեան:

Որ զկեանքն անմահարար մահկանացու բնու-  
 թեամբս 'ի քեղ կրեցեր սուրբ կոյս Մա-  
 րիամ, որով մեռեաքս որ յԱղամայ՝ կեն-  
 դանացաք յուսով յարութեան, առ նա  
 միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:  
 Որ զհուրն Աստուած 'ի քեղ կրեցեր մորենի  
 անկիպելի, դառնաճաշակ պտղոյն քաղ-  
 ցրացուցիչ անձառելի քոյին ծննդեամբ՝  
 'ի քէն հայցեմք՝ մաղթեա փրկել զմեղ 'ի  
 հրոյն յաւիտենից:  
 Որ զհուրն Աստուած յորովայնի քում կրե-  
 ցեր անբոցակէղ մորենի, դառնաճաշակ

պտղոյն քաղցրացուցիչ, զքեղ ունիմք բա-  
 րեխօս առ Տէր վասն անձանց մերոց:  
 Որ զհուրն Աստուած յորովայնի քում կրե-  
 ցեր անկիպելի մորենի, բարեխօսեա վասն  
 մեր, մեք օրհնաբանեմք զօրհնեալդ 'ի  
 կանայս:  
 Որ զհրեշտակին զձայնն լուեալ հիացեալ  
 բերկեցար, բարեխօսեա վասն մեր, մեք  
 օրհնաբանեմք զօրհնեալդ 'ի կանայս:  
 Որ զմարմնացեալն տիրաբար ՚ի յորովայնի  
 քում կրեցեր, ուրախ լեր անհարսնացեալ  
 մայլ:  
 Որ զնախամօրն անիծից երկանց լուծեր զդա-  
 տակնիք, որ զտրտմական սահմանեաց  
 ծնունդ անախտաբար ծնանելով 'ի քէն,  
 առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց  
 մերոց:  
 Որ զնախամօրն զյանցանս լուծեր ծննդեամբ  
 քո սուրբ կոյս, բարեխօսեա անդադար  
 վասն մերոյ փրկութեան:  
 Որ զպուղն 'ի քէն կենաց ընծայեցեր մե-  
 ռեալն Ադամայ, զորոյ պահօք քառաս-  
 նօրեայ քաւեաց զպտղոյն ճաշակումն եւ  
 յանվախճան զնոյն վերածեաց 'ի կեանս  
 առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց  
 մերոց:

Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ ՚ի  
գիրկս քո մարմնով, զքեղ մեծացուցա-  
ննեմք որ օրհնեալդ ես ՚ի կանայս :

Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ ՚ի  
քո գիրկս, եւ արեգականն արդարութեան  
եղեր արեւելք, զքեղ օրհնութեամբ մե-  
ծացուցանեմք :

Որ ընտրեցար ՚ի սկզբանէ անապական կոյս  
Մարիամ լինել տաճար սրբութեան ան-  
ձառ լուսոյն որ ՚ի Հօրէ, առ նա միշտ  
բարեխօսեա կեցուցանել զմեզ :

Որ ՚ի բարձրութիւնս երկնից բարձր բանիւք  
բարեբանիս Սրբուհի, ՚ի Նիքանանէ դի-  
մեալ հարսն զգեցեալ այսօր, զարեգակն  
արկեալ զքեւ եւ ընդ ոտիւք զլուսինն  
ստուերատեսակ, օրհնութեամբ երգով ե-  
կեղեցիք տիեզերաց այսօր տօնեն զիշա-  
տակ ծննդեան քո ՚ի մօրէ :

Որ ՚ի կուսական դասակցութեանց եւ ՚ի  
սրբոց ճգնաւորաց փառաբանիս Սրբուհի,  
ուստի եւ մեք հաւատացեալքս վերապա-  
տուեմք զփոխումն քո ՚ի յերկինս, որ ա-  
ռաւել բարձրացեալդ ես յաւիտեան :

Որ ՚ի վեր քան զքերովրէսն երեւեցար Աս-  
տուածածին Մարիամ, տանելով յորու-  
վայնի զանիմանալի զբնութիւնն, բարե-  
խօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան :

Որ ՚ի վեցթեւեան սրովրէից եւ ՚ի բազմա-  
չեայ քրովրէից փառաբանիս երգով Աս-  
տուածածին, ընդ որս եւ մեք համաձայ-  
նեալ բարեբանեմք զծագող իմանալի լու-  
սոյն զմիշտ կոյսն :

Որ ծնաներոցն է ՚ի քէն՝ Էսրայելի առաջնորդ,  
եւ ընդհանուր քարոզի Աստուած հզօր  
անմահ Բանն :

Որ կերպարան եւ կնիք Հօր առեալ վասն մեր  
ծառայի կերպ ՚ի կուսէն, որ էն ՚ի յաթոռ  
փառաց անտես վերնոցն, ՚ի յայրին իջե-  
վանի եւ ՚ի մսուր յանբանից բազմեալ :

Որ յամենայն ազգաց երանեցար սրբուհի եւ  
կոյս Մարիամ, աղաչեա զառ ՚ի քէն  
զմարմնացեալն Աստուած ապրեցուցանել  
զմեզ ՚ի սպաւնալեաց զեկենոյն :

Որ յանմարմնոց զինուորութեանց եւ ՚ի դա-  
սուց հոգեղլինաց վերհամբարձար այսօր  
Աստուածամայր, ուստի եւ դասք հողե-  
զինացս փառաբանեմք զծագող իմանալի  
լուսոյն զմիշտ կոյսն :

Որ յիմանալի խորանսդ բարձրացոյց զքեզ  
մայր Աստուծոյ անձառելի փառօք Միա-  
ծին Որդին, առ նա միշտ բարեխօսեա  
վասն անձանց մերոց :

Որովայն : — Ծնունդն Հօր եւ զինաւուրց,

անժամանակն յաւիտենից՝ ժամանակաւ  
յորովայնի քում բնակեցաւ եւ 'ի Հօրէ  
ոչ մեկնեցաւ, վասն որոյ զքեղ Աստուա-  
ծածին եւ կոյս՝ բարեբանեմք զմայր եւ  
զպախին փրկչին մերոյ:

— Անահմանն յէռթեան սահմանելեաց  
էացուցիչ՝ 'ի վեր քան զբան սահմանի  
այսօր յորովայնի սրբուհւոյ կուսին, զոր  
առ Տէր ունիմք բարեխօս վասն անձանց  
մերոց:

— Զծնեալն յամենասուրբ յորովայնի՝  
յանարատ 'ի կուսէն՝ օրհնեցէք եւ բարձր  
արարէք զնա յաւիտեան:

— Առաքեցեր զքո Միածինդ մարմնանալ  
'ի սուրբ կուսէն, եւ անարատ ծնանիլ  
յորովայնի անսապական, բառնալով զմեր  
նեղութիւնս, Աստուած աստուծոց եւ Տէր  
տերանց փրկիչ գոլով:

— Ի կուսական որովայնի ծնեալ մար-  
մով՝ որ յառաջ քան զյաւիտեանս Բանդ  
'ի Հօրէ, երգեցուրք՝ Տէր Աստուած փա-  
ռաւորեալ է անուն քո:

— Նոր սքանչելիք եղեն այսօր 'ի Բեթ-  
ղեհէմ 'ի յայրին՝ կուսի ծնանել Աս-  
տուած եւ մարդ՝ անսապական մնալով  
կուսական որովայնին, զի տեսին մարմնով  
ծնեալ զբանն Աստուած:

— Որում ոչն հանդուրժէին բոցանշոյլ  
սերովէքն՝ նա բնակեցաւ ի քում յորո-  
վայնի, զքեղ բարեբանեմք Աստուածածին  
կոյս:

— Այսօր Բանն 'ի Հօրէ անմեկնելի եւ  
անձառելի խորհրդով 'ի ձեռն կուսական  
որովայնի անօրինաբար յերկրի երեւեալ:

— Անժամանակ ծոցոյ ծնունդ Հօր էա-  
կան, այսօր սրբեցեր յորովայնէ ժամա-  
նակաւ մայր 'ի մօրէ անձառ մարդեղու-  
թեամբ, աղօթիւք սորա ողորմեա մեզ  
Աստուած:

Տես եւ Պարազրել. — Տանել:  
Որում երկինք եւ երկիր ոչ բաւէին տանել  
լուսոյն, բնակարան բնութեան Բանին  
սպասաւորեցար, աղաչեա վասն մեր զմիաւ  
ծին քո զնրդիդ:

Որպէս գերարփի փայլեալ: = Այսօր աիրա-  
մայր պրբուհի կոյսն աւանդեալ զորբա-  
սնեալ հոգին 'ի ձեռն հրեշտակական դա-  
սուցն, որպէս գերարփի փայլեալ, ահե-  
զիցն նմանեալ հրեղինաց դասուցն, վասն  
որոյ հրճուողական ձայնիւ քեղ երգէ ե-  
կեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն:

Որ վառեցար 'ի յարփւոյն եւ ոչ կիզար ըստ  
մորենւոյն, այլ ետուր զհացն կենաց կե-

բակուր բանաւորաց, բարեխօսեա առ  
Քրիստոս չնչել զգիր մեղաց մերոց:  
Որ տարար զԲանն Աստուած յարդանդիք քում  
եւ ծնար զնա մարմնով ապրեցուցիչ Աս-  
տուածածին, բարեխօսեա կեցուցանել  
զմեղ:

Որ տարար յորովայնի զանտանելին ամենե-  
ցուն եւ ծնար անձառապիշու զՔրիստոս  
յոյս ազգի մարդկան, առ նա միշտ բա-  
րեխօսեա կեցուցանել զմեղ:

Ուրախացան զօրք երկնից 'ի վերուստ, քան-  
զի ցոյն անապական 'ի քէն հեղեալ, միշտ  
կոյս եւ մայր Բանին տնտեսութեան, լու-  
սածին ամո՞ ծագելով 'ի մեզ զարդարու-  
թեան արեգակն:

Ուրախացիր Աստուածին որ կուսութեանց  
ես պարծանք եւ մայր հաստատութեան  
մարդկան, օդնական եւ շնորհ աշխարհի,  
Մարիամ մայր եւ աղախին փրկչին մե-  
րոյ:

Ուրախացիր Աստուածին վերօրհնեալդ 'ի  
սրովքէից, ծագելով 'ի քէն մեզ լոյս մայր  
եղեր վերածգողին, ազգ եւ ազինք զքեղ  
մեծացուցանեմք:

Ուրախացիր բարձրելոյն հովանացեալ զօրու-  
թեամբ եւ բնակարան սուրբ Հոգւոյն որով

ծնար զԲանն Աստուած, բարեխօսեա վասն  
մեր Աստուածածին Մարիամ:  
Ուրախացիր պսակ կուսից Տիղամայր՝ այսօր  
Որդին քո զհայրենին փայլեաց զփառս,  
նմա յաւէժ յանձն արա զանձինս մեր: —  
Նմա Մովսէս եւ Հեղիսա սպասեն, յա-  
նուն նորա ցնծան Թաբոր եւ Հերմոն, նմա  
յաւէժ յանձն արա զանձինս մեր: — Ե-  
սայիսա զքեղ թեթեւ ամու ետես եւ Հայր  
յամպոյն զքո զՈրդին իւր դաւանեաց,  
նմա յաւէժ յանձն արա զանձինս մեր:  
Ուրախացիր Սրբուհի Գաբրիէլի աւետեօքն՝  
որ քարոզեացն զդալուստ ալքային Ցեառն  
'ի յերկնից:

Ուրախացիր Սրբուհի եւ միշտ կոյս, քանզի  
որ 'ի քէն մարմացան՝ զդժոխս աւերեաց,  
սուրբ եւ անհամեմատդ 'ի կանայս՝ բա-  
րեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Ուրախ լեր աթոռ փրկութեան, յօյս հաստա-  
տութեան մարդկան, միջնորդ օրինաց  
եւ շնորհաց, օրհնութեամբ անդադար գո-  
հութեամբ մեծացուցանեմք:

Ուրախ լեր աղբիւր կնքեալ ջրոյն կենդանու-  
թեան՝ զոր ծարաւելոյ բնութեանս ետուր  
'ի յարբումն, զքեղ օրհնութեամբ մեծա-  
ցուցանեմք:

Ուրախ լեր ամպ թեթեւ՝ գեղմն իմանալի, որ  
'ի բանական երկիր հեղեր զանձրեւ կենաց՝  
արդիւնս ընդ դործոյ հաւատոյ պաղաբե-  
րեալ:

Ուրախ լեր անհարսնացեալ մայր:

Ուրախ լեր Աստուածածին՝ յոյս եւ փրկու-  
թեան մայր, զքեզ ընդունող լուսոյ մե-  
ծացուցանեմք:

Ուրախ լեր Աստուածածին՝ տաճար անխախ-  
տելի, զքեզ մեծացուցանեմք:

Ուրախ լեր բերկրեալ ամենասուրբ կոյս, որ  
ծնար աշխարհի զարդարութեան արեգակն՝  
որ լուսաւորեաց զագփս որդւոց մարդկան:

Ուրախ լեր բերկրեալ՝ դուռն կնքեալ, որ ծնար  
աշխարհի զթագաւորն Քրիստոս, որ նստի  
'ի վերայ անարուեստ աթոռոյ:

Ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ՝ Մա-  
րիամ անհարսնացեալ:

Ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ. օրհնեալ  
ես դու 'ի կանայս եւ օրհնեալ է պառող  
որովայնի քո:

Ուրախ լեր բերկրեալդ՝ քանզի Տէր տերանց  
է ընդ քեզ:

Ուրախ լեր դուռն փակեալ, ընդ որ ոչ ոք  
մտեալ՝ բայց Տէր Աստուած Խաղայելի,  
զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրախ լեր գուստոր լուսոյ՝ մայր անհարսնա-  
ցեալ, քանզի յղացելոյն 'ի քէն՝ համա-  
խմբեալ վերնոցն որդիք Սիովսի՝ երգեն  
զիառս 'ի բարձունս:

Ուրախ լեր երկին վեհագոյն քրովբէ հողեղէն,  
որ զանտանելին երկնից եւ հրեղինաց դա-  
սուցն 'ի քո ընկալար մաքրական որո-  
վայնի:

Ուրախ լեր եւ բերկրեալ մայր եւ կոյս, քան-  
զի ծնեալն 'ի կուսէդ այսօր վերստին  
յարութեամբ ծնաւ 'ի կոյս գերեզմանէն,  
զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

Ուրախ լեր կոյս անարասո՝ մայր անհարսնա-  
ցեալ, քանզի որ 'ի քէն ծնաւ Որդին  
միածին, վայրինեալ յերկնից այսօր՝ վե-  
րածեաց զքեզ սքանչելի փառօք:

Ուրախ լեր հարսն երկնային՝ կոյս անապա-  
կան, քանզի երկնայնոցն զքեզ այսօր ըն-  
կալեալ՝ տօնէին ուրախսութեամբ, ընդ որս  
եւ մեք երգեսցուք քեզ օրհնութիւն մայր  
Տեառն:

Ուրախ լեր մայր անճառ լուսոյ՝ Մարիամ  
սուրբ Աստուածածին, քանզի 'ի քեզ կրե-  
ցեր զհուր աստուածութեանն՝ լուսեղէն  
տաճար Աստուծոյ Բանին, առ նա միշտ  
բարեխօսեա վասն անճառ մերոց:

Ուրախ լեր մայր անձառ լուսոյ սուրբ Աստուածածին, քանզի առ՝ ի քէն ծագեաց մեզ լոյս ՚ի լուսոյ եւ զիսաւարն անդիւ տութեան փարատեաց անստուեր լուսովն իւրով։

Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ, երկիր բանաւոր՝ արեգականն օթարան, լեր բարեխօս վասն անձանց մերոց։

Ուրախ լեր Մարիամ կոյս անապական, զի՞ հայրական ծոցոյ անմեկնելի Որդին՝ քո յանձն առնու բնակել յորովայն։

Ուրախ լեր Մարիամ՝ նորատունկ բուրաստան, երկնաբերձ աշտանակ, ձոյլ ոսկի եւ ճեմարան Բանին Աստուծոյ։

Ուրախ լեր Մարիամ սուրբ Աստուածածին, զի՞ տաճարիդ մաքրեցելոյ յանկարծակի եկն Տէր, դքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ուրախ լեր սափոր ոսկի երկնային հացին, որ զառ՝ ի վերուստ իջեալ զմանանայն կենաց՝ նորոյս պարզեւեալ կերակուր իսրայելի։

Ուրախ լեր սիւն հրեղէն՝ լուսոյն աշտանակ, որ զարարչականն եղականաց լուսոյ՝ ի քեզ տաճելով՝ ծագեցեր իսւարելոց։

Ուրախութիւն աշխարհի ծնաւ զՄարիամ ա-

մուկն Աննա աւետեօք զուարթնոյն, որ զտուողն օրինաց հնոյն ծնաւ մարմնով պարզեւիչ նորոյս կտակի, տուք օրհնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ։

Ուրախութիւն երկնի եւ երկրի := Որ անմարմնն բնութեամբ աստուածութեան քո Տէր միացար մարմնով յարգանդի կուսին՝ անյեղապէս գոլով, այսօր փոխեցեր զուըախութիւնը երկնի եւ երկրի յանտըստում՝ ի կեանս, աղաչանօք մօր քո ոզորմեա մեզ Որդի Աստուծոյ։

Ուրախութիւն երկնի եւ երկրի՝ ամայ թեթեւ ցօղեալ՝ ի մեզ զարդարութիւն, բարեբանեմք զբղխեալն՝ ի քէն մարմնով յարմատոյն Յեսսեայ գաւաղան ծաղկեալ։

Ուրախութիւն հրեշտակաց := Դու պարծանք կուսութեան մարդկան, դու ուրախութիւն հրեշտակաց, դու բարձող անիծիցն, վասն որոյ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք։

Ուրախութիւն արտմեցելոյ բնութեանս՝ բերկրեալ կոյս Մարիամ, զոր ողունաբեր աւետեօք կրեցեր զտուողն՝ ի քեզ զօրէնս ողունի, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց։

## ¶

Պայծառ երկինք : = Զքեղ պայծառ երկինք  
եւ ամպ լուսելէն, ծնող արարչին եւ մո-  
րենի անկիղելի մեծացուցանեմք :

Պայծառ քան զարփի : = Նորառքանչ անդ  
հրաշից ներակերտեալ՝ի յերկրի, քանզի  
պայծառ քան զարփի փայլեալ սրբոյ կու-  
սին հոգի, զոր զարհուրեալ Պետրոսի զՏէր  
հարցանէր զխորհուրդն յայտնի :

Պայծառ քան զերկինս : = Աստուածածին  
պայծառ քան զերկինս՝ որ 'ի մեղ ծա-  
գեցեր զլոյն մեծ եւ գերազանց՝ որով  
խաւարն անզիտութեան հալածեցաւ,  
սրովքական ձայնիւ զքեղ բարեբանեմք  
եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք :

Պայծառագոյն քան զարեգակն : = Որ քան  
զարեգակն պայծառագոյն Մարիամ՝ մի  
դադարեր բարեխօսել վասն մեր, Քրիս-  
տոսի մայր Աստուծոյ մերոյ :

Պարագրիլ : = Անտանելին 'ի համայնից բո-  
վանդակիչ բնութեանց բոլորից՝ պալա-  
գրի այսօր մարդասիրապէս յորվայնի

անարատ կուսին, զոր առ Տէր ունիմք  
բարեխօս վասն անձանց մերոյ:  
= Էիցս Էակ Բանն Հօր պարագրեցաւ  
'ի մարմնի, լոյսն ծնունդ ծոցածին էառ  
զբնութիւն նախաստեղծին, բարեխօսեա  
Միածնին Աստուածածին մայր Բանին:  
= Աստուածածին՝ գերագոյն երկնից ցու-  
ցար խորան եւ առազաստ, քանզի ծա-  
գեալ լոյսն 'ի Հօրէ՝ բնութեանց էից ան-  
տանելին պարագրեցաւ 'ի քում յորո-  
վայնի, հոգեւոր երգով զքեղ միշտ մե-  
ծացուցանեմք :

Պարգեւ բնութեանս : = Որ ողորմեցար 'ի  
մեզս ծնեալ մարդկան Հայր Երկնաւոր  
ըստ մարդարէին, եւ ետուր ընութեանս  
այսօր պարգեւ զկոյսն սուրբ զհնող Որ-  
դւոյդ միածնի, մաղթանօք սորա Տէր մեղ  
ողորմեա :

Պարծանք ազգի մարդկան : = Սուրբ եւ Աս-  
տուածածին Մարիամ, ցանկալի կուսից  
եւ պարծանք ազգի մարդկան, մայր եւ  
աղախին մեծացուցանեմք :

Պարծանք Եկեղեցւոյ : = Որ քան զերկինս  
բարձրագոյն Մարիամ, պարծանք Եկե-  
ղեցւոյ, Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ :

Պարծանք կուսութեան : = Դու պարծանք

կուսութեան մարդկան, դու ուրախութիւն հրեշտակաց, դու բարձօղ անիծիցն, վասն որոյ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք:

Պարծանք կուսութեանց: == Ուրախացիր Աստուածածին որ կուսութեանց ես պարծանք եւ մայր հաստատութեան մարդկան, օգնական եւ չնորհ աշխարհի, Մարիամ մայր եւ աղախին փրկչին մերոյ: Պարտէզ փակեալ աստուածատոնկ Եղեմ, որ եւ ծառն կենաց 'ի մէջ զրախտի քո 'ի Հոգւոյն տնկեալ՝ անմահական պտղովն ելից զտիեղերս, սրովքական ձայնիւ զքեզ բարեբանեմք եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Պսակ կուսից: == Ուրախացիր պսակ կուսից Տիրամայր, այսօր Որդին քո զհայրենին փայլեաց զիառս, նմա յաւէժ յանձն արագանձինս մեր:

## Ս

Սափոր սոկեղէն լի մանանայիւ: Տես Փափէ կութեան զրախտիմ:

Սափոր սոկի: == Վեհագոյն սերովլրէից եւ բազմաշեայ քերովքէից տիրամայր Աստուածածին, սապանակ կտակի, սափոր ոսկի, խորհրդաւոր խորան Բանին Հօրբարձրելոյ, օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն զյիշատակ ծննդեան քո 'ի մօրէ:

Սափոր սոկի երկնային հացին: == Ուրախ լեր սափոր ոսկի Երկնային հացին, որ զառ 'ի վերուստ իջեալ զմանանայն կենաց՝ նորոյս պարզեւեալ կերակուր Իսրայելի:

Սափոր սոկի երկնային մանանային: == Վերովլրէից գերագոյն Եին աթոռ, եւ ծառ կենաց անմահական պտղոյն, սապանակ կտակի Բանին եւ սափոր ոսկի Երկնային մանանային, հոգեւոր երգով զքեզ Արբուժի մեծացուցանեմք:

Սերովլրէ հողեղէն: == Զքեզ երկնային դուռն

զոր ետես Եղեկիէլ, եւ ասրն զոր ծանեաւ Գեղէովն, սերովթէ հողեղէն՝ վեհագոյն քերովթէից, օրհնութեամբ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք :

= Առաքի հրեշտակապետն առ սերովթէն հողեղէն, ասէ՛ Տէրն եւ արարողն առաքեալ 'ի Հօրէ մարմնանայ 'ի քէն Փըրկողն :

= Սերովթէ հողեղէն եւ մարմնաւոր քերովթէ, որ զանտեսն 'ի նոցունց յորովայնի քում կրեցեր, օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք :

**Աէր :** = Ալրոյ անմահ փեսային եղեր դումայր Մարիամ, բարեխօսեա վասն մեր 'ի յայնմ աւուր ահեղին :

**Աիւն լուսոյ :** = Աստուածածին սիւն լուսոյ ամպ հովանաւոր, եւ բնակարան Բանին որ բանիւ հովուէր զիսրայէլ, բարեխօսեա նման վասն անձանց մերոց :

**Աիւն լուսոյ** եւ ամպ հովանի սուրբ կոյս' որ յօվեցեր 'ի մեզ զցօղն երկնային, զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս :

**Աիւն հրեղէն՝ լուսոյն աշտանակ,** որ զարարչականն եղականաց լուսոյ 'ի քեզ տանելով՝ ծագեցեր խաւարելոց :

**Առարբ** եւ Աստուածածին Մարիամ, ցանկալի

կուսից եւ պարծանք ազգի մարդկան, մայր եւ աղախին մեծացուցանեմք :

**Առարբ** զԱստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք : — Աւետաւոր հրեշտակն աւետարանէր զծնեալ Փրկիչն 'ի սրբոյ կուսէն : — Ասէ՛ Աւրախ լեր բերկրեալդ քանզի Տէր տերանց է ընդ քեզ :

**Առարբ կոյս :** = Աստուածածին սուրբ կոյս' անապական տաճար : Տես Աստուածածինն :

= Աստուածածին սուրբ կոյս' անհարսնացեալ Մարիամ : Տես Աստուածածինն :

\* **Առարբ սրբոց :** Ուահ լուսոյ սրբութեան հորդեալ զօրաց անմարմնոց, եւ գունդք հրեզնք զուարթնոց յառաջընթաց յաշխարհ վերնոց, հրճուղական ձայնիւ երգոց գումեն զքեզ սուրբդ սրբոց :

**Ապասաւոր խորհրդոյ անճառելի ծննդեան :** = Այսօր զանճառելի ծննդէւան քո Տէր սպասաւոր խորիրդոյ 'ի հողանիւթ գոյացութեանց փոխաղրեցեր 'ի յերկինս :

**Ապասաւորեալ 'ի հրեշտակաց :** = Հմմին եղեր եկեղեցւոյ խորան եղեր Հոգւոյն սրբոյ . 'ի հրեշտակաց սպասաւորեալ, Գաբրիէլ քեզ աւետեաց, ազգ եւ ազինք զքեզ մեծացուցանեմք :

**Ապասաւորեալ 'ի սերովթէից :** = Տեղափո-

Խեալ զքեղ՝ ի վերնական՝ ի կառս քե-  
րովքականս Աստուածամայր, սպասա-  
ւորեալը՝ ի սերովքէից եւ երկրպագեալդ  
յանմարմնական զօրաց, անդադար երգով  
զքեղ միշտ մեծացուցանեմք:

**Սպասաւորել** անհասութեան խորհրդոյն: ==  
Մայր Քրիստոսի եւ բնակարան Բանին Աս-  
տուծոյ՝ անհասութեան խորհրդոյն սպա-  
սաւորեցեր, միջնորդ եղեր Աստուծոյ եւ  
մարդկան, առ նա միշտ բարեխօսեա վասն  
անձանց մերոց:

**Ստեղծողին** մայր եւ հնութեան կերպի նո-  
րոգողին, քեզ երանիցեն ազգ եւ ազինք  
ամենայն:

**Սրբասնեալ հոգի:** == Այսօր տիրամայր Սըր-  
բուհի կոյսն աւանդեալ զսրբաննեալ հո-  
գին՝ ի ձեռն հրեշտակական դասուցն,  
որպէս գերարփի փայլեալ՝ աշեղիցն նմա-  
նեալ հրեղինաց դասուցն, վասն որոյ հըր-  
ճուղական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի  
սուրբ զնոր զօրհնաբանութիւն:

\* **Սրբութեանց սուրբ:** == Այսօր զնախա-  
մօրն երկանց բարձօղն կուսական ծնըն-  
դեամբ՝ զանհարսնացեալ մայրն Միամինն  
իջեալ փառօք փոխադրեաց յիմանալի եւ  
յանսպատում գերագոյն բնութիւնս, վասն

որոյ սրովքէական ձայնիւ քեզ երգեմք  
սրբութեանց սուրբ զմիշտ փառաբանու-  
թիւն:

**Սրբուհի:** == Որ ՚ի բարձրութիւնս երկնից  
բարձր բանիւք բարեբանիս Սըրուհի, ՚ի  
կիրանանէ գիմեալ հարսն զգեցեալ այսօր,  
զարեգակն արկեալ զքեւ եւ ընդ ոտիւք  
զլուսինն ստուերատեսակ, օրհնութեամբ  
երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տոնեն  
զյիշատակ ծննդեան քո՝ ի մօրէ:

== Այսօր ցնծան երկնայինք եւ պար  
առեալ ՚ի բարձունս՝ երգեն զերգս հոգե-  
ւորս յաւուր ծննդեան Սըրուհւոյն: —  
Այսօր վերինն Սիովն զոչեն զերգս սրով-  
քէիցն՝ զերեքսրբեանն ասելով յաւուր  
ծննդեան Սըրուհւոյն:

**Սրբուհի անարատ:** Տես համեղամաշակ:

**Սրբուհի** եւ մայր Քրիստոսի: == Անարատ  
կոյս Աստուածածին Մարիամ Սըրուհի  
եւ մայր Քրիստոսի՝ յարգանդի տարար  
զանտանելինն ամենեցուն, օրհնութեամբ  
զքեզ Աստուածածին մեծացուցանեմք:

**Սրբուհի** եւ միշտ կոյս: == Ուրախացիք Սըր-  
բուհի եւ միշտ կոյս, քանզի որ ՚ի քէն  
մարմնացաւ՝ զդժոխս աւերեաց. սուրբ եւ  
անհամեմատդ ՚ի կանայս, բարեխօսեա  
առ Տէր վասն անձանց մերոց:

Արքուհի մայր եւ կոյս : = Որ զթագաւորն  
ամենեցուն յորովայնի քում կրեցեր Սըր-  
բուհի մայր եւ կոյս եւ աղախին Քրիս-  
տոսի, բարեխօսեա առ Տէր վասն մերոյ  
փրկութեան :

Արքուհի Մարիամ սափոր ոսկի եւ տապանակ  
կտակարանաց՝ որ զի վերուստ զհացն կե-  
նաց պարզեցեցեր քաղցեալ բնութեանս,  
առ նա միշտ բարեխօսեա վասն քաւու-  
թեան մեղաց մերոց :

Արովբէ հողեղէն : = Զքեղ դուռն երկնից եւ  
ճանապարհ արքայութեան, բարձող անի-  
ծից եւ սրովը հողեղէն մեծացուցանեմք :  
= Անկէզ մորենի եւ սրովը հողեղէն  
սուրբ կոյս, քանզի պտուղն կենաց 'ի  
քէն տուաւ մեզ, զքեղ բարեբանեմք Աս-  
տուածածին կոյս : Տես եւ լեառն վլւմա-  
ծիմ :

Արովբէ նիւթեղէն : Տես Յօղ քաղցրածաւլ :

## Վ

Վայելչապէս ծնար զԱստուած : = Յղացար  
անարտատարար, եւ զԱստուած վայելչա-  
պէս ծնար, ուրախ լեր Աստուածածին՝  
տաճար անխախտելի, զքեղ մեծացուցա-  
նեմք :

Վառարան աստուածային բոցոյն : Տես Ամիկ  
թեթեւ յերկրայիմ ցանկութիւննց :

Վառիւ : = Որ վառեցար 'ի յարփառյն եւ ոչ  
կիզար ըստ մորենւոյն, այլ ետուր զհացն  
կենաց կերակուր բանաւորաց, բարեխօ-  
սեա առ Քրիստոս չնջել զգիր մեղաց  
մերոց :

Վասն որոյ աղաշեա մայր Աստուածոյ Մարիամ  
զՄիածին քո զլրդին՝ զի շնորհեսցէ, ըստ  
աւագակին ժառանդել վերստին մեզ ըզ-  
դրախին վայելչութիւն :

Վեհագոյն սերովբէից եւ բազմաչեայ քերով-  
բէից տիրամայր Աստուածածին, տապա-  
նակ կտակի, սափոր ոսկի, խորհրդաւոր  
խորան Բանին Հօր բարձրելոյ, օրհնու-  
թեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր  
տօնեն զյիշատակ ծննդեան քո 'ի մօրէ :

Վեհագոյն սերովքէիցն եւ բարձրագոյն քերովքէից վերամբարձար՝ ի բարձունս յեղականացս անհպելին, փառաւորեալ ընդ Միածնին հրճուողական ձայնիւ երգոց։  
Վեհագոյն քերովքէից։ Տես Զքեզ երկնային դուռը։

Վերաբերեալ։ Որպէս փայլակն բորբոքեալ յերկնաւորաց վերաբերեալ։  
Ոյսօր զհողեղէն բնութիւնս տեսեալ հրեղինացն սոսկացեալ դասք, մարմին հրանիւթ կառօք յանմարմնոց վերաբերեալ՝ ի յերկնային եւ յանմասոյց լուսեղէն խորանս, վասն որոյ սրովքէական ձայնիւ քեզ երգեմք սրբութեանց սուրբ զմիշտ փառաբանութիւն։

Վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ։ Տես Անթառամ ծաղիկ։

Վերածեալ սքանչելի փառօք։ Տես Մայր անհարսնացեալ։

Վերամբարձար՝ ի բարձունս։ Տես Վեհագոյն սերովքէիցն։

Վերացուցեալ՝ ի լոյսն անստուեր։ Բանն անմարմին որ՝ ի քէն մարմնացաւ եւ՝ ի զիրկս քո բարձեալ կրեցաւ Մարիամ, այսօր եկեալ բազմութեամբ զօրօք հրեշտակացն՝ վերացոյց գքեզ հրակերպ կառօք՝ ի լոյսն անստուեր։

Վերափոխեալ գքեզ՝ ի յերկնային խորանոն այսօր Որդիդ քո Միածին, ուստի եւ դասք առաքելոցն եւ իմաստուն սուրբ կուսանացն միածայնելով գովիչին զքեզ մայր անհարսնացեալ, հոգեւոր երգով զքեզ միշտ մեծացուցանեմք։  
Ոնհասանելի Հոգւոյն զօրութիւնն՝ ուրով փարեեալ համատարած լոյսն զկուսական անձամբն, վերափոխելով յանհպատմելի եւ յանհասանելի եւ յանհանց լոյսն, վասն որոյ բարեբանելով սահմք, օրհնեալ ես Հոգիդ ճշմարիտ Աստուած։  
Տես եւ Քաղաքավարեալ։ — Ծիրանազգեաց։

Վերընկալ աստուածային Բանին։ Ու քեզ ապաւինիմք Ամենասրբուհի, զերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց աղբիւր ես ծարաւեաց, եւ հանդիստ աշխատելոց, եւ եղեր վերնմկալ աստուածային Բանին։

Վերհամբարձեալ։ Տես Քրովք հողեղէմ։  
Որ յանմարմնոց զինուորութեանց եւ՝ ի դասուց հոգեղինաց վերինամբարձար այսօր Աստուածամայր, ուստի եւ դասք հողեղինացն փառաբանեմք զծագով խմանալի լուսոյն զմիշտ կոյսն։

Վերօրհնեալ՝ ի զօրաց հրեշտակաց : == Զքեզ  
Աստուածածին որ վերօրինվիս ՚ի զօրաց  
հրեշտակաց, աղդ մարդկան կենդանեաց  
մեծացուցանեմք :

Վերօրհնեալ՝ ի սրովքէից : == Ուրախացիր  
Աստուածածին վերօրինսեալը՝ ՚ի սրովքէից,  
ծագելով՝ ՚ի քէն մեղ լոյս՝ մայր եղեր վե-  
րաձորլին, աղդ եւ աղինք գքեղ մեծացու-  
ցանեմք :

Վերօրհնեալ յամենայն առաքելական քա-  
րոզութեանցն : == Քերովքէական թեւօք  
պարածածկեցար՝ սրբուհի Աստուածածին  
կոյս եւ մայր եւ բնակարան աստուա-  
ծութեանն, վերօրինեալ յամենայն առա-  
քելական քարոզութեանցն :

Վէմ : == ՚ի լեռնէ վէմն առանց ձեռին հա-  
տեալ՝ Դանիէլ գուշտկեաց զանոերմն  
ծնունդ քո հարսն երկնաւոր, մայր եւ յետ  
ծննդեան մնալով կոյս, վասն որոյ ամե-  
նեքեան զքեղ միշտ մեծացուցանեմք :

Վիճակեալդ : անսանողացն ձայնի : == Յիմա-  
նալի վտակաց տանն Աստուծոյ հոսմանց՝  
վիճակեալը տեսանողացն ձայնի՝ արբ-  
մամբ զմայլեցար, այսօր զանթառամի  
ծաղկեցար զծաղիկ՝ ՚ի ժամու տալով բղ-  
պտուղն, առ որ մաղթեմք բարեխօսել  
վասն մեր անլոելի ձայնիւ :

## S

Տախտակ : == Իմանալի բանաւոր տախտակ  
անտարամադրելի տառիցն մովսիսական օ-  
րինացն, որ զԱստուածն ամենեցուն իսկա-  
պէս մարմնով՝ ՚ի գիրկու քո բարձեր Մա-  
րիամ, ներբողական ձայնիւ եղանակեմք  
քեզ զերգս օրհնութեան ամենօրհնեալդ  
՚ի կանայս :

Տաղաւար արբահամեան աստուածընկալ :  
Տես Տաղաւար ապրեցուցիչ :

Տաղաւար անտանելոյն : Տես Անտանելոյն :

Տաղաւար Հոգւոյն : Տես Լեառն վլմածիմ :

Տաճար անապական Բանին Հօր : == Զտա-  
նար անսպական Բանին Հօր բարերանեն  
դասք հոգեղինացն, գովեմք եւ մեք ձայ-  
նակցելով երկնայնոցն :

Տաճար անարատ : == Անարատ տաճար բնա-  
կարան անբաւ Բանին Աստուծոյ Մարիամ  
սուրբ կոյս, զքեղ եւ զծնեալն ՚ի քէն  
մեծացուցանեմք :

== Անարատ տաճար անվայրափակ Բա-  
նին Աստուծոյ Մարիամ սուրբ կոյս, բա-

բեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան:

= Անարատ տաճար Աստուծոյ Բանին որ զնախամորն Եւայի զանէծան բարձեր անձառելի ծննդեամբն 'ի քէն, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

Տաճար անեղ Բանին: = Լոյս 'ի լուսոյ Հօր ծոցածին իջեր յերկնից յաշխարհ ստորին, դասք ամմարմնոց ընդ քեզ իջին 'ի պատիւ մոր քո եւ կուսին, ներբողեալ զայս ասէին՝ դու եւ տաճար անեղ Բանին:

Տաճար անխախտելի: = Ուրախ լեր Աստուծածին՝ տաճար անխախտելի, զքեզ մեծացուցանեմք:

Տաճար անձնաւոր Աստուծոյ Բանին: = Զանչ հաս տնօրէնութեան մայր եւ զանձնուոր տաճար Աստուծոյ Բանին օրհնութեամբ մեծացուցանեմք:

Տաճար Բանին Աստուծոյ: = Խնդա տաճար Բանին Աստուծոյ, բարձող տրամութեան նախամորն Եւայի, լեր բարեխօս վասն անձանց մերոց:

Տաճար Բանին Հօրն երկնաւորի: = Զքեզ ունիմք բարեխօս կոյս անհարսնացեալ, մայր անարատ էմմանուէլի, տաճար Բանին Հօրն երկնաւորի, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Տաճար երկնաւոր արքային: = Երկնաւոր արքային եղեր տաճար ըստ երգողին, յանկարծակի փեսային 'ի յառագաստ բազմեալ քոյին, բարեխօսեա Միածնին Աստուծածին մայր Բանին:

Տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին: = Մաքուր աղաւնի եւ հարսն երկնից Մարիամ, տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին, քեզ երանեն ամենայն աղինք:

Տաճար եւ առագաստ արարողին երկնի եւ երկրի: = Աքարողին երկնի եւ երկրի եղեր տաճար եւ առագաստ, որ զննեցեալ մեր հրեղէն նորոգէ, զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես 'ի կանայս:

Տաճար եւ առագաստ՝ տեղի անտանելի լուսոյն: = Անոկրնական Բանին Հօր բնական, տաճար եւ առագաստ՝ տեղի անտանելի լուսոյն, զքեզ մեծացուցանեմք արժանապէս երգով աստուծամայր եւ կոյս:

Տաճար եւ քաղաք: = Որ 'ի կանուխ ժամանակաց ստորագրեցեր զսնօրէնութեան քո զաեղի տաճար եւ քաղաք շինեալ, բարձող անուանդ քում բարձրելոյ, այսօր ստուգապէս յայտնեալ ցուցաւ բնակարան աստուծածութեան քո սուրբ կոյսն

Մարիամ, օրհնեալ Տէր Աստուած հարցն  
մերոց :

Տաճար ընդհանուր լուսոյն : == Անկէղ մո-  
րենի եւ տաճար ընդհանուր լուսոյն, ա-  
նարատ եւ անխախտելի կուսութիւն,  
մայր եւ աղախին մեծացուցանեմք :

Տաճար լուսեղէն : == Աստուածածին մայր  
լուսոյ սուրբ կոյս, լուսեղէն տաճար, ո-  
րում երկինք չէին բաւական առ ՚ի բնա-  
կութիւն՝ ՚ի քէն մարմնացաւ :

Տաճար լուսեղէն Աստութոյ Բանին : == Ուրախ  
լեր մայր անձառ լուսոյ Մարիամ սուրբ  
Աստուածածին, քանզի ՚ի քեզ կրեցեր  
զհուր աստուածութեանն՝ լուսեղէն տա-  
ճար Աստութոյ Բանին, առ նա միշտ բա-  
րեխօսեա վասն անձանց մերոց :

Տաճար լուսոյ : == Աստուածածին տաճար  
լուսոյ՝ որ մարմնով պարագրեալ անձառա-  
բար ծնար զբանն Աստուած, զքեզ բա-  
րեխանեալ մեծացուցանեմք :

Տաճար լուսոյ անստուերին եւ առագաստ  
անձառ Բանին՝ որ զնախնոյ մօրն Եւայի  
բարձեր զանէծան տրտմալի, հայցեա  
յնոգոյ քո միածնի Հօր հաշտութեանն  
միջնորդի, բառնալ ՚ի մէնջ զնոռվութիւն  
եւ տալ զոգոց խաղաղութիւն :

Տաճար լուսոյ մայր : Տես Փափկութեամ զրախւ  
տիմ :

Տաճար Հոգւոյն սրբոյ : Տես Տում :

Տաճար մաքրեալ յորում ստեղծողն էից բազ-  
մեալ : == Տէրութիւնք եւ զօրութիւնք,  
իշխանութիւնք եւ պետութիւնք, հրեշտա-  
կապետք եւ հրեշտակք եղանակեն զերգու  
օրհնութեան, օրհնեալ ես կոյս տաճար  
մաքրեալ յորում ստեղծողն էից բազ-  
մեալ :

Տաճար սուրբ : Տես Տամար սքամչելի :

Տաճար սրբութեան անձառ լուսոյն : == Որ  
ընտրեցար ՚ի սկզբանէ անապական կոյս  
Մարիամ լինել տաճար սրբութեան ան-  
ժառ լուսոյն որ ՚ի Հօրէ, առ նա միշտ  
բարեխօսեա կեցուցանել զմեզ :

Տաճար սքամչելի արգարութեամբ : == Երգէ  
մարգարէն՝ սուրբ է տաճար քո սքամչե-  
լի արդարութեամբ եւ գուշն երկնային,  
ուրախ լեր Աստուածածին տաճար ան-  
խախտելի՝ զքեզ մեծացուցանեմք :

Տաճար տնօրէնութեան : Տես Անարատ տա-  
ճար :

Տաճար փառակցի Հօր Հոգւոյն : == Որ զիա-  
ռակցի Հօր Հոգւոյի զտանարն՝ զառ ՚ի  
քէն հովանացեալն այսօր հանգուցեր ՚ի

լոյսն անմատոյց, զքեղ բարեբանեմք Առ  
տուած հարցն մերոց :

Տանել : = Անարատ կոյս Աստուածածին Մա-  
րիամ սրբուհի եւ մայր Քրիստոսի՝ յար-  
դանդի տարար զանտանելին ամենեցուն,  
օրչնութեամբ զքեղ Աստուածածին մե-  
ծացուցանեմք :

= Որ 'ի վեր քան զքերովբէսն երեւե-  
ցար Աստուածածին Մարիամ, տանելով  
յորովայնի զանիմանալի զբնութիւնն, բա-  
րեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկու-  
թեան :

= Ցնծացէք որդիք մարդկան այսօր  
ծննդեամբ սրբուհւոյ կուսին, քանդի որ  
տարաւ զանտանելին յարգանդի անսեր-  
մեապէս՝ այսօր բղխեաց յարմատոյն Յեռ-  
սեայ. տուք օրչնութիւն տուողին մեզ  
զմայրն լուսոյ :

Տապանակ ապրեցուցիչ եւ տաղաւար աբրաւ  
համեան աստուածընկալ, այսօր Մարիամ  
լուսապայծառ միածին ծնունդ յայտնեալ  
ծնողաց՝ 'ի ծնողութիւն քո կոչեցեալ միա-  
ծին Որդի Աստուծոյ, անդադար երգով  
սոքօք զքեղ միշտ մեծացուցանեմք :

Տապանակ աստուածային ուխտի կտակարա-  
նաց : = Որ զխորհուրդ անապական տնօ-

րէնութեանդ քո 'ի սրբոյ կուսէն՝ տպա-  
ւորելով տապանակն աստուածային  
ուխտի կտակարանաց Բանիդ Աստուծոյ,  
փառաց անեղիդ տեղի հանգստեան :

Տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս : =  
Կենդանի տապանակ կտակարանաց նո-  
րոյ ուխտիս, որով եքք յերկիր աւետեաց  
հորդեալ Հոգւով 'ի քեղ տպաւորեալ Բա-  
նին, վասն որոյ ամենեքեան զքեղ միշտ  
մեծացուցանեմք :

Տապանակ կտակի : Ցես Վեհազոյն սերովբէից :

Տապանակ կտակի Բանին : = Փերովբէից  
զերագոյն Եին աթոռ, եւ ծառ կենաց  
անմահական պտղոյն, տապանակ կտա-  
կի Բանին եւ սափոր ոսկի երկնայինն մա-  
նանայինն, հոգեւոր երգով զքեղ Սրբուհի  
մեծացուցանեմք :

Երզափոխեալ զքեղ 'ի վերնական 'ի կառա-  
քերովբէականս Աստուածամայր, սպա-  
սաւորեալդ 'ի սերովբէից եւ երկրպա-  
գեալդ յանմարմնական զօրաց, անդա-  
դար երգով զքեղ միշտ մեծացուցանեմք :

Տեղի անտանելի Բանին, եւ երկիր վայրա-  
փակ յորում լոյսն ագանիցի եւ արեւելք  
արեգականն արգարութեան, անդադար  
ձայնիւ զքեղ բարեբանեմք եւ հոգեւոր  
երգով մեծացուցանեմք :

Տեղի անտանելի լուսոյն։ Տես ծանար եւ առաջաստ։

Տեղի իջման։ = Որ 'ի լերինն Քորեբայ փայլատակեալ հուրդ աստուածային՝ հողմով եւ շարժմամբ յայտնեալ 'ի պակուցումն սուրբ մարգարէին, այսօր գթութեամբ եւ ողորմութեամբ յարմարեցեր տեղի իջման անձառելի խոնարհութեամբ 'ի յօդ հանդարտ զօրինակեալն Մարիամ, օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

Տեղի հանգստեան փառաց անեղին։ Տես ծառամակ աստուածային։

Տեղի անօրէնութեան։ Տես ծանար եւ քաղաք։

Տենչալի։ = Յնծալից բերկրանօք եւ յորդահոս արտասուօք եղանակէին քաղցր երդօք երեքօրեայ խմբեալ պարօք, Բարդողիմէ յետոյ եկեալ եւ զտենչալն իւրոշ տեսեալ։

Տեսանեմք զսուկալի զհրաշալի խորհուրդ յայտնեալ, 'ի Հոգւոյն որբոյ յղացեալ՝ զիանն Աստուած մարմնով ծնար, ազդ եւ աղինք զքեզ մեծացուցանեմք։

Տեսին դասք իմանալի զօրութեանց զԱստուած մարմնով առ 'ի քէն ծնեալ, իսկ Եկեղեցի որդւոյ քո Աստուածածին զքեզ խոստովանի, որ միայն կուսութեամբ ես մայր։

Տէրունի։ = Այսօր ընդ բաղմաշեայ քրոկ-բէսն եւ ընդ վեցթեւեան սրովբէսն մըտանելով յեօթնաստեղեան խորանան, տեսսանելով զանազան աթոռսն զոր պատրաստեալ է քեզ տէրունւոյդ, երգեմք եւ մեք ասելով, օրհնեալ ես ամենօրհնեալդ 'ի կանայս։

Տիրամայր Աստուածածին։ Տես Վեհագոյն սերովմէից։

Տիրամայր սրբուհի կոյս։ = Այսօր տիրամայր սրբուհի կոյմն աւանդեալ զորբասանեալ հոգին 'ի ձեռն հրեշտակական դասուցն, որպէս զերարփի փայլեալ՝ ահեղիցն նմանեալ հրեղինաց գասուցն, վասն որոյ հրճուղական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն։

Տիրուհի անարատ մայր Տեառն եւ կոյս Մարիամ, քրովբէական աթոռ զքեզ տեսաք 'ի յերկրի, բարեկիսսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։

Տիրուհի։ = Այսօր ծերքն օրինականք մանկամբք նորոյ Ախովնի, երիտասարդք եւ կուսանք խնդեամբ Տիրուհին։

Տղայանալ։ Տես Ծնանել։

Տղայապէս։ Տես Կաթն։

Տումար անձառ անքնին։ = Ընտրեալ յա-

ուաջ քան զհիմունս 'ի սկզբանէ աշխարհի, տումար անճառ անընլին եւ ամպթեթեւ լուսածին, բարեխօսեա Միածնին Աստուածածին մայր Բանին:

**§ուն** եւ տաճար Հոգւոյն սրբոյ: == Մարգարիտ լուսափայլ, Հոգւոյն սրբոյ տուն եւ տաճար, մարգարէից բանք նախաճառ այսօր լցան 'ի քեզ գումար, Մովաչո դասուքն իւրովք խոպառ 'ի պատիւ քո անդ ոլանայր:

**§ուն** տնօրէնութեան: == Լեառն վիմածին, աղբեւր յօրդառատ, բարունակ ծաղկեալ, այգի վայելուշ, սրովրէ հողեղէն, բարունոյ Բոնին տուն տնօրէնութեան, տաղաւար Հոգւոյն, առ ծնեալն 'ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ շնորհել զթողութիւն մեր ննչեցելոցն:

## 8

Յանկալի զուարթնոց: **Տես** Յօլ քաղցրածաւալ:

Յանկալի կուսից: == Աուրբ եւ Աստուածածին Մարիամ՝ յանկալի կուսից եւ պար-

ժանկ ազգի մարդկան, մայր եւ աղախին մեծացուցանեմք:

**Յաւագին** մայր Տեառն:

Յնծա եւ զուարձացիր հարսն 'ի յերկրէ երկնից, քանզի այսօր երկնայնոցն ինեալ տայլին քեզ զաւեաիս յարութեան միածնի Որդւոյ քո. զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

Յնծա իմանալի արեւելք, քանզի քեւ ծագեաց մեզ լյոյ երեսաց Քրիստոս, լեր բարեխօս վասն անձանց մերոց:

Յնծա Մարիամ արեգականն արդարութեան արեւելք, եւ աղաչեա զառ 'ի քէն ծընեալն Աստուած վասն մեր՝ զի դարձուցց վերսափին զմեզ 'ի գրախաին ժառանգութիւն:

**Յօլ:** == Աստուածածին ամպ լուսաւոր՝ որ զցօլն կենաց հեղիքը յերկիր բանաւոր, եւ զնախամօրն վիջուցիր պարտեացն զհուր, անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք, եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

== Ամոլ թեթեւ յերկրային ցանկութեանց սուրբ կոյս եւ վառարան աստուածային բոցոյն, որ զցօլն հայրաբուզիս անձեւեցեր 'ի բանական երկիր՝ որով բնութեանս բուսան արդարութեան սուրբ

բոյսք, վասն որոյ օրհնաբանեմք դքեղ յաւուր քո ծննդեան:

= Աիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս՝ որ ցողեցեր ՚ի մեզ զցօղն երկնային, դքեղ բարեբանեմք Աստուածածին կոյս:

Յօդ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն, նիւթեղէն սրովքէ, գեղ մարգարտափայլ, հիմն եկեղեցւոյ, մաքուր աղաւնի, ամպ հովանաւոր, սուրբ կայս Մարիամ, առ ծնեալն ՚ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն:

Յօդէր արտօսր ցաւագին մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին, յորժամ լոէր զծարաւին բարբառելոյ իւր Միածնին. ետուն քացախ խառնեալ լեզի այնմ որ բղխեաց գետ յաղենի, եւ ՚ի վիմէն վտակ բարի արբոյց տոհմին գառնացողի:

## Փ

Փայլեալ: = Այսօր տիրամայր սրբուհի կոյսն աւանդեալ զսրբասնեալ հոգին ՚ի ձեռն հրեշտակական դասուցն, որպէս գերարփի

փայլեալ՝ ահեղիցն նմանեալ հրեղինաց դասուցն, վասն որոյ հրճուողական ձայնիւ քեղ երգէ եկեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն:

= Նորասքանչ անդ հրաշից ներակերտեալ ՚ի յերկրի, քանզի պայծառ քան զարփի փայլեալ սրույ կուսին հոգի, զոր զարհուրեալ Պետրոսի զծէր հարցանէր զիսորհուրդն յայտնի: — Շնորհազարդ փառաք փայլեալ սրպէս զմայր քո միշտ գովեալ, ՚ի մարդկանէ ող քատակեալ՝ հոգւով պայծառ արփւոյ նմանեալ, որպէս փայլակն բորբքեալ յերկնաւորաց վերաբերեալ:

Փառաբանեալ: = Որ ՚ի վեցթեւեան սրովքէից եւ ՚ի բազմաչեայ քրովքէից փառաբանիս երգով Աստուածածին, ընդուր եւ մեք համաձայնեալ բարեբանեմք զծագող իմանալի լուսոյն զմիշտ կոյսն:

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատո զաղաշանս մեր Որդւոյ քո եւ Առտուծոյ մերոյ:

Փառաւորեալ ընդ Միածնին: = Վեհագոյն սերովքէիցն եւ բարձրագոյն քերովքէից, վերամբարձար ՚ի բարձունս յեղականացն

անհպելին, փառաւորեալ ընդ Միածնին  
հրճուողական ձայնիւ երգոց :

Փոխկութեան զրախտին բացող բանալի,  
Քրիստոսի բարձող, նմանող երկնից, սա-  
փոր ոսկեղէն լի մանանայիւ, գաւազան  
ծաղկեալ յարմատոյն Յեսուայ, տաճար  
լուսոյ մայր, առ ծնեալն՝ ի քէն միշտ բա-  
րեխօսեա անդադար Հայցմամբ շնորհել  
զթողութիւն մեր ննչեցելոցն :

Փոխադրեալ՝ ի լոյսն անստուեր : = Լոյսն  
անքնին ծածկեալ՝ ի ծոց Հօր որ ծագե-  
ցաւ՝ ի քէն մայր եւ կոյս, այսօր ինեալ  
անմարմնական դասուք հրեղինացն՝ փո-  
խադրեաց զքեզ լուսափայլ ամպովք՝ ի  
լոյսն անստուեր :

Փոխադրեալ յերկնային խորանան : = Որ  
էակիցդ ես Հօր եւ սուրբ Հոգւոյն՝ մար-  
մնանալ՝ ի յանձն առեր՝ ի սրբոյ կուսէն,  
այսօր փոխադրեալ դասեցեր յերկնային  
խորանան զքոյին ծնողն, զոր միշտ ու-  
նիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած  
հարցն մերոց :

Փոխադրեալ յերկնայինան : = Այսօր զա-  
գատին յանցանաց նախամօրն զկուսու-  
թեանց մայրն փոխադրեաց Բանն Աս-  
տուած, յերկնայինան դասելով յաստուա-

ժակերտ խորանան եւ յանպատում՝ ի  
կեանս, վասն որոյ հրճուողական ձայնիւ  
քեզ երգէ եկեղեցի սուրբ զնոր զօրհնա-  
բանութիւն :

Փոխադրեալ յիմանալի եւ յանպատում գե-  
րագոյն բնութիւնն : = Այսօր զնախա-  
մօրն երկանց բարձողն կուսական ծնըն-  
գեամբ զանհարսնացեալ մայրն՝ Միածնին  
ինեալ փառօք փոխադրեաց յիմանալի  
եւ յանպատում գերագոյն բնութիւնն,  
վասն որոյ սրովլբէական ձայնիւ քեզ եր-  
գեմբ սրբութեանց սուրբ զմիշտ փառա-  
բանութիւն :

Փոխումն կուսին յերուսաղէմ քաղաքն վե-  
րին : = Այսօր եւ մանկունք Եկեղեցւոյ  
ուրախութեամբ տօնեն յերկրի զիոնիումն  
կուսին յերուսաղէմ քաղաքն վերին :

Փոխումն միշտ կուսին : = Ճառագայթ Հօր  
ծոցածին, յորժամ եկեր առ Հայր յերկինս,  
խոստանայիր բանիւ քոյին՝ ի կատարումն  
Աստուածածնին՝ քեզ միայնոյ զօրօք քոյին  
դալ՝ ի փոխումն միշտ կուսին :

= Որ՝ ի կուսական դասակցութեանց եւ  
'ի սրբոց նզնաւորաց փառաբանիս Աըր-  
բուհի, ուստի եւ մեք հաւատացեալքս  
վերապատուեմք զփոխումն քո՝ ի յեր-

կինս, որ առաւել բարձրացեալդ եւ յաւ-  
փուեան: = Որ մահուամբ քով կեցուցեր զմեղ, եւ  
յարուցեալ համբարձար առ Հայը՝ ի յեր-  
կինս, այսօր երկնաւոր զօրօք իջեր ՚ի  
փոխումն մօր քո եւ կուսի, հայցմամբ  
ծագողին լուսոյդ եւ մեղ ողորմեա: 163  
Փութացիր յօգնութիւն սուրբ Աստուածա-  
ծին, եւ աղաչեա զառ ՚ի քէն զմարմնա-  
ցեալ Բանն Աստուած՝ զի յահաւոր եւ ՚ի  
միւսանգամ զալսանեանն իւրոյ պարզե-  
ւեցէ մեղ զկեանս յաւիսենից: =  
Փրկօղ կենդանութեան ազգի մարդկան: =  
Զքեզ կոյս եւ մայր եւ բնակարան առ-  
սուածային ներմարդութեանն գոհաբա-  
նեմք եւ վերօրհնեմք զեղեալ փրկօղ կեն-  
դանութեան ազգի մարդկան, վասն որոյ  
զքեզ Աստուածածին եւ կոյս բարեբա-  
նեմք զմայր եւ զաղախին փրկչին մերոյ:

## ¶

Քաղաք: §ես Տամար եւ քաղաք:  
Քաղաքավարեալ ՚ի մարմնի անարատ վա-  
րուք: §ես Բարեխօս խոստովանողաց:

Քաղցրացուցիչ դառնանաշակ պտղոյն: §ես  
Ամրոցակէզ մորեմի: =  
Քան զարեգակն պայծառագոյն Մարիամ: =  
Որ քան զարեգակն պայծառագոյն Մա-  
րիամ, մի գաղարեր բարեխօսել վասն  
մեր, Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ:  
Քան զերկինս բարձրագոյն: §ես Ամենազո-  
վելի: =  
Քաւիչ մեղաց: = Անիծից լուծիչ եւ քաւիչ  
մեղաց սուրբ կոյս՝ որ զանտանելին յէցից  
՚ի գիրկս քո բարձեր, զքեզ բարեբանեմք  
Աստուածածին կոյս: =  
Քեզ միայնոյ մարմնացելոյդ ՚ի սուրբ կուսէն  
օրհնութիւն ՚ի բարձունս վերերգեմք ա-  
սելով, փառք քեզ Քրիստոս որ եկիր կա-  
մաւ Հօր կեցուցանել զմեղ: — Խնդա  
Մարիամ որ եղեր մայր Քրիստոսի, եւ  
աղաչեա զառ ՚ի քէն զմարմնացեալ Բանն  
Աստուած, զի փրկեացէ զմեղ ՚ի փորձու-  
թենէ: =  
Քեզ միայնոյ մօր եւ կուսի մաղթեմք հայ-  
ցելով ՚ի քէն, բարեխօսեա անդագար առ  
Որդիկ քո եւ Աստուած մեր՝ գրիկել զմեղ  
՚ի փորձութենէ եւ յամենայն վտանգից  
մերոց:

Քերովքական աթոռ արարչին մերոյ տնօ-  
սութիւն առաջ առ արարչին մերոյ տնօ-

թէնութեան : == Ամէնօրհնեալ աստուածամայր Մարիամ , քերովըէական ամոռարազին մերոյ տնօրինութեան , զոր երանեն ամենայն աղինք հանապազ :

Քերովըէական աթոռ ցուցար Աստուածածին՝  
 'ի գիրկս բառնալով զԱստուածն ամենեցուն որ նստին 'ի քերովըէս , առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ :

Քերովըէական թեւօք պարածածկեցար՝ սըրբուհի Աստուածածին կոյս եւ մայր եւ բնակարան աստուածութեանն , վերօրհնեալ յամենայն առաքելական քարողութեանցն :

Քերովըէից գերագոյն էլին աթոռ , եւ ծառ կենաց անմահական պտղոյն , տապանակ կտակի Բանին եւ սափոր ոսկի երկնային մանանային , հոգեւոր երգով զքեղ Սըրբուհի մեծացուցանեմք :

Քերովըէ հողեղին : == Այսօր զանտանելի Բանիդ բարձողն զքերովըէն հողեղին բարձրացուցեր , 'ի ստորնայնոցս գերակայիցն կայսան :

Քերովըէ մարմնաւոր : == Սերովըէ հողեղին եւ մարմնաւոր քերովըէ , որ զանտեսն 'ի նոցունց՝ յորովայնի քում կրեցեր , օրհնութեամբ զքեղ բարեբանեալ մեծացուցանեմք :

Քեւ բացաւ սրովըէափակ դուռն դրախտին :  
 Տես Քեւ տուաւ :

Քեւ լուծան կնիք գատապարտութեան : Տես  
 Քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրն զլորեալ մասն որոյ զքեղ Աստուածածին եւ կոյս , անդադար երգով մեծացուցանեմք :

Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղինքս :  
 Տես Քեւ մերձեցար 'ի փայտն կենաց :

Քեւ մերձեցաք 'ի փայտն կենաց : == Քեւ  
 հաճեցան իմանալիքն ընդ հողեղինքս , եւ  
 քեւ մերձեցաք 'ի փայտն կենաց , քեղ  
 երանեն ամենայն աղինք :

Քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան : ==  
 Քեւ բացաւ սրովըէափակ դուռն դրախտին , եւ քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան , զոր 'ի նմա զենեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց , հոգեւոր երգով զքեղ Սրբուհի մեծացուցանեմք :

Քրիստոսի բարձող : Տես Փափկութեան զրախւալին :

Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ : == Ի քեզ  
 եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստու-

## Օ

Օգնական եւ շնորհ աշխարհի : = Ուրախացի Աստուծածին՝ որ կուսութեանց ես պարծանք եւ մայր Հաստատութեան մարդկան, օգնական եւ շնորհ աշխարհի, Մարիսմ մայր եւ աղախին փրկչին մերոյ :

Օթարան Սրեգական : = Ուրախ լեր մայր լուսոյ Մարիսմ, երկիր բանաւոր՝ Արեգականն օթարան, լեր բարեխօս վասն անձանց մերոց :

Օթարան լուսածին : = Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին, զանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր յերկորդին, բարձր բարեբանեցէք զՆոգին ճշմարիտ, բարձր արարէք զնա յաւիտեան :

= Որ 'ի քրոնլբէական աթոռ նստիս ընդ Հօր եւ սուրբ Հոգոյն, հաճեցար բառնի մարմնով՝ 'ի գերկոս կուսին եւ կաթնասուն եղեր. այսօր քրոնլբէիւք վերհամբարձեր եղեր. յաթոռ փառաց զիոնլելին քրոնլբէն. աղաշանօք մօր քո ողորմեա մեզ Որդի Աստուծոյ :

Օրհնաբանեալ կոյս : Տես Կոյս օրհնաբանեալ :  
Օրհնաբանեալ Տիրուհի : = Որ 'ի դասուց մարգարէից եւ յերշանիկ առաքելոցն օրինաբանեալ Տիրուհին, զլուծիչ երկանցն եւայի զմայրն կենաց ծնեալն այսօր 'ի յԱննայէ, բարձր արարէք զՃնեալն այսօր զմայր մաքուր Բանին զմիշտ կոյսն :

Օրհնեալդ 'ի կանայս : = Ի տեսիլ հրաշխց  
փառաց Միածնին զուարձացան դասք ա-  
ռափելոցն , եւ ընդ վերին զուարթունն  
համաձայնեալ՝ նոր օրհնութիւն քեզ ե-  
ղանակէին օրինեալդ 'ի կանայս :

Օրհնեալ ես ամենօրհնեալդ 'ի կանայս : Տես  
Ամենօրինեալդ 'ի կանայս :

Օրհնեալ ես կյոս տաճար մաքրեալ : = Տե-  
րութիւնք եւ զօրութիւնք , իշխանութիւնք  
եւ պետութիւնք , հրեշտակապետք եւ  
հրեշտակք եղանակեն զերգս օրհնութեան ,  
օրինեալ ես կոյս տաճար մաքրեալ յո-  
րում սաեղծողն էից բազմեալ :

Օրհնեալ ես սուրբ Աստուածածին : = Աե-  
րովրէից գունդք հիսցեալ յորժամ տեսին  
զծէրն իջեալ 'ի փոխումն Աստուածա-  
ծնին անապական եւ միշտ կուսին , զար-  
հուրեալ զայս ասէին , օրինեալ ես սուրբ  
Աստուածածին :

Օրհնեալ է պտուղ որովայնի քո : = Ուրախ  
լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ , օրհնեալ ես  
դու 'ի կանայս , եւ օրինեալ է պտուղ  
որովայնի քո :

Օրհնեցէք : = Զծնեալն յամենասուրբ յորո-  
վայնէ՝ յանարատ 'ի կուսէն՝ օրինեցէք  
եւ բարձր արարէք զնա յաւիտեան :

Օրհնութիւն 'ի բարձունա սնօրինեցելոյն 'ի  
կուսէն թագաւորին մերոյ , ալէլուիա ա-  
լէլուիա : — Օրհնութիւն 'ի բարձունա ան-  
սասանելի եւ հաստատուն յուսոյն մերոյ ,  
ալէլուիա ալէլուիա : — Օրհնութիւն 'ի  
բարձունա անբաժանելի եւ միասնական  
սուրբ երրորդութեանն , ալէլուիա ալէ-  
լուիա :

Գոհութիւն եւ փառաբանութիւնն մատու-  
ցանեմ քեզ , Տիրամայր , զի առաջնորդեցէք  
ինձ մինչեւ 'ի կատարումն զրութեանս , եւ  
ուրախ եմ թէ աւարտեմ զայդ յԱլէլուիա :  
Սակայն զիսրիդ ուրախութիւնն մեր լցեալ  
եղիցի՝ եթէ ոչ արժանի արասցես զմեզ եր-  
եղիցի՝ զայն յերկնից արքայութեան : Այդ լիցի  
պել զայն յերկնից արքայութեան : Այդ լիցի  
պսակ ողորմութեան մայրագութ սրտիդ  
Ավրեցուցիչ Աստուածածին : « Յանզի ըստ սի-  
րեցէլոյդ Աւգոստինոսի՝ « Յայնժամ եղիցի

ՎԵՐ Զ Ա. Բ Ա. Ն

ՆԱԽԸ ԹԱՅ ՏՊԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ՓՆ Զ Ի Ս

Ի բաշխից փոքրիկ փնջի ծաղկանցս պա-  
զատանօք հայցեմ՝ ի մայրագութ սրտէդ ընդ  
հայաստանեց:

« Աստուածածին անհարսնացեալ  
եւ կոյս սուրբ, բարեխօսեա առ Որդիդ քո  
Միածնիդ, յաջակողմեան,  
գործամ բազմիս լուսոյ նըման  
Քո Միածնիդ յաջակողմեան,  
Յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն  
Փըրկել ըզմեղ յահեղ բոցոյն.  
Համադասիլ ընդ արդարոցն  
Երգել ըզիառս ընդ երկնայնոց » :

Ալէլուիա արդեամբք, իսկ այժմ յուսով: Յոյ-  
սըն երգէ զայն, եւ սէրն այժմ զնոյն երգէ.  
սէրն երգեցի եւ յայնժամ. սակայն այժմ  
քաղցեալ, յայնժամ յագեալ » : (Ճառ. 255):  
Զի որպէս նոյն երանելի Հայրապետն աւար-  
տէ զգիրս յաղագս Քաղաքին Աստուծոյ.  
« Անդ պարապիցիմք եւ տեսանիցեմք, տես-  
ցուք առ ՚ի սիրել, սիրեցուք առ ՚ի յօրհ-  
նել: Աւանիկ որ լինելոց է ՚ի վախճանի ան-  
վախճանաբար. զի ո՞ր այլ է վախճան մեր՝  
բայց ժամանել յարքայութիւն, որոյ չիք  
վախճան » :

Ուստի պաղատանօք հայցեմք ՚ի մայրա-  
գութ սրտէդ ընդ Հայաստանեայց Եկեղեցւոյ:


« Աստուածածին անհարսնացեալ  
Յերկրէ երկնից հարսն ընծայեալ,  
Յորժամ բազմիս լուսոյ նըման  
Քո Միածնիդ յաջակողմեան,  
Յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն  
Փըրկել ըզմեղ յահեղ բոցոյն.  
Համադասիլ ընդ արդարոցն  
Երգել ըզիառս ընդ երկնայնոց » :


Ե Խ Ե Խ Ս

« Աղաչեա վասն մեր զառ 'ի քէն զմար-  
մնացեալն Աստուած, զի միաբանեսցէ զնկե-  
ղեցի իւր սուրբ՝ շինեալ 'ի վերայ հիման  
առաքելոց եւ մարդարէից, պահել անարատ  
մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ, աղա-  
չեմք :

Մայր սուրբ, բարեխօսեա » :









5

1793

«Ազգային գրադարան



NL0028635

AL 40